13347

342
Q-11

342
Ա-11

ԱՆԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ VI ԳՈՒՄԱՐՄԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ՍՏԵՆՈԳՐԱՖԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՀԱՄԱՌՈՏ)

2010

Ե 200 1

Ա. Ֆ. Միասնիկյանի անվան տպարան, հրատ. «Զարյա Վոստոկա»
Պատվեր 470 Գլավլիտ 343 Քանակ 500

43283 ատ.
27611-63

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

Յերեկոյան, 1932 թ. հունվարի 25-ին

Նախագահում է ընկ. Ֆ. Մախարաձեն

Նախագահ. Ընկերնե՛ր, Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի այս նստաշրջանը գումարվում է վորոշ ուշացումով: Նախագահությունը չեր ուզում ընդհատել տեղական աշխատավորների սոցիալիստական չինարարության այն չափազանց մեծ աշխատանքը, վորն այժմ տարվում է մեզանում: Անդրկենտգործկոմի նախագահությունն այդ ժամանակ չարունակում եր իր աշխատանքը: Բացի իր սովորական աշխատանքից, նախագահությունը զբաղվում եր, գլխավորապես, պետական, տնտեսական, կոոպերատիվ և մեր այլ ապարատների կատարելագործման հարցերով:

Ընկերնե՛ր, դուք գիտեք, վոր մենք բավականաչափ ամրացրել ենք մեր խորհրդային ապարատը, համարեցնելով նրան սոցիալիզմի շինարարության խնդիրներին: Այնուամենայնիվ, մեզ մոտ, տեղերում վորոշ ողակներում գործը դեռ ևս այնքան էլ բարեհաջող վիճակի մեջ չէ:

Անդրկենտգործկոմի նախագահությունը անցյալ տարվա գարնանը հրավիրեց Անդրկոմկասի քաղաքային խորհուրդների ներկայացուցիչների խորհրդակցություն և այս խորհրդակցությունը տվեց իր ողուտը: Բացի այդ, անցյալ տարվա աշնանը Անդրկենտգործկոմի նախագահության վորոշումով կատարվեց գյուղխորհուրդների ստուգատեսը: Յեթե մեր մարմիններն ունեն վորոշ թերություններ, այդ, ամենից առաջ, պետք է ասել ցավելով, վերաբերում է մեր գյուղխորհուրդներին: Գյուղխորհուրդների ստուգատեսը ունեցավ չափազանց կարևոր հետևանքներ: Այս ստուգատեսը ընդգրկել է յերեք հանրապետությունների գյուղխորհուրդների մոտավորապես 4-րդ կամ 5-րդ մասը: Ստուգատեսը հայտնաբերեց, վոր տեղ տեղ մենք ունենք որինակելի գյուղխորհուրդներ:

Բայց միաժամանակ ստուգատեսն յերևան և հանել գյուղխորհուրդների աշխատանքի մեջ չափազանց մեծ թերություններ: Մենք այժմ կարող ենք տալ անհրաժեշտ գործնական ցուցմունքներ, թե ի՞նչ պետք է անել, վորպեսզի բարելավված լինի գյուղխորհուրդների աշխատանքը:

Այս մասին խոսում եմ նրա համար, որ դա կարևորագույն աշխատանքներից մեկն է, որը անց է կացրել Անդրկենտրոգոմի նախագահությունը:

Ներկա նստաշրջանը գումարվում է չափազանց պատասխանատու ժամանակ: Մենք յերրորդ վճռական տարվանից անցնում ենք առաջին հնգամյակի ավարտական տարուն:

Ձեզ քաջ հայտնի յե, թե ինչպես մենք դուրս յեկանք այս վճռական տարվանից:

Ի՞նչ առաջադրանքներ ունենք այս ավարտական, հնգամյակի վճռական տարվա համար:

Այս առաջադրանքների մասին տեղյակ պիտի լինել յուրաքանչյուր բանվոր ու գյուղացի: Մեր ժողովրդական տնտեսության տեմպերն անորինակելի յեն մարդկության պատմության մեջ: Մխիթարյան պրոլետարիատի գլխավորության ժամանակ, հենց երեկոյան աշխատավորների ակտիվ մասնակցությամբ, կարելի յեր առաջ գնալ այնպիսի արագությամբ, ինչպես մենք ենք առաջ գնում:

Մեր հակառակորդներն անդամ խոստովանում են, որ Խորհրդային Միությունը արդյունաբերության նկատմամբ առաջ է անցել Գերմանիայից, Անգլիայից և այժմ, Ամերիկայից հետո բռնում է յերկրորդ տեղը:

Բայց այդ չի նշանակում, որ մեր աշխատանքները մենք հեշտ ենք ձեռք բերում, այդ չի նշանակում, որ մենք չունենք դժվարություններ:

Ընկերնե՛ր, մեր դժվարությունները կապված են մեր աճի հետ: Բոլորովին այլ է գործը բուրժուական յերկրներում: Վոչ վոք չի կարող ասել, որ այնտեղ բարգավաճություն է տիրում: Ահա յերրորդ տարին է, ինչ այնտեղ արդյունաբերական արտադրության կրիզիսը մեծանում ու մեծանում է:

Բուրժուական աշխարհում, Ճեվրոպայի և Ամերիկայի բոլոր յերկրներում, զարգանում ու աճում է հեղափոխական չարժումը:

Այլ կերպ չեր կարող լինել: Արտաքուստ այնտեղ կարծես թե տիրում է բարգավաճություն, բայց բուրժուական հասարակությանը հատուկ գործերի դրությունը չատ վատ է:

Այնտեղ այժմ ամեն ինչ տատանվում է, հողը խախտվում է կապիտալիստների վոտների տակից: Այսպիսի պայմաններում բուրժուազիան յելք է փնտրում և այդ յելքը գտնում է նոր իմպերիալիստական պատերազմի մեջ:

Այս պատերազմին նրանք անընդհատ պատրաստվում են, բայց այդ պատերազմը լինելու յե բուրժուական աշխարհի վախճանի սկիզբը:

Ընկերնե՛ր, ամբողջ աշխարհին հայտնի յե, որ մեր քաղաքականությունը խաղաղության քաղաքականություն է: Վերջին ժամանակներս բուրժուական պետությունները մի քանի անգամ փորձել են մեզ պատերազմի մեջ գցել, բայց այդ նրանց չի հաջողվել: Բոլորիդ լավ հայտնի յե, թե ինչ է կատարվում այժմ Հեռավոր Արևելքում: Բոլորի համար պարզ է, որ այնտեղ ինչ վոր պատրաստվում է Խորհրդային Միության դեմ, որ վոչ միայն Ճապոնիան է դավադրություն սարքում Խորհրդային Միության դեմ, այլ այս գործին մասնակից են և ուրիշ պետություններ: Այսպես կոչված յեվրոպական մեծ պետությունները աչքները փակում են Ճապոնիայի արարքի հանդեպ: Նույնպիսի քաղաքականություն է վարում և Ազգերի Լիգան: Իհարկե մենք պետք է պատրաստ լինենք: Մենք վոչ մի դեպքում առիթ չենք տալ հարձակվելու մեզ վրա: Ամենքը պետք է լավ իմանան, որ մենք չենք ուզում գրավել ուրիշի տերիտորիան, բայց յեթե ցանկանան գրավել մեր տերիտորիայի մի մասը, ուր ել նա լինի, մենք վոչ վոքի չենք պիղծանիլ խորհրդային յերկրի մի թիզն անգամ: Խորհուրդների պաշտպանության համար ամենից առաջ կանգնած է մեր քաջարի, հեղափոխական կարմիր բանակը, բայց կարմիր բանակի կողքին կանգնելու յենք մենք բոլորս, մինչև վերջին բանվորը, կոլտնտեսը, և պաշտպանելու յենք մեր խորհրդային տերիտորիայի ամեն մի թիզը:

Ընկերնե՛ր, այժմ մեր առաջ, Անդրկոմկուսում, հարց է դրված արդյունաբերության պլաններն իրագործելու հետ միասին, նաև արմատացնել տեխնիկական մշակույթները:

Այդ հեշտ խնդիր չե, բայց մենք պարզեն պիտի ենք այդ խնդիրը լուծելու: Տեխնիկական մշակույթների մեջ առաջին տեղն է բռնում բամբակը: Այս տարի մենք չատ չենք ընդարձակում բամբակի տարածությունը, բայց մենք ձգտելու յենք ավելի լավ մշակելու, ավելի լավ վորակի բամբակ ստանալու: Հատուկ մշակույթներից մեզ մոտ առաջին հերթին և դրված թեյի մշակույթը: Մենք պարտականություն ենք վերցրել յերկրորդ հնգամյակի վերջին բավարարել մեր ամբողջ Միության թեյի կարիքը:

Կարևորագույն խնդիր է համարտանում, մանավանդ մեր գյուղի համար, գյուղական տնտեսության կոլեկտիվացումը: Ժամանակ է արդեն, որ մենք սովորենք կառուցել կոլտնտեսություններ, ժամանակ է վերացնել այն սխալները, որ մենք ունեցել ենք այս ասպարիզում: Դրա համար մենք արդեն ունենք փորձ և որ մենք այդ կարող ենք անել, ցույց է տալիս այն, որ մենք մեր բոլոր հանրապետություններում ունենք գեղեցիկ, որինակելի կոլտնտեսություններ: Բայց միաժամանակ գյուղությունն ունեն վատ կազմակերպված կոլտնտեսություններ: Դրանն պետք է վերջ տալ:

Այս ներածական նկատողություններից հետո թույլ տվեք Անդրկենտրոգոմի VI գումարման յերկրորդ նստաշրջանը հայտարարել բացված: (Ծափահարություններ: Նվագախումբը կատարում է «Ինտերնացիոնալ»):

Այս շրջանում մենք կորցրել ենք խորհրդային տնտեսության համար պայքարում, մի քանի ընկերներ—այդ ընկերներն են Վանո Ստեփանան, Գուսև Հայիքը և Ասրիելը: Կրնդրում եմ հարգել նրանց հիշատակը վոտի կանգնելով (նվագախումբը կատարում է մահվան քայլերգ):

Ընկերնե՛ր, որակարգը հայտարարված է և բոլորիդ հայտնի: Ընկ-

Համիդ Սուլթանովը որակարժի առաջարկություն ունի։

Սուլթանով։ Որակարդում իբրև յերկրորդ հարց դրված է խորհրդային շինարարության խնդիրների և խորհրդային վարչ ապարատի ամրապնդման մասին զեկուցումը։ Վոլովհետև այս հարցը չափազանց ընդարձակ հարց է և նրա քննարկությունը պահանջում է ավելի շատ ժամանակ, քան մենք կարող ենք նվիրել նրան այս նստաշրջանում, նախագահությունը վճռել է այս հարցը քննարկել հատուկ լայն խորհրդակցության մեջ, քաղխորհուրդների, շրջանային գործադիր կոմիտեների և գյուղխորհուրդների ներկայացուցիչների մասնակցությամբ։

Նախագահ։ Կա առաջարկություն—խորհրդային շինարարության մասին հարցը հանել նստաշրջանի որակարգից։ Ովքեր այս առաջարկության կողմնակից են, խնդրում եմ ձեռք բարձրացնեն։ (Միաձայն ընդունվում է)։

Այժմ մենք անցնում ենք որակարգում դրված հարցերին։ Որակարգում դրված առաջին հարցն է ԱՍՖԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ընկեր Մուսաբեկովի զեկուցումը «ԱՍՖԽՀ ժողովրդական տնտեսության 1932 թ. կոնտրոլային թվերի մասին»։ Խոսք ունի ընկեր Մուսաբեկովը։

Մուսաբեկով։ Ընկերնե՛ր, Անդրկենտրոգոմի նախագահությունը հանձնարարել է ինձ զեկուցում ներկայացնել «ԱՍՖԽՀ ժողովրդական տնտեսության 1932 թ. կոնտրոլային թվերի մասին»։

Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների մեր Միությունը, այս թվում և Անդրֆեդերացիան, որը նրա անխզելի օրգանական մասն է, դարդացնում է իր հաղթական սոցիալիստական շինարարությունը վոչ թե մեկուսացած, այլ վորոշ միջազգային պայմաններում, շրջապատված կապիտալիստական աշխարհով։ Այս պատճառով հատկանշ հեռանքրքիր և համեմատության համար գիտենալ թե՛ մեր Խորհրդային Միության, թե մեղ շրջապատող կապիտալիստական յերկրների տնտեսական դարդացման մի քանի խոռոդները։

Յեթե մենք քննելու լինենք կապիտալիստական յերկրների դարդացումը վերջին յերեք տարվա ընթացքում, մենք կտեսնենք, վոր ապատեղ ապրում և արդյունաբերական խորը ճգնաժամ։

Այժմյան ճգնաժամը ծավալվում է ընդհանուր ճգնաժամի, կապիտալի նեխվածության ֆոնի վրա, վորն առհասարակ բնորոշ է իմպերիալիզմի դարաշրջանի համար, մանավանդ յետպատերազմյան ժամանակներում, «յերբ կապիտալիզմը չի նվաճում համաշխարհային տնտեսության միակ և համատարած սիստեմ» (Ստալին), վորովհետև կապիտալիստական սիստեմի հետ միասին յերկրագնդի վրա գոյություն ունի և զարդանում է մի այլ, բոլորովին հակադիր սիստեմ — սոցիալիստական սիստեմը։

«Այսորվա ճգնաժամի սրությունը, վորը քայքայում է կապիտալիզմի հետնադարյան ընդհանուր ճգնաժամը, նրանում է, վոր ճգնաժամը ընդգրկում է ոչ միայն հետամնաց, նախապատերազմյան կապիտալիստական յերկրները, այլև այնպիսի յերկրներ, վորոնք ներկայացնում են կապիտալիզմի նոր տեխնիկան, նոր տեխնոլոգիան, նոր ամենաբարձր տիպի ռացիոնալիզացիան, նոր ամենաբարձր տիպի կապիտալիստական կազմակերպությունը։ Ճգնաժամը ընդգրկում է ոչ միայն հին, ավելի թույլ կապիտալիստական յերկրները, այլև ամենամեծ, ամենահարուստ կապիտալիստական յերկրները, ինչպես Ամերիկան, Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, Ճապոնիան և այլն։

Ճգնաժամը ուղեկցվում է կապիտալիստական յերկրների արտադրական ուժերի ահագին ավերածությամբ, ֆաբրիկաների, գործարանների, հանքերի, ածխահանքերի, նավթահանքերի, տրանսպորտի, գյուղատնտեսության ահագին ավերածությամբ։ Ճգնաժամը ուղեկցվում է արտադրության կրճատմամբ, ապրանքների ահագին քանակների ոչնչացմամբ, ապրանքների ահագին քանակների ստիպողական

դժվարությունները և առաջ և բերել սոցիալիստական վերակառուցում չեղած թափով և տեմպով և հենց դրանով ապահովել և Խորհրդային Միության բանվորական դասակարգի և բոլոր աշխատավորների նյութական-կուլտուրական մակերևույթի բացառիկ վերելքը: Իսկ այս հանգամանքը, ընկերնե՛ր, չի կարող առաջ չբերել կատաղի թշնամություն համաշխարհային կապիտալի կողմից:

ԽՍՀՄ դեմ պայքարի սրումը տվյալ եռապում հայտնաբերվում է մի շարք հակախորհրդային կամպանիաներում, որոնք ունեն միջպետական դավադրության ձև և նպատակ ունեն պատրաստելու ինտերվենցիա մեր Խորհրդային Միության դեմ. «Պրոմպարտիայի» և «Միության ենական բյուրոյի»՝ սոցիալ-ֆաշիզմի ռուսական այս գործակալության հակահեղափոխական գործունեության հայտնաբերումը ցույց և տալիս պարզապես, թե ինչպես միջպետական բուրժուազիան մեր յերկրի ներսում գործող հակահեղափոխության ներքին ուժերի հետ միասին, կամզակերպում է պայքարի միասնական ճակատ Խորհրդային Միության դեմ: Այսպես կոչված «Խորհրդային դեմպինգի մասին» տապալված կամպանիան կապիտալիստները ուզում եյին հատուցել կրպակատիրության, իբր թե մենք կբարուում ենք «ստիպողական աշխատանք», որը մեզ հնարավորություն և տալիս վաճառել ավելի եժան ղնեով, քան այդ տեղի ունի կապիտալիստական յերկրներում. «ստիպողական», հարկադիր աշխատանքի կիրառման մասին ազդարարող սուտի բնությունը պարզ է ինքն յուր ինքյան մի յերկրում, ուրտեղ աշխատանքը պատնում է սխրագործության, հերոսության և պատվի գործ:

Բոլորովին ակներև է, ընկերնե՛ր, որ կապիտալիստական յերկրներում տնտեսական ճգնաժամի ե՛լ ավելի խորացման և մեզ մոտ սոցիալիզմի աճի հետևանքով յերկրու սխեմեի պայքարն անխուսափելիորեն ավելի կ սրանալու:

Պայքարելու համար աճող հեղափոխական վերելքի դեմ, փրկելու համար խորասուզվող կապիտալիզմը, միացել են պրոլետարիատի բոլոր թշնամիները, սկսած Վելս-Գիտլերից մինչև Ուրքհարտ-Բրաուներ-Զեվերինգը:

Սոցիալ-դեմոկրատները պացիֆիստական իլյուզիաներ են տարածում պրոլետարիատի մեջ, ծածկելու համար իմպերիալիզմի հակախորհրդային ագրեսիվ գործունեությունը, բանվորի թիկունքում մասնակցում են ինտերվենցիայի պատրաստմանը և հանդիսանում են Խորհրդային Միության ներսը իմպերիալիստների մտարար գործակալություն:

«Ձերկրորդ ինտերնացիոնալը դառել և համաշխարհային իմպերիալիզմի մարտական ջոկատ, որը պատերազմ և պատրաստում ԽՍՀՄ դեմ»,— ահա այն բնորոշումը, որ ավել և իկկի XI պլենումը իր վճիռներում: կասած չկա, որ այժմ, ինչպես յերբեք, ել ավելի սրացել և պայքարն աշխարհի վերաբաժանման համար, աճել և իմպերիալիստական պատերազմի վտանգը: Իմպերիալիստների բանակում տեղի ունեցող հակասությունների աճը և սրումը ել ավելի յեն սրում և ուժեղացնում պատերազմի վտանգը: Այս բանի որինակ կարող ե ծառայել Թեկուզ Մանջուրիայում տեղի ունեցող վերջին դեպքերը: Բայց մենք հաստատ համոզված ենք, որ հիմորացող կրիզիսի և կապիտալիստական յերկրներում ավելի ու ավելի աճող անկայունության պայմաններում, յերբ միաժամանակ տեղի յ ունենում ԽՍՀ Միության տնտեսական և քաղաքական հզորության աճը, գիտ ված հարձակումը ԽՍՀ Միության դրա նշանակում ե գլխավոր վտանգ նրանց համար, որոնք կհամարձակվեն խախտել խաղաղությունը և կհարձակվեն Խորհրդային Միության վրա» (Խորհուրդների 6-րդ համագումարի բանաձևերից):

Խորհրդային Միության դեմ ինտերվենցիայի և պատերազմի պատրաստմանը մենք հակադրում ենք խաղաղության մեր քաղաքականությունը:

«Խաղաղությունն ուժերի կոտորակման միջոց ե»,— բազմիցս ասում եր Լենինը: Մեր Խորհրդային Միությունը խաղաղության կարիք ունի չարունակելու համար սոցիալիզմի ծավալվող հարձակումը ամբողջ ֆրոնտով, հնգամյակը չորս տարում ավարտելու և սոցիալիստական հասարակություն կառուցելու համար»: «Խաղաղության այս քաղաքականությունը,— ասում ե ընկ. Ստալինը,— մենք վարելու յենք և հետագայում մեր ամբողջ ուժերով և միջոցներով: Ընկերնե՛ր, մինչև այսոր ձեզ հաջողվել ե առաջն առնել ամեն տեսակ ընդվաած ընդհարումների, մխիթարել խաղաղության հետևողական քաղաքականության չնորհիվ, միայն չնորհիվ այն բանի, որ մենք հաճախ և բացարձակ կերպով յուրյ ենք տվել մեր պատրաստակամությունը զենքով պաշտպանել համաշխարհային պրոլետարիատ սոցիալիստական հայրենիքի սահմանները: Բոլորդ հիշում եր մեր Կարմրադրոշ Հեռավոր Արևելյան բանակի մարտական պատրաստակամությունը:

Ընկերնե՛ր, մենք բոլորին պատասխանում ենք և պատասխանելու յենք՝ «մենք չենք ուզում մի թիզ հաշի ոտարի հող, բայց և մեր յերկրի վոչ մի վերշոկ չենք տալու վոչ վոքին»: (Ստալին):

Մեր յերկրում յեռում է ստեղծագործական աշխատանքը, տեղի յ ունենում սոցիալիզմի հսկայական չինարարությունը, դրանով մենք ամբացրել ենք վոչ միայն մեր ներքին, այլև արտաքին դիրքերը:

Մեր նպատակն է ամրացնել բնդհանուր խաղաղության գործը, ապահովել բանվոր դասակարգի հաղթանակը: Յեթե մեզ վրա հարձակվելու լինեն, յեթե խանգարելու յեն մեզ խաղաղ կերպով կառուցել սոցիալիզմը, թող լավ հիշեն բոլորը, որ դիմաց ընդհարումների վճռական ժամին, մեր փառահեղ կարմրադրոշ Բանակը, որ ծնվել է Հոկտեմբերի մրրկալից օրերին, որն ամրապնդվել և մեվել է քաղաքացիական պատերազմների հնոցում, դլխավոր չտարի—ՀԿ (բ)Կ կկ դեկավարությամբ, պրոլետարիատի ամենասիրելի առաջնորդի՝ ընկ. Ստալինի դեկավարությամբ, բոլոր բանվորական դասակարգի, կոլտնտեսականների և Խորհրդային Միության աշխատավորների հետ կապացուցի, որ նա կարող է վոչ միայն պաշտպանել բոլոր աշխատավորների սոցիալիստական հայրենիքի սահման-

Նեբը, այլ և պատվով կը կրե Լենինի դրոշը դեպի մեծ համաշխարհային պրոլետարական Հեղափոխության հաղթանակը: (Ծափահարություններ և «Ինտերնացիոնալ»):

Այժմ թույլ տվեք անցնելու դեկուցմանն անմիջական թեմային — սոցիալիզմի կառուցմանը մեզ մոտ, 3-րդ վճռական տարվա խոդնեերին և այն խնդիրներին, որը դրված են մեր առաջ Հեղամյակի 1932 թ. ամարտական տարում:

Ընկերնե՛ր, թեև չի պռնվիլ այժմ վաչ մի գրագետ, դիտակից բանվոր, կոլտնտես և աշխատավոր, որ այն հարցին, թե որն է Հեղամյակի չորրորդ ամարտական տարվա հիմնական խնդիրը, չպատասխաներ, որ այդ խնդիրն է — ամարտել Հեղամյակը չորս տարում. դա նշանակում է մեր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի սոցիալիստական տեխնիկական վերակազմության ել ավելի ծավալումը սոցիալիստական եկոնոմիկայի արդեն ամրապնդած հիմքի վրա:

Այս պատճառով մենք պետք է պահովենք 1932 թ. Խորհրդային Միության — համաշխարհային պրոլետարիատի այս հարվածային բրիգադի, տնտեսական անկախության համար ծավալած պայքարը՝ մետաղարդյունաբերության, ածուխի արդյունաբերության, մեքենաշինարության մաքսիմալ զարգացումը և տրանսպորտի բարձրացման ամենավճռական տեմպերը. առաջելադուշն չափերով չափազանցել Հեղամյակի դնենք 1932 թ. ամարտելու համար ծրագրած նոր գործարանները և գեհերը. առաջ բերենք թեթև ինդուստրիայի հետագա աճը և բարելավենք խորհրդ. առևտրի մատակարարումը և ծավալումը. վճռական տեղաշարժներ առաջ բերենք աշխատավորների նյութական կենցաղային ուղիով, և՛ ավելի ծավալենք բնակարանային և կոմունալ ու վուլտուրական շինարարությունը, ծավալուն պայքար մղենք զինվի. Ստալինի պատմական վեց ցուցմունքների լիակատար իրագործման համար, վճռական բարձրացնենք արտադրանքի որակն և որակական ցուցանիշները:

Բացի այս ընդհանուր խնդիրներից մեր առաջ կանգնած են հատուկ խնդիրներ, որը բղխում են Հկ(բ)կ կկ 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումից:

Այսպիսի խոշորագույն խնդիրները դնելու հնարավորությունը Հեղամյակի ամարտական տարում հետևանք է սոցիալիստական շինարարության նախընթաց տարիների հաղթանակների և նվաճումների:

Այն պատմական խնդիրը, որը դրել եր Լենինը—«ո՞վ ո՞ւմ», մեր երկրի ներսում կատարելապես լուծվել է սոցիալիզմի ոգտին: Արդյունաբերության, ամբողջ Խորհրդային Միության մեջ դյուղացիական տնտեսության 60% ավելի տնտեսությունների կոլեկտիվացմանն անցնելու ամարեղում ձեռք բերած հսկայական աջողությունները, որը միաժամանակ աճում է սոցիալիստական արդյունաբերությունը, վերջնականապես լուծել են մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի հարցը:

Ժողովրդական տնտեսության մի շարք խոշորագույն և վճռական ճյուղերում Հեղամյա պլանը մենք իրագործել ենք 3 և նույնիսկ 2½ տարում (նավթի արդյունաբերությունը, էլեկտրոտեխնիկական արդյունաբերությունը, տրակտորշինարարությունը, մեքենաշինարարությունն և այլն):

Կապիտալ շինարարության մեջ նախատեսված եր 5 տարում դնել 13,5 միլիարդ ռուբ., միայն 4-րդ տարվա ընթացքում դրվում է 20,3 միլիարդ ռուբ.: (Հաշվի առնելով արդյունաբերության վոչ ամբողջ շրջանը): Արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները կրկնապատկվել են Հնգամյակի պլանի ենթադրությունների համեմատ: Հնգամյակի 3 տարվա ընթացքում արդյունաբերության մեջ դրված է փաստորեն 16 միլիարդ ռուբ., իսկ 1932 թ. ծախսվելու է ելի 10,7 միլիարդ ռ., ընդամենը չորս տարում ծախսվելու է 26,7 միլիարդ ռուբլի:

Ցեխե մենք դիմենք պյուղական տնտեսության, այս բնագավառում ել սոցիալիստական Հնգամյակի առաջին երեք տարիներում մենք ունեցել ենք խոշորագույն նվաճումներ: Այսպես, արհնակ, հացահատիկային մշակություններին ցանքսի տարածությունները 1931 թ. կազմել են 137,5 մլ. հեկտար Հնգամյակի վերջին տարում 141 մլ. հեկտարի թվի դիմաց: Տեխնիկական մշակությունների նկատմամբ Հնգամյակը ամբողջ Միության մեջ դերակատարված է 33 տոկ.:

Տրանսպորտի նկատմամբ Հնգամյակը դերակատարված է արդեն 1931 թ.: Բեռնաշրջանառությունը հասել է 250 միլիոն տոննի Հնգամյակի վերջին տարում 210 միլիոն տոննի դիմաց:

Ցեխե տարվա ընթացքում պետբյուջեի ծախսը հասավ 48 միլիարդ ռուբ.: Նշանավոր չափով բարելավվել է Խորհրդային Միության բանվոր գյուղացիական խմբավորումների նյութական-կուլտուրական վիճակը:

Վոչ պակաս նվաճումներ սոցիալիզմի շինարարության նկատմամբ մենք ունենք մեզ մոտ, Անդրֆեդերացիայում, Խորհրդային Միության այս որգանական անբաժանելի մասում:

Ընկերնե՛ր, ամուր կերտով անցկացնելով կուսակցության գլխավոր գիծը, ամուր կերտով իրագործելով Լենինյան ազգային քաղաքականությունը, առաջ քաշելով նախկին ցարական գաղութների յեռանկյաց ռայոններըը կենտրոնի առաջավոր շրջանների չարքը, ամենաառհասկ պայքար մղելով ամեն տեսակ ոպորտունիստների, ազգամոլության, հակուսակցական խմբավորումների, մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի արտահայտությունների դեմ, ուղղելով Հկ(բ)կ Անդրկենտկոմի և ազգ. կոմկուսակցության հին դեկավարության որով թույլ տրված բոլոր քաղաքական սխալները, Անդրֆեդերացիայի և ամբողջ Խորհրդային Միության բանվոր գյուղացիական մասսաները դաստիարակելով և աշխատավորների յեղբայրական միությամբ մենք պատվով կկրագործենք սոցիալիստական շինարարության Հնգամյա պլանը:

Ցես կբերեմ ամենակարճ և ընդհանուր տվյալները, որոնք ցույց են տալիս Անդրֆեդերացիայի նվաճումները և տնտեսական աճը Հնգամյակի կրորդ վճռական տարում:

Անդրբեյերացիայի ընդհանուր ժողովրդական տնտեսության մեջ 1931 թ. ներդրված է 583,7 միլ. ռուբ. 1930 թ. 437,7 միլ. ռուբ. դիմաց, այսինքն 33,4 տոկոսով ավելի: Համայնացրած սեկտորը արտադրանքի է տվել 39,2 տոկոսով 1930 թվից ավելի:

ԱՍՖՍՀ արդյունաբերության հիմնական ֆոնդերը 313 միլիոն ռուբ. 1929 թ. ավելացել են մինչև 544 միլ. ռուբ. 1931 թ., սույն թվում ցածր ինդուստրիայի նկատմամբ — մինչև 463 միլ. և թեթև ինդուստրիայի նկատմամբ — 80 միլ.:

ԱՍՖՍՀ ժողովրդական չեկամուտը Անդրբեյերացիայի նախնական հաշիվներով 1931 թ. կազմել է 1·735 միլ. ռուբ. 1926—27 թ. գներով, տարվա ավելացում 24,5 տոկ. 1930 թ. համեմատությամբ: Էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը 1931 թ. հասցրած է 161 հազ. կիլովատ 148 հազար կիլովատի դիմաց 1930 թ.: Համապատասխան չափով ավելացել է էլեկտրաէներգիայի քանակությունը՝ 729 միլ. կիլո. 634 մլն. կիլո ժամի դիմաց:

Ժողովրդական տնտեսության բոլոր այլ ճյուղերի նկատմամբ, գյուղատնտեսության, տրանսպորտի, կուլտուրական շինարարության, կոոպերացիայի նկատմամբ և այլն մենք ունենք խոշորագույն նվաճումներ:

Ցավ ուղում եմ չոչափել այն ճեղքվածքները և թերությունները, որ մենք ունեցել ենք մեր պլանի իրագործման պրոցեսում: Այս թերությունները մենք պետք է նշենք, որովհետև հաշվի առնենք ապագայում, սոցիալիստական հնդամյակի ամարտական տարում: Ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերի պլանները մենք թերագնահատել ենք: Չենք իրագործել պլանները, քարածուխային արդյունաբերությունը, — 48,5 տոկ., պղնձինը — 64,8, ցեմենտինը — 54,2, միներալ – հանքայինը — 34,7 և կաշվինը — 65,9:

Շինարարական ծրագիրը իրագործված է միմիայն 78,2 տոկոս., էլեկտրիֆիկացիայի, ժողովրդական տնտեսության այս կարևորագույն ճյուղի ծրագիրն իրագործված է 58,6 տոկ., գյուղական տնտեսությանը— 79,3 տոկ. և բնակարանաշինարարությանը — 60,6 տոկ.:

Աշխատանքի արտադրողականությունը ԺԳՏՄ արդյունաբերության մեջ բարձրացել է միջին թվով տարեկան 5,6 տոկ., վոխանակ պլանով նախատեսված 25 տոկ.: Ինքնարժեքը իջել է 1 տոկ. վոխանակ պլանով նախատեսված 7 տոկ.:

Գյուղական տնտեսության վարկական գուցանիշները՝ բերքատվությունը և արտադրողականությունը նույնպես թերագնահատված են:

Տեղի ունեն ճեղքված քներ սոցիալ–կուլտուրական շինարարության բնագավառում: 1931 թ. հանձնաժողովները պահանջում են, որ մենք կենտրոնացնենք մեր աշխատանքը տնտեսական և կազմակերպական աշխատանքի կարևորագույն մասերի վրա՝ վառելիքի, էներգետիկայի, մետաղի, տրանսպորտի, էլեկտրիֆիկացիայի վրա և այլն, որոնց յուրաքանչյուրի հնդամյակի 1932 ամարտական առաջին հիմնական խնդիրն է հանդիսանում:

Ժողովրդական տնտեսության 1932 թվի կոնտրոլային թվերը մեր էլեկտրիֆիկացիայի տնտեսական և կուլտուրական շինարարության միասնական տարեկան ոլերատիվ պլանն է: ԱՍՖՍՀ ժողովրդական տնտեսության 1932 թ. կոնտրոլային թվերում, որոնք կազմված են ՀԿ(բ)Կ ԿԿ հոկտեմբերի 31-ի և Անդրկենտկոմի 1931 թ. դեկտեմբերի վորոշումների հիման վրա, տրված է աշխատանքի ծավալուն կոնկրետ պլան այն մասին, թե ինչ պետք է անենք հնդամյակի այս վերջին տարեկան տարում:

Մեզ մոտ, Անդրկովկասում, ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղն է հանդիսանում էլեկտրաշինարարությունը, իրրև մեր էլեկտրիֆիկացիայի տեխնիկա-տնտեսական ռեկոնստրուկցիայի առաջատար որղակ: Վ. Ի. Լենինը էլեկտրիֆիկացիայի սոցիալական բովանդակությունը արտահայտել է հայտնի ֆորմուլայով՝ «Կոմունիզմն է՝ խորհրդային իշխանություն պլյուս ամբողջ էլեկտրիֆիկացիան»:

Էլեկտրիֆիկացիան հանդիսանում է առաջատար որղակ ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակազմության համար: Էլեկտրիֆիկացիայի վճռական նշանակությունը մեր էլեկտրիֆիկացիայի համար Լենինն ընդգծել է ամենակատեգորիկ կերպով և նշել է, որ չեթե լինելու է «էլեկտրիֆիկացիա 10–20 տարուց հետո, մեզ համար բոլորովին տարօրինակ չեն մանր հողագործի ինդիվիդուալիզմը և տեղական չբնդհատության մեջ ապրող առևտուրը: Ցեթե չի լինելու էլեկտրիֆիկացիա, մենք ոչ և անխուսափելի չի դեպի կապիտալիզմի վերադարձը» (4-րդ լենինյան ժողովածու, էջ. 374): Դուք տեսնում եք, ինչ չափազանց մեծ նշանակություն էր տալիս Լենինը էլեկտրիֆիկացիայի հարցին: Ամենին հայտնի չի, որ էլեկտրաէներգիայի, մանավանդ չբնդհատային կայանների ժամանակ էլեկտրաէներգիայի ածին առած և բերում արդյունաբերական արտադրության տեխնոլոգիական պրոցեսների արմատական վերակազմություն: Մեզ մոտ ԱՍՖՍՀ այս բազայի վրա հիմնվում են նոր արտադրություններ՝ ֆերրո-մարգանեց հալելու գործարան Զեստաֆոնում (Վրաստան), ալյումինի և բարձր վորակի պողպատի գործարան Գյանջայում (Ադրբեջան), էլեկտրաքիմիայի—Հայաստանում: Անդրկովկասը էլեկտրիֆիկացիայի բազայի վրա պետք է դառնա զարգացած արդյունաբերության շրջան, դունավոր մետաղների արտադրության շրջան, բարձր վորակի պողպատի արտադրության շրջան, էլեկտրաքիմիայի շրջան, ածան հիդրոէլեկտրաէներգիայի խոշորագույն շրջան:

Բայց ինչպե՞ս է այժմ դրությունը Անդրկովկասյան Ֆեդերացիայի էլեկտրիֆիկացիայի բնագավառում: Դուք ամենքդ լավ գիտեք, վոր չնայելով էլեկտրաշինարարության բարձր տեմպերին, եներգետիկական բազայի այժմյան դրությունը խիստ ցած է մնացել ժողովրդական տնտեսության ընդհանուր աճից և հիմնականում չի կարողանում այլևս բավարարել մեր սոցշինարարության կարիքները: Չնայելով, վոր Անդրկովկասյան էլեքտրակայանների ուժը 120 հազ. կիլո-

վաճից 1927 – 28 թ. ավելացել է մինչև 161 հազ. վիլոմետր 1931 թ., Անդրկովկասի ենթգետնեկական բանանոց յարված դրության մեջ է և տեղ – տեղ նույնիսկ ճգնաժամի չի հասել, մանավանդ Ադրբեջանում նոր հիդրոստորիալ կենտրոնում, Գյանջա քաղաքում: Գյանջայում և նրա շրջանում, իբրև ապագա խոշորագույն արդյունաբերական կենտրոնում, եղեկտրոենեռգիայի իսկական սով է: Նույն իսկ ագրիդրոցենտրալի գործի դնելը հազիվ է ծածկելու Գյանջայի եղեկտրոենեռգիայի կարիքի կեսը: Այսպիսի խիստ ստամոնացության կարող է կանխելնել ժողովրդական տնտեսության կոնտրագույն ճյուղերի ծավալումը (յերկաթ, ալյումին, ծծմբի հրաքար, բաքիտ և այլն) Գյանջայի շրջանում: Այս յետաձնացությունը բացատրվում է, իհարկե, նրանով, որ եղեքտրաշինարարության հնդամյակը մենք իրագործել ենք միայն 60,2 տոկոսով:

Այս տեսակետից, ընկերնե՛ր, մենք պետք է ուղղակի ասենք, որ խստատոկ կերպով յետ ենք մնացել: Մանավանդ այս հանդիմանությունը վերաբերում է Ադրբեջանին, որը մինչև այսօր չի կառուցել մի ուժեղ շրջանային հիդրոեղեկտրական կայան, չնայելով որ դրա համար նա ունեցել է բոլոր հնարավորությունները: Այս բոլորը պետք է անպատման, չոտոպ կերպով ծածկել: Ադրբեջանը պետք է անհապաղ ձեռնամուխ լինի չինելու հինգ այս տարի մի հիդրոեղեքտրոկայան: Ջնայելով, որ այս մասին ցուցմունքներ են յեղել թե ՀԿ(բ)Կ կկ, թե Անդրյերկոմի կողմից: Դժբախտաբար այս հարցի մասին տեղի յեն ունեցել վոչ վոքի համար կարևորության չունեցող վեճեր: Այդ պատճառով պետք է վճռական կերպով հարվածատալ վոչ ըուրջ արտամադրությունների, վորոնք վիճաբանության առարկա յեն չինել Ադրբեջանում հիդրոկայանների չինարարության վարիանտների և տեղի հարցը: Անհապաղ պետք է դիմել Ագհիդրոցենտրալի չինարարությանը՝ պատրաստի նախագծի համաձայն, այն է՝ Ղարասաղկալի հիդրոկայանի նախագծի համաձայն:

Վրաստանում այս տարի մենք սկսել յենք Մրամի կարգավորող հիդրոցենտրալի կառուցումը, վորն ունենալու յե 70.000 կիլո կարողություն և Սամգորու հիդրոցենտրալի Թիֆլիսի մոտ, վորն ունենալու յե 30 հազ. կիլ: Աբխազիայում Տկվարչելու ածխահանքի կարիքների համար – Տկվարչելու ջերմեցենտրալ 40 հազ. կիլո: Հայաստանում կառուցվելու յե կախե – Գյումիշի 1 հերթի հիդրոցենտրալ, վորն ունենալու յե 60 հազար կիլո:

Ընդհանրապես տարում եղեքտրաշինարարության մեջ մենք մտնում ենք 57,1 միլ. ռուբ.*), վորից նոր շինարարության համար 10,5 միլ. ռ. վոխադրության մեջենների և դիտական – հետազոտական աշխատանքների համար 7 միլ. ռուբ. և 29 միլ. ռ. գործադրվում և կառուցվող եղեքտրակայանների – Ռիոնդեսի, յերկրորդ հերթի Զադեսի և այլ կայանների շարունակության և ավարտման համար. Հայաստանում – Զորագեսի, Քանաքեռագեսի համար և այլն:

Այսպիսով այս եղեքտրակայանների չահագործմանն անցնելուց հետո, մենք ավելացնելու յենք մեր եղեկտրահաստատությունների մինչև 293,8 հազ. կիլո, վորը վորոշ չափով թեթևացնե-

*) Սույն թվում ռայոնական կայանների համար:

լու յե ենթգետյի ճգնաժամը, բայց բոլորովին չի վերացնելու:

Մենք պետք է ընդարձակենք ամենից առաջ ծանր ինդուստրիան, այն է՝ նավթի արդյունաբերությունը, քարածխային մետաղագործությունը, մանգանանկրի հինարարությունը և այլն:

Ծանր ինդուստրիան սոցիալիզմի ամենագլխավոր առանցքներից մեկն է, վորը դարձնում է և արդեն դարձրել է դյուրը դեպի սոցիալիզմը, վորը մեր Մորհրդային Միության, նեղառյալ և Անդրկովկասը, ազգարարին յերկրից դարձնում է ինդուստրիալ – ագրարային խոշոր յերկիր, իսկ մոտիկ ապագայում ամբողջ աշխարհի առաջադայում ամբողջ աշխարհի առաջադեմ դյուղատնտեսական արտադրական յերկիր:

ԱՍՅԽՀ ամբողջ արդյունաբերության 1932 թ. կապիտալներդրումները ընդհանուր գումարը վորոշված է 386,8 միլ. ռ. անցյալ տարվա 258 միլ. դիմաց: Նավթի արդյունաբերությունը առանում է 172 միլ. ռ., վորը հիմնականում ծախվելու յե այնպիսի աշխատանքների վրա, վոր ապահովելու յեն թե նավթի արդյունաբերությունը, թե նավթի արտադրանքների վերամշակումը:

Ագնեֆտի արտադրական ծրագիրը 1932 թ. ընդունված է 15,8 միլիոն տոնն հում նավթի չափով:

Սակայն, ընկերնե՛ր, յենթադրություններ կան, կան բոլոր հիմքերը, վոր այս թիվը կավելանա: Ընթացիկ տարում հատուկ ուշադրություն պետք է նվիրվի ամբողջ նավթարդյունաբերության աշխատանքի վերսկսուցմանը ՀԿ(բ)Կ կկ ցուցմունքների և Ա.Կ(բ)Կ կկ և ՌԿ վորոշումների համաձայն:

Կապիտալներդրումների առանձնահատուկ գիծը այս տարի կայանում է նրանում, վոր անպայման անցնենք նոր նավթային շրջանների արդյունաբերական չահագործմանը թե Ադրբեջանում, թե Վրաստանում:

Ադրբեջանում մենք ունենք մի չարք նոր խոշորագույն ու շատ հարուստ նավթային շրջաններ, վորոնք սպասում են չահագործման: Նրանցից մի քանիսն արդեն չահագործվում են, ինչպես արմենակ Փուռթայի, Մանդիկյարդի և Շամախու շրջանները, այլ շրջաններում կատարվում են հետախուզություններ, բայց յեկրաբանական հետախուզական աշխատանքները մինչև այժմ բավական չափով չեն տարվել: Բացի այդ, մեզ մոտ, Վրաստանում, գոյություն ունեն չափազանց հարուստ նավթային հանքատեղեր Շիրակում և Գուրիայում:

Ինչպես արձանագրված եր ՀԿ(բ)Կ կկ 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ, Գրուզնեվթը չի կարողացել աշխատանքը ծավալել լրին մասչտաբով: Այս բացը պետք է անպատման ծածկենք 1932 թ.: Աշխատանքները պետք է ծավալվեն բոլոր ուղղություններով, վորպեսզի այս տարի սկսենք նավթի արդյունաբերական չահագործումը: Կապիտալ ծախքերի համար այս տարի մենք նախագծել ենք առաջ 12 միլիոն ռ.: Գրուզնեվթին արդեն 1932 թ. պետք է տա առնվազն 14 և կես հազար տոնն նավթ:

ԱՍՅԽՀ ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն է ածուխը: Այս արդյունաբերության զարգացման համար մենք բաց ենք թողնում 16,9 միլիոն ռուբ., վորով ապահովելու յե Տկվիբելու հանքահորերի կառուցյալ վերակազմու-

թյունը 300 հազ. տոննն ընդհանուր կարողությամբ և Տկվարչելում նոր հանքահորերի շնարարությունը 1 մլրդ. տոննի չափ: Ընթացիկ տարում Տրկվարչելու քարածխային հանքերին տրվելու է 15,1 մլրդ. ռուբ, վորը պետք է ապահովի Տկվարչելտորգի շինարարության տեմպերի արագացումը և յերաշխավորի ՍՍՖՍՀ ածխի արդյունաբերությունն այն չափով, վոր ապահովված լինի Գյանջայում հիմնվող մետաղագործական գործարանի կարիքները:

Անդրկովկասի պայմաններում գոլության ունեն բոլոր ռեսուրսները յերկաթի, պղնձի, ցինկի, ալյումինի և այլ կապարագույն մետաղների արդյունաբերությունը. 1932 թ. սկիզբ և դրվում Անդրկովկասյան Ֆեդերացիայում մետաղագործության զարգացմանը: Այս տարի չհագագործման և անցնում Ֆերրոմարգանեցի գործարանը Զեստաֆոնում 50 հազար տոննն կարողությամբ: Գործարանի շենքի ավարտման համար բաց է թողնվում 5 տ. կես մլրդ. ռուբ.: Այս տարի դիմում ենք նախապատրաստական աշխատանքների, կառուցելու Դաշքեսանի մետաղարդյունաբերական գործարանի շինությանը Գյանջայի շրջանում մեկ միլիոն տոննն կարողությամբ, առաջին հերթին մոտավորապես – 600–650 տոննն: Այս գործարանն աշխատելու է գլխավորապես բուռն զարգացող նավթային արդյունաբերության (Ապշերոն և Գրոզնեվի) կարիքները բավարարելու համար:

Վճռական չրջադարձ այս տարի մեզ մոտ պետք է կատարվի գունավոր մետաղագործության բնագավառում: Գունավոր մետաղների կարիքի աճը և ներմուծման լուծարքի անհրաժեշտությունը Անդրկովկասյան Ֆեդերացիայի առաջ խնդիրը են դնում արագացնելու գունավոր մետաղագործության՝ ալյումինի, պղնձի, ցինկի, արճճի և այլնի զարգացման տեմպերը:

Հայաստանի՝ Ալլահվերդու և Ղափանի պղինձ հալող գործարանների ընդարձակման և վերակազմության համար, նրանց արդյունաբերությունն ընդարձակելու համար այս տարի մենք հատկացնում ենք 14 մլրդ. ռուբ: Այս տարի Անդրկովկասը պետք է տա առնվազն 6000 տոննն պղինձ:

Հետևյալ կարևորագույն պրոբլեմը, վորն ունի խոշոր, համամիութենական նշանակություն, դա Ադրբեջանում, Գյանջայի շրջանում, ալյումինի արդյունաբերության զարգացումն է, ալունիտի Զագլիկի հանքատեղերի բազայի վրա:

Այս բազայի վրա պետք է կառուցվի կոմբինատ, վոր մշակելու է ալյումինի և պոդլեղիկի ցեմենտ, մեկուսացման նյութ բազմի նավթահորերի համար: Այս նյութին այժմ ներմուծվում է Ֆրանսիայից: Այս տարի մենք կառուցում ենք փորձնական գործարան այն հաշվով, վոր արդեն 1932 թ. սկսենք կառուցել կոմբինատը. մինչև այդ, պետք է պատրաստված լինի ելեկտրաէներգիատնական բազան:

Անդրկովկասի համար կարևորագույն ճյուղ է մեքենաշինությունը, վոր ստեղծում է ՍՍՖՍՀ 1932 թ.: Այս գործին ընթացիկ տարում մենք հատկացնում ենք 11 մլրդ. ռուբ., ստեղծում ենք բազա արտադրության համար նավթային, հանքադրծական, թեյի և չերամի արդյունաբերության համար ամեն տեսակի մեքենաների ստրքավորում, նաև նորոգման աշխատանքներ կատարելու համար:

Ահագին նշանակություն և ստանում մեզ մոտ, Անդրկովկասում, քիմիական արդյունաբերությունը, ասածիլ նաև այն պատճառով, վոր իր զարգացման համար նա ունի խոշոր ռեսուրսներ բազա և հեռանկար: Եժան էլեկտրաէներգիան և անհրաժեշտ բնական հարստությունները հանդիսանում են լավագույն նախադրյալներ քիմիական արդյունաբերության զարգացման համար: Այս տարի մենք հիմք ենք գցում ծանր քիմիայի արդյունաբերությունը զարգացնելու համար, վորը մշակում է յոդ, կալցիում, ցիանամիտ, պղնձաքլորած, լիտոպոն, ծծմբային թթվուտ, բորական թթուներ և այլն: Քիմիական արդյունաբերության զարգացման համար ծախք է յենթադրվում 13,6 մլրդ. ռուբլի գումար:

Շինարարական նյութերի արդյունաբերությունը ստանում է 17,3 մլրդ. ռուբ., անոտատային և թղթի–18,9 մլրդ. ռուբ., հանքայինը – 9,7 մլրդ. ռուբ.

Մի քանի խոսք թեթև արդյունաբերության մասին, վորը նույնպես ունի շատ հարուստ հեռանկար:

Անդրկովկասը հարուստ յերկիր է թեթև արդյունաբերության զարգացնելու համար, մանավանդ տեքստիլ, մորթի և համի արդյունաբերության համար (մետ, կոնսերվ, ձուկ, շաքար, ծխախոտ, բամբակ, թեյ և այլն). այս տարի թեթև արդյունաբերությանը և սննդի ու համի գարգացնելու համար բաց է թողնվում 58,2 մլրդ. ռուբ:

Թեև կոնտրոլային թվերով տրանսպորտի զարգացման համար բաց է թողնվում բավական ղդալի գումար, համարյա յերեք անգամ ավելի 1931 թվի համեմատությամբ, բայց և այս գումարը ճանապարհների քիչ և անկարգ լինելու պատճառով անբավական է: Այս տարի՝ գոյություն ունեցող յերկաթուղիների վերակազմության համար բաց է թողնվում 34 մլրդ. ռուբ.: Այս տարի մենք անպայման ավարտելու ենք Սուրամի լեռնանցքի Խաշուրի–Զեստաֆոնի ուղեմասի ելեկտրականացումը: Ծուլոր չափերով ավելանում և չհագագործման ցանցի անցագիտղի կարողությունը կայենների, կիսակայանների ընդարձակման, մեքենայացման միջոցով և այլն:

Սկսում ենք Կովկասյան լեռնանցքի ելեկտրական յերկաթուղու շինարարության հետախուզական աշխատանքները, վորը ամենակարճ հանապարհով միացնելու է մեզ կենտրոնի, մեր հարավրպային Միությանը Կարմիր մայրաքաղաքի, Մոսկվայի հետ:

Այս տարի Սևծովյան յերկաթուղու ավարտման համար, վորը ցնծագրվում է հասցնել մինչև Սուխում, հատկացվում է 10 մլրդ. ռուբ. և Ջուլֆա – Բագու յերկաթուղու համար – 2. մլրդ. ռուբ., Տկվարչելու ճյուղն ավարտելու համար –2,1 մլրդ. ռուբ: Դաշքեսանի ճյուղի շինարարությունը սկսելու համար – 3 մլրդ. ռուբ., Ղափանի — 0,7 մլրդ. ռ. և Սաբիրաբադի — 2 մլրդ. ռուբ.:

Բացի այդ, նախատեսված է 500 հազար ռուբ. Շիրակի նավթահան-

27611-29

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Բաց Ընթերցարան
ՀԱՊՀ-ում

քերի չրջաններում լեռնանցքային ճանապարհի հետախուզության համար:

Առանց ելնելու տրանսպորտային, վոր Անդրկովկասի լեռնային պայմաններում հաղորդակցության միակ միջոցն է և վորի զարգացումն ունի չափազանց կարևոր նշանակություն մեր ամբողջ ժողովրդական տնտեսության համար, բաց է թողնվում, իմ կարծիքով, վոչ քանականաչափ գումար, 11,3 միլ. ռուբ, վորից հանրապետական նշանակություն ունեցող նոր չինարարության համար հատկացնվում է 5 միլ., 300 հազար ռուբ, իսկ համամիութենական նշանակություն ունեցող ճանապարհների համար — 6 միլիոն ռուբլի:

Ջրային տրանսպորտի ներդրումները կազմում են 10 միլ. ռուբ., վորից 5 միլ. լենինգրադում և Ոչեմչիրի նավահանգստի չինարարության համար:

Ուժանների հետախուզման հետագրական կապ ստեղծելու և վոստային կապը զարգացնելու վրա մենք պետք է դարձնենք չափազանց մեծ ուշադրություն: Ընթացիկ տարում կապի զարգացման համար մենք բաց ենք թողնում 12,5 միլ. ռուբ., վորն ապահովում է բոլոր գյուղական խորհուրդների հետախուզումը 50 տոկ., իսկ բամբակաբուծական չրջաններին, — 100 տոկ.: Այս տարի պետք է ավարտվի Բագվա և Թիֆլիսի հետախուզանցների ավտոմատացումը, վերակազմվի Քութայիսի, Գանձայի, Լենինականի և մի շարք այլ քաղաքների հետախուզական ցանցը: Այս տարի հիմնվելու են 30·000 ռադիոտարածայնային կետ և այլն:

Գյուղական տնտեսության 1932 թ. հատկացվում է 260 միլ. ռուբ. անցյալ տարվա 174,4 միլ. ռ. դիմաց: Այս տարի պետությանը հատկացվում ենք ստեղծում ենք ամուր նյութական — տեխնիկական բազա, ստեղծում ենք նոր 19 ՄՏԿ: 1932 թ. Անդրֆեդերացիայի գործում աշխատելու են 49 ՄՏԿ, 66-ից ավելի հզոր ճիշտ ուժի կարողությամբ, վորոնցից տեխնիկական մշակույթների չրջաններում-49 ՄՏԿ: Այս 49 ՄՏԿ բախշված են հետևյալ կերպ. 28 ՄՏԿ Ադրբեջանում, 7 Հայաստանում և 14 Վրաստանում:

Մեր հիմնական նպատակն է յերկրորդ հնգամյակում Անդրֆեդերացիան դարձնել բամբակի յերկրորդ բազա և թեյի մշակույթներն ընդարձակել այնպիսի չափերով, վոր Անդրկովկասը հիմնականում բավարարի ամբողջ Խորհրդային Միության թեյի կարիքը, և այդպիսով ազատի Խորհրդային Միությանն արտասահմանից կախում ունենալուց:

Բամբակաբուծության զարգացման մեջ պետք է հատուկ ուշադրություն դարձնել Ցեզիպատոի բարձր տեսակի բամբակ բուծանելու վրա:

Գալիս ուշադրություն չի դարձնում նոր մշակույթների տարածություններն ընդարձակելու և զարգացնելու վրա՝ ասած, Նոր-Զելանդիայի վուշ, կենաֆ, քյանդիը, յեղերուսային տնկեր, կաուչուկակիրների զարգացման վրա, վորոնք ունեն չափազանց կարևոր նշանակություն ամբողջ Խորհրդային Միության համար:

Գյուղատնտեսության այս առանձին կարևորագույն ճյուղերին մենք պետք է նվիրենք հատուկ ուշադրություն, վորովհետև Անդրկովկասն այնպիսի ոազոն է, վորն ունի խոշորագույն հնարավորություններ այս բարձրարժեք տեխնիկական և հատուկ մշակույթների զարգացման համար:

Ջրաբաշխական և մելիորատիվ աշխատանքներն Անդրկովկասի պայմաններում ունեն խոշորագույն նշանակություն: Մեզ անհրաժեշտ է մի կողմից վոռոգել Հայաստանի և Ադրբեջանի ահագին անջրդի տարածությունները, իսկ մյուս կողմից չորացնել Սև-Ծովյան և Լենքորանի դաշտավայրերի թանգարժեք հողերը: Ջրատնտեսական աշխատանքների համար 1932 թ. մենք բաց ենք թողնում 55 միլիոն ռուբ: Ոռոգորագույն ոբյեկտները, վորն այս տարի նախագծվում են կոմպլեքսային պրոբլեմների ձևով ոգտագործելու համար Քուռ գետի ջրերը՝ Մինգեչաուրի հանգույցն և, Սամգորի չինարարությունը և Կոլխիդիայի դաշտավայրի ցամաքեցումը:

Գյուղատնտեսության հետևյալ կարևորագույն ճյուղն է անասնաբուծությունը, վորն Անդրկովկասի պայմաններում ունի ահագին նշանակություն:

Անասնաբուծության զարգացման համար մենք ունենք բոլոր նախադրյանները՝ կերի բազաների բավականաչափ տարածություններ՝ ամառային և ձմեռային արոտատեղիներն և այլն: Անասնաբուծության պրոբլեմը մենք լուծում ենք նույն ուղիներով, վորոնք առաջադրված են հացահատիկային պրոբլեմը լուծելիս: Այդ ճանապարհն է անասնաբուծական խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, կաթնատնտեսական ֆերմաների կազմակերպությունը և այլն: ՄՍՖՍՀ անասնաբուծական պրոբլեմը սուր կերպով կապված է Ադրբեջանի, Հայաստանի և մասամբ Վրաստանի կիսաքոչվոր անտեսությունները նոտակայց տնտեսությունների անցնելու հարցի հետ:

Դժբախտաբար, այդ հարցով Անդրկովկասում մենք քիչ ենք զբաղվել: Մինչդեռ դա կարևորագույն հարց է տեխնիկական մշակույթների հետագա ընդարձակման համար: Այս պատճառով Անդրպետպլանը, ԳՏՒ և ԺԿՒ նպատակ են դրել լուծել այս կարևոր պրոբլեմը:

Այս տարի պետական տնտեսության բնագավառում, բացի թվարկած խնդիրներից, մեր առաջ դրված է կարևորագույն խնդիր վերջնական կերպով ոչղել այն կոպիտ քաղաքական սխալները, վոր գյուղացիական հարցի նկատմամբ թույլ եր տվել ՀԿ(բ)Կ Անդրկերկոմի հին ղեկավարությունը: Մենք պետք է ամեն կերպ անց կացնենք պետության ունեցող կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրացումը:

Կարևորագույն խնդիրներից մեկը կազմում է նրանում, վոր խոշոր ներդրումների յուրացման հետ միասին, մեր առաջ դրած կարևորագույն պրոբլեմների իրագործման հետ միաժամանակ, առաջին հերթին ուղղենք այս սխալները, վոր թույլ է տվել հին ղեկավարությունը:

Մեր բնակարանային և կոմունալ տնտեսությունը յետ է մնացել ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերից: Յելնելով այս հանգամանքից, ՀԿ (բ)Կ կկ հուլիսյան պլենումի վճռի հիման վրա, մենք նպատակ ենք դրել ամենամեծ ուշադրություն նվիրել կոմունալ, բնակարանային շինարարության զարգացմանը: Բնակարանային շինարարության համար ներդրումների ընդհանուր ծա-

վալը կազմում է 56,6 մլրդ. ռուբ., իսկ կոմունալ տնտեսության համար — 58 մլրդ. ռուբ.: Պլանով նախատեսած բնակարանային կոմունալ շինարարությունը նշանակալի չափերով գարեկալել է Անդրկովկասյան Ֆեդերացիայի բանվոր գյուղացիության և աշխատավոր ազգային մասսաների նյութական – կենցաղային վիճակը:

Այս տարի պլանի մեջ մեծ տեղ և նախ ամենից կուլտուրական շինարարությանը: Կուլտուրները գլխավորապես զանվում են վրաստանի ատհմաններում, Սև ծովի ափին: Այս գործին 1932 թ. մենք հատկացնում ենք 10 ½ մլրդ. ռուբ.:

Վերջապես, ընկերներ, կուլտուրական շինարարության մասին: Սոցիալիստական շինարարության աջող ծավալումը բոլոր ֆրոնտներում գլխավորապես ենթադրում է դնում կուլտուրական հեղափոխության ֆրոնտի առաջ, մասնավանդ բազմազգի Անդրկովկասի պայմաններում, որտեղ կուլտուրական մակարդակը նշանակալի չափով ցած է մնացել Սորհրդային Միության այլ առաջավոր կուլտուրական ոլորաններից:

Ժողովրդական կրթության բնագավառում այս տարի ծախսվելու է 167,2 մլրդ. ռուբ., իսկ առողջապահության բնագավառում — 80 միլիոն ռուբ.:

Ժողովրդական տնտեսության բոլոր կարևորագույն ճյուղերի կապիտալ շինարարության 1932 թ. պլանը վորոշված է 955,1 մլրդ. ռուբ., այսինքն՝ 63,8 տոկոսով ավելի 1930 թ. համեմատ:

ԱՍՖՍՀ արդյունաբերության մեջ 1932 թ. ներդրվելու է 386,8 մլրդ. ռ. (աճը 49,8 տոկ.), ներդնելիքից — 57,1 մլրդ. ռ. (աճը — 129,3 տոկ.), տրանսպորտի — 96,3 մլրդ. ռ. (աճը — 76,4 տոկ.), կոմունալ ու բնակարանային շինարարության մեջ — 71,5 մլրդ. ռ. (աճը — 103 տոկ.), իսկ կոմունալ և բնակարանային շինարարության մեջ բոլոր աղբյուրներից արվող ներդրում ների ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 114,6 մլրդ. ռուբ.:

Գյուղատնտեսության մեջ 1931 թ. ներդրված եր 174,4 մլրդ. ռուբ., 1932 թ. ներդրվելու է 260,2 մլրդ. ռ., աճը — 49,2 տոկ, և վերջապես կուլտուրական կապիտալ ներդրումների — գլխ. բացների շինարարության համար բաց է թողնվում 38,2 մլրդ. ռուբ., աճը — 121 տոկոս:

Նշանավոր չափով այս տարի ավելանում են ԱՍՖՍՀ պետական և տնտեսական բյուջենները: Միասնական պետական բյուջեն հաշվեկշռված է 317 մլրդ. ռուբ., իսկ տեղականը — 251 մլրդ. ռուբլի:

Ինչ գումարով և արտահայտվելու Անդրֆեդերացիայի ժողովրդական տնտեսության կառուցը: Անդրպետպլանի նախնական հաշիվները ցույց են տալիս, վոր ժողովրդական տնտեսության ընդհանուր ծավալն անընդհատ աճում է, 1926—1927 թ. անփոփոխ գներով հասնելով 1932 թ. — 2·242 մլրդ. ռուբ. 1931 թ. 1693 մլրդ. ռուբ. դիմաց, այսինքն ավելանում է 32,4 տոկ., իսկ սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը 1932 թ. կազմում է 86,6 տոկոս:

ԱՍՖՍՀ գտնում է ինդուստրիալ – ագրարային յերկիր: Ցնթե մոտիկ անցյալում ԱՍՖՍՀ ներկայացնում եր իրենից առավելապես գյուղատնտեսական յերկիր, բաղկացած մանր ավերված կիսամուրացիկ գյուղացիական տնտեսություններից, այժմ ներկայացնում

է մի յերկիր, վորտեղ գյուղատնտեսական տնտեսությունների 42 տոկոսից ավելին կազմում են կոլտնտեսություններ, վորտեղ բամբակագործական շրջաններում միջակ – չքավոր տնտեսությունների ավելի քան 55 տոկոսն արդեն մտել և կոլտնտեսությունների մեջ, վորտեղ գոյություն ունի ճյուղային խորհտնտեսություններ, կաթնատնտեսապրանքային ֆերմաների մի ամբողջ ցանց, վորտեղ պատերազմական արդյունաբերությունը վերակառուցված է տրակտորով, դիզելատնով, կոմբայնով, վորտեղ բոլոր անկյուններում ծխում են ֆաբրիկանների և գործարանների ծխանելուկները, վորտեղ վերամշակում են սեխական հումքը, սեխական հանքը, վորտեղ ինդուստրիայի արդյունաբերությունը, գլխավորապես տեղական բնիկ ապրանքատեսակներից 1927—1928 թ. 204 հազար, 1932 թ. աճել է մինչև 412 հազ:

Արդյունաբերության և գյուղական տնտեսության տեսակարար կշիռն ԱՍՖՍՀ ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ վազուց արդեն անցել է հնգամյա պլանով նախատեսածից: Արդյունաբերության և գյուղական տնտեսության տեսակարար կշռի հարաբերությունը 1927–1928 թ. կազմում եր արդյունաբերության նկատմամբ 57 տոկ., գյուղական տնտեսության — 49 տոկ., իսկ 1932 թ. արդյունաբերության տեսակարար կշիռն աճում է մինչև 72 տոկ, իսկ գյուղական տնտեսությունն ընկնում է մինչև 28 տոկ.:

Այսպես, ընկերնե՛ր, դուք տեսնում եք ԱՍՖՍՀ քայլ առ քայլ դառնում է ինդուստրիալ – ագրարային յերկիր, վորտեղ արդյունաբերությունը պատկանում է դեկավար դեր: Ժողովրդական տնտեսության արտադրանքի ընդհանուր արժեքը 1932 թ. հասնում է 2·460·000·000 ռուբ., հնգամյակի վերջին տարվա համար նշանակած 2·297·000·000 ռ. դիմաց, այսինքն՝ պլանը գերակատարվելու է: Արդյունաբերության նկատմամբ պլանը գերակատարվում է 54 տոկոսով:

Տրանսպորտի հնգամյակը 1931 թ. գերակատարված է բոլոր ցուցանիշների նկատմամբ, իսկ 1932 թ. մենք ունենալու ենք հնգամյակի պլանի գերակատարում բեռնաշրջանառության նկատմամբ 56 տոկ., ուղևորների փոխադրությունների նկատմամբ — 117 տոկ. և յերկաթուղային տրանսպորտի բոլոր արտադրանքի նկատմամբ — 58 տոկ.:

Կոլեկտիվացման հնգամյակը, ինչպես արդեն դեկուցել եմ, վոչ միայն իրագործված է, այլ մի քանի անգամ գերակատարված և հնգամյա պլանի նախատես նշանակած տոկոսի դիմաց: Հնգամյակի վերջին տարվա համար ծրագրված է 17,4 տոկոսի փոխարեն մենք Անդրկովկասում արդեն ունենք կոլեկտիվացման յենթարկված տնտեսություններ մինչև թվով 41 տոկ, իսկ բամբակագործական շրջաններում 55 տոկ.: Այս տարի հիմնական բամբակագործական շրջաններում պետք է ամբողջ կոլեկտիվացումն և այս հիման վրա կուլակության լրիվ դասակարգի լիկվիդացիան:

Կոլտնտեսությունների ցանքսի տարածությունը հնգամյակի վերջին տարվա համար ծրագրված 502 հազ. հեկտարի փոխարեն հասնում է 1 մլ. 190 հազ. հեկտ.: Մորհնտնտեսությունների համապատասխան կերպով աճում է տարածությունը, հասնելով մինչև 152,6 հազար հեկտ.: Տնկարկների նկատմամբ հնգամյակի

վերջին տարվա համար ծրագրած 319,9 հազար հեկտարի փոխարեն մենք ունենք յենք 383,4 հազ. հեկտ., տարվա թվում 1932 թ. մենք ունենալու յենք բամբակի տարածություն 285 հազ. հեկտար:

Գյուղատնտեսության տեխնիկական վերապինման նկատմամբ մենք նույնպես դերակատարել ենք հնգամյակը: Տրակտորային պարկը մենք հասցնում ենք 66 հազ. ձիաուժի, հնգամյակի վերջին տարվա համար ծրագրած 50 հազարի դիմաց:

Գյուղատնտեսական մեքենաներով հագեցումը 1 հեկ. համար կլինի 27 ռ.՝ հնգամյակի վերջին տարվա պլանով ծրագրած 19 ռուբ. դիմաց:

Ապրանքաշրջանառության ընդարձակում հնգամյակի վերջին տարվա համար ծրագրած 7·600 առևտրական կետերի փոխարեն, հանրայնացրած սեկտորի մանրավաճառ ցանցը հասել է 1931 թ. 10·200 կետի, իսկ 1932 թ. լինելու է՝ 12·500 կ., ապրանքաշրջանառությունը 1932 թ. հասնում է 1,5 միլիարդ ռուբ. հնգամյակի վերջին տարվա 1·049 միլ. դիմաց:

Աշխատավարձի ֆոնդն ավելանում է համարյա 3 անգամ, հասնելով 1932 թ. 946 միլ. ռ., կամ 192 տոկ.: Միաժամանակ անկասկած բարձրանում է բանվոր դասակարգի և աշխատավորների նյութական – կուլտուրական կենցաղային վիճակը:

Ընդհանուր ուսման նկատմամբ մենք ունենալու յենք գերակատարում 168,8 տոկ., նախադպրոցական կրթության նկատմամբ — 390 տոկ., բուհերի նկատմամբ — 228 տոկ., տեխնիկումների — 295 տոկ., ֆաբրիկ – գործարանային ուսումնար. նկատմամբ — 1·100 տոկ., առողջապահական կետերի նկատմամբ — 217,4 տոկ., հիվանդանոցային մահճակալների — 138,9, մանուրներում տեղերի թվի նկատմամբ — 600 տոկ.: Ակտիս, ուրեմն, ընկերներ, Անդրկովկասյան Ֆեդերացիայի բանվոր դասակարգի կողմից 1932 թ. համար դրած նպատակները մեծամեծ ջանքերի շնորհիվ իրագործվելու յեն և սոցիալիստական շինարարության այդ խոստումների հետագա լայն ծավալման համար գոյություն ունեցող տնտեսական – մշակութական բազան հատուցող կերպով ամրապնդվելու յե:

Բանվոր դասակարգը, վորը վարկված և սոցիալիստական շինարարության ենտուզիազմով, մեծ հաղթությամբ ծավալել և ստեղծագործությունը և հարվածայնությունը: Ամեն որ, ամեն ժամ աճում և ամրանում են մտնեսա–հաշվարկային երկուղները–Անդրկովկասյան Ֆեդերացիայի բոլոր ֆաբրիկներում և գործարաններում, բոլոր խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում: Համարձակ կերպով առաջ են բերվում հանդիսական պլաններ, աճում և սոցիալիստական չարժումը, աճում և տեխնիկային տիրապետելու ձգտումը: Լինկ. Ստալինի 6 պատմական դուցումները համաձայն:

Այստեղ և, ընկերնե՛ր, հաղթանակի դրամականը, այստեղ և հնգամյակը չորս տարում ավարտելու գրավականը: Սոցիալիզմի կառուցման համար պայքարում ձեռք բերած այս ամենամեծ աջողությունը հետևանք և այն բանի, վոր ուղիղ և տարված կուսակցական գիծը վոր գիծը, վոր իրագործված և լենինյան ազգային քաղաքականություն

նը և պայքար և մղված բոլոր թեքումների դեմ — աջ թեքման՝ իբրև գլխավոր վտանգի դեմ, «ձախ»-ի և հաշտվողականության դեմ, պայքար — մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ:

Կուսակցության գլխավոր գիծն ապահովում և պրոլետարիատին և աշխատավորներին — աջոդությունը «սոցիալիստական հնգամյակի» ավարտական տարում: Առաջ, դեպի սոցիալիզմի նոր հաղթանակները: (Բուռն ծափահարություններ):

Նախագահ: Թույլ տվեք արտոնով վերջացնել առաջին նիստը, աշխատանքը շարունակվելու յե վաղը, առավոտյան ժամը 10-ից:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ VI ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

1932 թ. հունվարի 26-ի առավոտյան:

Նախագահում է ընկ. Ա. Ալեքյանը:

Նախագահ: Ընկերնե՛ր, նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ բացված: Այսօր օրակարգում դրված է ԱՍՖԻՀ ժողովրդական տնտեսության 1932 թվի կոնտրոլային թվերի մասին հարակից զեկուցում: Խոսքը տրվում է ընկ. Փիրումովին: (Ծափահարություններ):

Փիրումով: Ընկերնե՛ր, յուս ինձ թույլ կտամ համառոտ կերպով կենտրոնացնելու ձեր ուշադրությունն այն հարցի վրա, թե ինչպես մենք իրագործեցինք 1931 թ. մեր առաջ դրած խնդիրները և ինչ նախապայմաններ են ստեղծվում կառուցելու համար հետևյալ — հնգամյակի վերջին տարվա պլանը:

Մենք համարում ենք 1931 թ. պլանը, իբրև կապիտալիստական տարրերի դեմ հետագա սոցիալիստական հարձակման պլան, իբրև ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ևս ավելի արագացնելու տեմպեր, իբրև բանվորների և աշխատավոր գյուղացիության հիմնական մասսաների նյութական և կուլտուրական վիճակի ևս ավելի բարձրացնելու պլան և իբրև սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ավարտելու պլան:

Մրանք են այն գլխավոր գաղափարները, որ դրված են 1931 թ. պլանի մեջ:

Բացի այս խնդիրներից, որոնք ընդհանուր են ամբողջ Միության համար, Անդրկովկասյան պլանն իր առանձնական մասում հետապնդում էր մի շարք հատուկ խնդիրներ:

Ամենից առաջ խնդիրը եր դրված նավթային արդյունաբերության դարգացումն արագացնելու: Մի այլ խնդիր, որ դրվել եր, դա յեր մեր ռայոնը հատկապես բնորոշող արդյունաբերության ճյուղերի ևս ավելի արագացրած զարգացումը. այն է՝ լեռնագործական, չինանյութերի և քիմիական արդյունաբերությունը: Վերջապես պլանը խնդիր եր դրել վերացնելու եներգետիկական բազայի յեռամեացությունը:

Գյուղատնտեսության մեջ մասսայական արտադրական խնդիրներ յին բամբակը, այլ տեխնիկական մշակաբույսերի ծավալումը և անասնաբուծության վերակառուցումը:

Այժմ կանգ կառնեմ բամբակի համար պայքարելու հարցի վրա: Ինչ և նշանակում պայքարել բամբակի համար: Հիմնականում դա նշանակում է բարձրացնել գյուղատնտեսության ամբողջ մակարդակը, նրա վրա. պայքարել բամբակի համար—նշանակում է խորացնել գյուղում սոցիալիստական – տեխնիկական և կուլտուրական հեղափոխությունը: Անդրկովկասը յերկրորդ հնդամյակում պետք է դառնա բամբակի ուժեղ բազա: Մենք այս նպատակով դեռ 1931 թ. ձեռք բերինք վորոշ բեկում և վճռական չրջադարձ՝ կուսակցական գլխավոր գիծը գործնականապես անց կացնելու հիման վրա: Եթե մենք այսօր բամբակ ենք հավաքել անցյալ կամպանիայից յերկու անգամ ավելի, այնուամենայնիվ պետք է ասել, վոր բամբակի մթերումները դեռ ևս չի կարելի համարել ավարտած: Մենք պետք է իրագործենք բամբակի մթերման պլանը, վորովհետև բալշևիկյան յերբորդ գարուն պահանջում է, վոչ հարվածային կերպով ավարտենք բամբակի հավաքն ու մթերումը:

Ադրբեջանում պլանը հիմնականում ավարտված է 86–87 տոկ.: Մթերման նպատակով մենք գնում ենք Ուդրեկատանի, Թուրքմենստանի, Դաղստանի և այլ շրջանների աջակից: Պլանի այսպիսի իրագործման համար մենք պարտական ենք մասամբ նաև ուղիղ ենք: Կոլտնտեսական և գյուղի չքավոր-միջակ մասսան, քաղաքականորեն դիտակցելով բամբակի անկախության համար պայքարի նշանակությունը, իսկապես ծավալել և բամբակի պլանի համար պայքարի բալշևիկյան տեմպեր: Մենք պետք է հետագայում վճռականապես հարվածենք դեմոբիլիզացիոն տրամադրությունները, կոտրելով կուլակության դիմադրությունը, վորը չի իրագործել ամուր առաջադրանքները, մերկացնելով և անխնա ջախջախելով ամեն տեսակ ոպորտունիստական, հանցավոր-բարեհոգի վերաբերմունքը գեպի կուլակությունը, չարունակելով սոցիալիստական համբերաշխիքի կարգով առաջ քաշել յետամնաց խորհրդային տնտեսությունները, կոլտնտեսությունները, կազմակերպելով և ուղղելով նրա ակտիվությունը բամբակի մթերման պլանը 100 տոկոսով իրագործելու համար:

Հետո, թույլ ավելք կանգ առնել չալթուկի պրոբլեմի վրա: Ձնայելով վորոշ աջողությունների, հարկավոր է ասել, վոր չալթուկն Անդրկովկասում մոռացված ճյուղ է: Մինչդեռ չալթուկը թանգարժեք մշակույթ է: Չալթուկը մենք բերում ենք գլխավորապես Պարսկաստանից, Չինաստանից և Ճապոնիայից, իսկ մեզ մոտ հողը հիանալի հող է չալթուկ ցանելու համար. չալթուկի համար մենք հատկացնում ենք հատուկ ռայոն — Լենքորան, Աստարա, Մասալի, Աստրախան-Բազարը և այլն: Այս ռայոններում յերկար տարիների ընթացքում չալթուկի ցանքսերը չեն ավելանում. այդ բացատրվում է նրանով, վոր մեր պլա-

նավորող մարմիններն այս նպատակի համար վոչ մի միջոցի չեն զղամում: Մեզ մոտ պետք է գործադրվի վոռոգման այլ եղանակներ: Վերհիշյալ ռայոններում ջուրը հավաքում են ավազանների մեջ, վորտեղ հետո յերաշտի ժամանակ ջուրը բաց են թողնում, մինչդեռ այս ավազանները բռնում են մեծ տարածություններ: Այս ջրային ավազանները, վոր կոչվում են «չոլել», վարելի յե վերացնել, տեղծելով ջրի պահեստար լեռներում, վորտեղից և վարելի յե ջուրը բաց թողնել:

Այս չոլները յերկար ժամանակի ընթացքում չեն օգտագործվել ցանքի համար և այժմ ներկայանում են տարածություններ, վորոնք կարող են տալ ահագին բերք: Ցնթե մենք այս միջոցառումն անց կացնենք, ձեռք կբերենք չալթուկի համար նոր տարածություններ, և այս նպատակի համար հարկավոր են չնչին ծախքեր — մի քանի տասնյակ հազար ռուբ.: Անհաժեշտ է ավելացնել չալթուկի պլանտացիաների տարածությունը: Ի՞նչու այս գործի համար չի կարելի կիրառել մշակման կատարելագործված ձևեր, ցանիչներ և այլն: Մեր պլանավորող մարմինները մատը մատին չեն խփում մեքենայացնելու համար այս չհավետ ախխնիկական մշակույթը — չալթուկառուցվածքները:

Գյուղական տնտեսության վերակառուցման սերտ կերպով կապված և քոչվոր բնակչությունը նստակյաց դարձնելու հարցի հետ: Ադրբեջանում բնակչության համար յուր թե 40 տոկոսը ամառը թողնում և տափաստանի տեղերը և բարձրանում լեռները այն ժամանակ, յերբ տափաստանի տեղերում նա հարկավոր է բամբակ մշակելու, բերքը հավաքելու համար: Տափաստաններում կյանքի պայմանները այնքան ծանր են, վոր բնակչությունը ստիպված է քոչվորի կյանք վարել: Քոչը ահագին մնաս է բերում գյուղատնտեսությանը: Մենք ձեռք ենք առել մի շարք միջոցներ, վոր հնարավորություն տանք նրանց նստակյաց կյանք վարելու: Բայց վորոշ հետևանք ստանալու համար պետք է ձեռք առնել ամեն մի միջոց, ապահովելու համար բնակչությունը խմելու ջրով, պետք է պայքարել մալյարիայի դեմ, ծառեր տնկել, զարգացնել կոմունալ տնտեսությունը: Անհրաժեշտ է, վոր Անդրկենտգործկոմը դիրեկտիվներ տա պլանավորող մարմիններին չբռնակել այս փորձը տասնապատիկ ճիգերով, լուծելով միաժամանակ քոչվորների նստակյացության հետ կապված կերի հարցը:

Մեր ռայոնները մեծ մասամբ ծածկված են մալյարիայով: Քուռ ու Արաքս գետերի ափերից դուրս գալու հետևանքով: Մալյարիան այստեղ իր համար հաստատ բուն է դրել, մինչդեռ մենք հեշտությամբ կարող ենք պայքարել մալյարիայի դեմ: Այստեղ հարկավոր են միայն քայլհիկյան տեմպեր: Մի քանի ժամանակ առաջ Ղարաճալա խորհրդտնտեսությունում տեղի ունեցավ մալյարիայի դեմ պայքարող աշխատավորների համագումար Անդրկոմվկասյան մասշտաբով: Այս համագումարում պարզվեց, վոր մալյարիայի դեմ կարելի յե պայքարել, սրբկելով վարակված տեղերը ինքնաթիռներից մոծակների թրթուրները վոչնչացնելու համար: Ի՞նչու մեր պլանավորող մարմինները հարց չեն դնում, վոր այս գործի համար գործածեն վոչ թե յերկու ինքնաթիռ, վորոնք փաստորեն աշխատում էլին, այլ տասնյակ ինքնաթիռներ: Ընդհանուր առմամբ պետք է արձանագրել, վոր բամբակարուծության, չալթուկարուծության և առհասարակ մեր բոլոր ձեռնարկումների հետագա պրոգրեսն Անդրբեջանի տափաստանային շրջաններում կապված է մալյարիայի դեմ պայքարի հետ: Այստեղից հետևում է, վոր վոչ միայն Առժոզկոմատը, այլ ամբողջ կառավարության խնդիրն է ամենակարճ ժամանակում ծավալել լայն պայքար մալյարիայի դեմ, ապահովել խորհրդտնտեսություններում կադրերի և աշխատանքի կազմակերպման համար նորմալ պայմաններ:

Թույլ ավելի նորմալ կանգնել ՀԿ (բ)Կ Կ հոկտեմբերի 31-ի Անդրկոմկուսակոմի վերաբերյալ վորոշման վրա:

Դուք լավ գիտեք, վոր ՀԿ (բ)Կ Կ իր վորոշման մեջ արձանագրում է խորհուրդների վորոշ աշխատությունները Անդրկովկասի տնտեսական շինարարության և ինդուստրացման ղեկավարության գործում, նշում է մի շարք լուրջ քաղաքական սխալներ, վորոնցից հիմնական են գյուղացիական հարցում թույլ տված սխալները: ԱՍՖՍՀ խորհուրդները, ձեռք բերելով վորոշ աջողություններ գյուղատնտեսության վերակազմության նկատմամբ, «ընդգրկել են գլխավորապես աշխատանքի տեխնիկական կողմը և չեն ազատվել գյուղացիության (չքավոր-միջակ մասսաների) կանոնավոր քաղաքական ղեկավարությունը»:

Գյուղխորհուրդների թույլ մասսայական աշխատանքի պատճառով, չքավոր-միջակ մասսաների վրա ազդեցության համար թույլ պայքարի հետևանքով մասսայական աշխատանքը փոխարինվում էր վարչականությամբ: Այս սխալների և չքավորության և բատրակության մեջ տարված թույլ աշխատանքի հետևանքով, չնայելով, վոր գյուղացիության հիմնական մասսան չքիազարձ էր կատարել դեպի գյուղի սոցիալիստական վերակառուցումը, կուլակները և ջախջախած հակախորհրդային կազմակերպությունների մնացորդները հնարավորություն են ստացել կենդանացնելու իրենց ազդեցությունը գյուղում: Այս սխալների վրա այստեղ, նստաշրջանում, պետք է սրբել ուշադրությունը և այս սխալների դեմ պայքարելու համար մոբիլիզացիայի յենթարկել ամենալայն մասսաները: Հետո, Անդրկովկասյան կազմակերպությունները չեն ապահովել ՀԿ(բ)Կ Կ դիրեկտիվների իրագործմամբ Անդրֆեդերացիայի մարմինների ղեկավարող դերն ուժեղացնելու մասին, միաժամանակ զգացնելով ԱՍՖՍՀ կազմի մեջ մտնող ազգային հանրապետությունների լայն ինքնագործունեություն և նախաձեռնություն. այս մարմինները թույլ են տվել խիստ կենտրոնացում Անդրֆեդերացիայի տնտեսական և կուլտուրական շինարարության ղեկավարության գործում, վորի հետևանքով մի շարք գյուղերում անպայման առաջ է յեկել հանրապետական մար-

մինների դիմազրկությունը: Այս աշխատը մենք պետք է ուղղենք ամենամոտակա ժամանակվա ընթացքում:

Ազգամնախտական, մեծապետական և նացիոնալ-ուկլոնիստական տարրերը փորձելու չեն մեկնաբանել Հկ(բ)կ կկ հանրապետական մարմինների դիմազրկության պրակտիկայի լիկվիդացիայի մասին վորոշումը իբրև Անդրֆեդերացիայի մարմինների դեկավարող դերի թուլացում: ԱՍՖՍՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների տնտեսական և կուլտուրական նախաճեռնությունը ամրապնդելու պատրվակով, այս տարրերը փորձելու չեն անց կացնել իրենց ուկլոնիստական տեսակետը Անդրֆեդերացիայի նկատմամբ:

Այստեղ մենք պետք է աչալուրջ լինենք և ժամանակին ջախջախիչ հակահարված տանք բոլոր այդ վորձերին:

Տեղին է հիշել այն որինակը, վորը բերել եր ընկ. Մամիան Սղբեջանի կոմկուսակցության համագումարում: Նա նշել է, վոր 1929 թ. կոլտնտեսությունների նկատմամբ թույլ եյին տրված չեղումներ՝ դեպի վարչականություն, հրամանատարություն և այլն: Հկ(բ)կ կկ ցուցումներ տվեց այս չեղումները վերացնելու համար: Սակայն, չեղումների վերացումը կոլտնտեսական շինարարության մեջ չի նշանակում, վոր հրաժարվում ենք կոլտնտեսությունների չինարարությունից: Նույն պես և այստեղ չեղումների վերացումը, վորն արտահայտվել է ֆեդերատիվ մարմինների դեկավարության չափազանց կենտրոնացման մեջ, բոլորովին չի նշանակում, ինչպես կարծում են ուկլոնիստական տարրերը, վոր մենք հրաժարվում ենք նույնիսկ Անդրֆեդերացիայից, ընդհակառակը, ֆունկցիաների կանոնավոր բաշխումը, չեղումների վերացումը, ԱՍՖՍՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների տնտեսական ինքնագործունեության զարգացումը միայն բարձրացնելու չեն Անդրֆեդերացիայի հեղինակությունը, ամրապնդելու չեն նրա տնտեսական և քաղաքական կարողությունը:

Անդրֆեդերացիայի աջողությունները այս ֆեդերացիայի մեջ մտնող հանրապետությունների աջողությունների են և ընդհակառակը, Անդրկովկասյան հանրապետությունների առաջադիմող շարժման աջողությունները միաժամանակ ամբողջ ֆեդերացիայի աջողություններն են:

Ընկերնե՛ր, մարտի 12-ին լրանում է 10 տարին Անդրկովկասյան Սորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության, Անդրկովկասի չորս հանրապետությունների եղբայրական պրոլետարական միության կազմելու օրից: 10 տարի սրանից առաջ ցարական ժառանգության և հակահեղափոխական մենշևիկների՝ մուսավաթիստների, դաշնակների և մենշևիկների ավերակների վրա կառուցվեց Անդրկովկասի, ԱՍՖՍՀ ժողովուրդների միության և բարեկամության անխախտելի բերդը, վորը ստեղծվել է բազմազգի Անդրկովկասի աշխատավորների կամքով միութենական պրոլետարիատի եղբայրական ոգնությամբ: Բոլորին հայտնի է, վոր Անդրկովկասյան Ֆեդերացիան առաջ եկավ ընկ. ընկ. Լենինի և Ստալինի նախաձեռնությամբ և ցուցմունքներով: Անդրֆեդերացիան ազգային խաղաղության և եղբայրական միության պարարչյան է, վորն որինակ է բազմազգի Անդրկովկասի աշխատավորների ազգային միության: Միայն պրոլետարական դիկտատուրա սահմանելուց հետո տիրեց ազգային խաղաղություն «չտեսնված բուրժուազիայի որոք և անհնարին բուրժուական իրավակարգում» (Լենին):

Այս տասը տարվա ընթացքում Անդրկովկասի բանվոր դասակարգը ապահովեց սոցիալիզմի կառուցման համար պայքարի ամենամեծ աջողությունը, լենինյան ազգային քաղաքականության կանոնավոր իրագործման և մեր կուսակցության գլխավոր գծի անշեղ պայքարի հիման վրա:

Կապիտալիզմի հիմքերը պայթեցող համաչխարհային ճգնաժամի և կապիտալիստական երկրների աչխատավոր մասսաների անթիվ դժբախտությունների ֆոնի վրա, Անդրկովկասյան հանրապետությունը, սոցիալիստական հանրապետությունների մեծ Միության այս անքակտելի մասը, մտավ 1931 թ. հնգամյակի վերջին տարին ահագին աջողություններով և նվաճումներով իր տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Պրոլետարիատի ստեղծագործական ուժերի չտեսնված վերելքի և նրա հերոսական պայքարի հետևանքով հնգամյակի յերրորդ վճռական տարում համաչխարհային – պատմական նշանակություն ունեցող հաղթանակ և տարվել — ավարտվել է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը և վերջնականապես լուծվել է «ո՞վ ո՞ւմ» հարցը սոցիալիզմի ոգտին:

Ձես հավատացած եմ, վոր նստաշրջանը հավանություն կտա և կճայ նակցի Բագվա լենինյան ռայոնի 3 և 5 հարվածային հանքագործությունների նավթայինների կոչին՝ մուծել բոլոր բանվորներին ԱՍՖՍՀ տասնամյակի առթան մի միանական հարվածային բրիգադի մեջ:

ԱՍՖՍՀ աչխատավորները կթափեն իրենց բոլոր ճիգը ժամանակից առաջ կատարելու և գերակատարելու համար տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր ճյուղերում հնգամյակի վերջնական հնգամյակի ավարտական տարվա բոլոր պլանները:

Կեցցե՛ բազմազգի Անդրկովկասի միջազգային միությունը:

Կեցցե՛ Անդրկովկասի բանվոր դասակարգը և նրա ավանգարդը — Բագվա պրոլետարիատը, վորն աջողությամբ իրագործում է հնգամյակը չորս տարում:

Նախագահ: Թույլ տվեք, ընկերներ, սրանով ավարտել մեր յերկրորդ նիստը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ԿՈՄԻՏԵՅԻ VI ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ՅԵՐԿՈՐԴ ՆԻՍՏ

1932 թ. հունվարի 26-ի յերեկոյան

Նախագահում է ընկ. Ի. ԵՖԵՆԴԻԵՎԸ

Նախագահ. — Ընկերներ, թույլ տվեք Անդրկենտգործկոմի յերկրորդ նստաշրջանի յերրորդ նիստը համարել բացված: Որակարգում ընկ. ընկ. Մուսաբեկովի և Փիրումովի զեկուցումների առթիվ վիճաբանությունների չարունակությունն է: Խոսք ունի ընկ. Ռահիմովը:

Ռահիմով.— Ցես ուզում եմ կանգ առնել սոցիալիստական աշխատանքի հարցերի վրա:

ՄՍՀՄ մեր մեծ հաղթանակներից մեկն է գործազրկության կատարյալ վերացումը: ՄՍՀՄ մենք անց ենք կացրել աշխարհում ամենակարճ բանվորական որ և բանվորական շաբաթ: Բանվորների 55 տոկոսը հանգստանում է հինգերորդ որը, բոլոր բանվորների 43 տոկ.— 6-րդ որը: բոլոր բանվորների 91 տոկոսն անց է կացրած յոթժամյա բանվորական որվա, մնացած 9 տոկոսը նույնպես պետք է անցնի 1932 թ. յոթժամյա բանվորական որվա:

Բոլոր այս նվաճումները կատարվում են այն ժամանակ, յերբ աճում է և աշխատավարձը և բարելավվում է բանվորների նյութական և կուլտուրական կենցաղային պայմանները: Տարեց-տարի աճում է բանվորների թիվը: Ցեխե 1930 թ. մենք ունեցինք Անդրկոմկուստամ 553 հազ. վարձու բանվոր, 1932 թ. այդ թիվը հասնելու յե 806 հազ.: Տարեց տարի ավելանում են կապիտալ ծախքերն աշխատանքն առողջացնելու համար: Ցեխե մենք 1928 թ. աշխատանքի պայմաններն առողջացնելու վրա ծախսում եյինք 2·730 հազ. ռ., 1929 — 30 թ. ծախսել ենք 3·055 հազ. ռ., իսկ 1931 թ.— 3·500 հազ. ռ.: Աճում է մասնրների մանկական պարտեզների թիվը և այլն: Ցեխե սոցիալ. ապահովագրության բյուջեն ընթացիկ հնդամյակի համար ծրագրվում եր 1·950 միլ. ռ., արդեն 1931 թ. բյուջեն հասավ յերկու և կես միլ. ռ., իսկ 1932 թ. հասնելու յե յերեք միլիարդ 490 միլ. ռ.: Նույն տեսակ աճ ունի և ԱՍՖԽՀ սոցապի բյուջեն: 1931 թ. մենք ունեցինք 89 միլ. ռ., 1932 թ. այդ թիվը հասնում է 128 միլ. ռ.:

Ինչ կարող է հակադրել այս թվերին կապիտալիստական աշխարհը: Կապիտալիստական յերկրներում որեղ աճում է գործազրկների թիվը: Ցերկարաձգված է առանց այն էլ յերկար բանվորական որը: Զի դադարում աշխատավարձի անկումը, աճում է չքավորությունը և սովը: Ֆաբրիկաներն ու գործարանները չարքից դուրս են գալիս և փողոց են նետվում տասնյակ հազար նոր գործազուրկներ:

Ահա մեր տնտեսավարության և կապիտալիստների տնտեսավարության հետևանքները:

Այս նվաճումների հետ միասին մենք ունենք մի շարք թերություններ: Հիմնականում այդ թերությունները կայանում են նրանում, որ վորակական ցուցանիշները յետ են մնում առաջադրանքներից: Այն ժամանակ, յերբ մենք թերակատարում ենք վորակական ցուցանիշները մի շարք ճյուղերի նկատմամբ, մենք ունենք աշխատավարձի գերակատարում: Աշխատավարձն աճել է 11 տոկոսով վոխանակ պլանային առաջադրանքի հինգ տոկոսի: Մենք ունենք ավելորդ բանվորական ուժ, վորը կազմում է 2,6 տոկ.: Ցես կարող եյի ցուցադրել շատ վատաներ, վորոնք ապացուցում են արտադրական ծրագրի թերակատարումն այն ժամանակ, յերբ աշխատավարձի ֆոնդը նշանակածից ավելի յե ծախսվել: Սպասարկման մենք պետք է խիստ կերպով վերահսկենք, վոր աշխատավարձի և բանուժի հարցում տեղի չունենա վոչ մի չեղում կառավարչական առաջադրանքներից: Առաջին կարգի կոլպայմանագրեր կնքենք, մենք պետք է հայտնաբերենք բանվորական ուժի ավելցուկը բոլոր ձեռնարկություններում, վորպեսզի կանոնավոր կերպով բաշխենք ժողովրդական տնտեսության բոլոր այն ճյուղերի մեջ, վորտեղ բանուժի պահանջ կա: Աշխատանքի կազմակերպումը, աշխատավարձը և ինքնարժեքն իրար չեն համապատասխանում այն պատճառով, վոր մեր տնտեսական մարմինները դեռևս չեն սովորել կանոնավոր կերպով կարմակերպել աշխատանքը:

Ցես ուզում եմ կանգ առնել արդյունաբերության և առհասարակ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ կանանց աշխատանքն ապահովելու հարցի վրա: 1929 թ. հունվարին մենք ունեցանք տեսակարար կշիռ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ կազմում եր 13,5 տոկ., 1930 թ. հունվարի մեկին—20,2, իսկ ոգոստոսի մեկին 1931 թ. մենք արդեն ունենք 24,6 տոկ.: 1931 թ. ծրագրված եր արմատացնել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի մեջ, բացի գյուղատնտեսությունից և կոոպերատիվ կազմակերպություններից 43 հազ. կին: Այժմ, նախնական հաշիվներով առ մեկն դեկտեմբերի 1931 թ. արմատացրած է 44 հազ., բայց մենք ունենք մի շարք ձեռնարկություններ և հիմնարկություններ, վորտեղ դեռևս չարունակում են թերագնահատել կանանց աշխատանքի կիրառումը: Այս տարի բանվորների ամբողջ լրացուցիչ քանակի 45–50 տոկոսը կազմելու յենք կանանցից:

Մի շարք տնտեսական մարմիններ թերագնահատում են ֆաբրիկա-գործարանային դպրոցները, մինչդեռ այս դպրոցների միջոցով է պատրաստվում գլխավորապես բանուժը: Այսօր մեզ մոտ այդ ուսումնարանները ուսանում է 28·121 հոգի: 1932 թ. կոնտրոլային թվերում մենք ծրագրում ենք 26·095 հոգի: Պետք է ասենք, վոր աշնանային ընդունելու-

թյան հետևանքները տվել են մի շարք անբարենպաստ մոմենտներ: Այդ դպրոցներից չատերում լերկը հեռացավոխությունն և լինում: Վատ և դրված հանրակացարաններին, կապիտալ շինարարության գործը: Պետք է ասել, որ առհասարակ մեր տրնտեսական մարմինները թերագնահատում են կադրերի պրոբլեմը: Ցերը կառուցողների պատրաստման հարցով զբաղված էին Աչխժոդկոմատի մարմինները, պատրաստվել և ամարտել են 14·900 հոգի: Մոռավորապես տարվա կեսից կառուցողներ պատրաստելը մենք հանձնել ենք տնտեսական մարմիններին և առալարկել ենք պայմանագրեր կնքել և պատրաստելը սկսել անմիջապես չենքերում: Պայմանագրերը կնքվել են: ԱՍԽՀ պետք է պատրաստեր յերկու հազար կառուցող, վատատրեն պատրաստվել է 367 կառուցող: Վրատատնում պետք է պատրաստեյին 3·360, վատատրեն պատրաստել են 298: Մենք հատատարում ենք, որ կառուցողների պատրաստումն անբարենպաստ վիճակի մեջ է գտնվում: Մեր պլանավորող կազմակերպությունները և ԱՍՖՍՀ ԺՏԳՄ պետք է լուրջ ղբաղվեն կառուցողներ պատրաստելու հարցով:

1932 թ. պետք է լինի ժողովրդական տնտեսության վորակական ցուցանիշների բարելավման տարի: 1932 թ. ժողովրդատնտեսական պլանը մենք կարող ենք իրագործել միայն այն դեպքում, յերթե կենսագործենք ընկ. Ստալինի պատմական վեց ցուցումները, յերթե մենք վճռական պայքար մղենք կենսագործելու ՀԿ(բ)Կ կկ հոկտեմբերի 31-ի վորոշումը, յերթե մենք կենսագործելու լինենք Անդրյերկկոմի վորոշումը այն մելիցատուների մասին, վորոնք պատրաստվելու յեն ՀԿ(բ)Կ կկ հոկտեմբերի 31-ի վորոշման կենսագործելու:

Նախագահ.— Խոսք է տրվում ընկ. Նավրուզովին:

Նավրուզով.— Ցես պետք է ասեմ, վոր կոմունալ տնտեսության հարցը Անդրկովկասի մի շարք ջրլաններում չափազանց անբարենպաստ վիճակի մեջ է: Վերցնենք, որինակի համար, Ջիբրայիլի մեր ջրլանը: Այս ջրլանի համար Ադրբեջանի կոմունալ տնտեսության կոմխարհատը մատը մատին չի խփել:

Նատաշրջանը պետք է նչե այս մելիոտը և համապատասխան ցուցմունք տա կոմունալ տնտեսության ժողովրդական կոմիսարիատներին, վոր պետի 1932 թ. կարելի լինի չինել մի փոքրիկ տուն, վորտեղ կարելի լիներ տեղավորել հիմնարկությունները և աշխատավորներին:

Անցնում եմ յերկաթուղային շինարարության: Բագու-Ջուլֆա յերկաթուղին անցնում է մեր ռայոններով մոտավորապես 90—95 կ. տարածության վրա, ունի 6 կիսակայարան, բայց չունի վոչ մի մշտական կայարան ապատարկելու համար Ջիբրայիլի և Դիզակի ռայոնները: Կայարանը գտնվում է Գորադիզում, Ջիբրայիլից 27 վերստ տարածության վրա: Սայլերով հնարավորություն չկա փոխադրել ապրանքները, վորովհետև սայլերը վերցնում են 5—6 փթից վոչ ավելի: Սրա հետևանքով կորպերացիայի համար ստացվող ապրանքները, խորը ձնի պատճառով, ամիսամիսակես ընկած են լինում կայարանում և վաճառվում են հանձնաժողովների կողմից: Սա մի պանցատություն է յերկաթուղային կազմակերպությունների կողմից, վորոնք պետք է նախատեսեյին, թե վորտեղ պետք է կառուցել կայարանը, վոր Ջիբրայիլի և Դիզակի ջրլանի մի մասի բնակչությունը կարողանա ոգտագործել կայարանը ժամանակին ապրանքները տեղ հասցնելու համար:

Շրլանում մեծ նշանակություն ունի կապը, իսկ յեղած կապը անդրջրհեղեղյան կապ է: Մենք մեր բյուջեյից բաց ենք թողել 72·000 ռ., իսկ փոստի ժողկոմատը գործը ձգձգում է և մեր կայարանները մինչև այժմ չունեն վոչ մի կոմունատորի ապարատ, վորով կարելի լինի հաղորդակցություն պահպանել գյուղխորհուրդների հետ:

Այժմ ելեքտրիֆիկացիայի մասին: Գյուղացի — կոլտնտեսները ժողովել եյին 20 հազար ռուբլի և դիմել Ադրբեջանի Հողժողկոմատին խնդրելով բաց թողնել յերկու մոտոր ելեքտրոկայան և գյուղում ջրաղաց չինելու համար: Բայց յերեք ամսվա ընթացքում վոչ մի հետևանքի չհասան: Ցերբ այսպես են վերաբերվում գործին, մենք ելեկտրիֆիկացիայի բնագավառում չենք կարողանա ոգտագործել ստեղծել վոչ մի բեկոտ: Այս գործում չա հաղորդված կազմակերպությունները պետք է ընդառաջ գնան կոլտնտեսություններին, վորպեսզի հնարավորություն տան լուսավորել գյուղը և ջրաղաց չինել:

Նատաշրջանը պետք է հանձնի հանրապետական ԿԳԿ և ԺԿՄ 1932 թ. անցկացնել ելեքտրիֆիկացիա այն ռայոններում, ուր այդ անհրաժեշտ է:

Վերջին հարցը վերաբերում է դպրոցական շինարարությանը: Մեզ մոտ դպրոցում չկան վոչ աթոռ, վոչ սեղաններ, չկա վոչ մի սարքավորում:

1932 թ. մենք ամենից առաջ պետք է ուշադրություն դարձնենք շրջանների, գյուղերի վրա, կոլեկտիվացման բուռն ալիքի հետևանքով, բանբան կի ցանքի ավելանալու հետևանքով, անասնաբուծական կոլտնտեսությունները կազմակերպելու հետևանքով, չեբանաբուծական գործն ընդարձակելու հետևանքով ռայոնները պահանջում են աշխատավորների կադրեր, հարմար շենքեր և աշխատելու հնարավորություն:

Նախագահ.— Խոսքը տրվում է ընկ. Լորդկիպանիձեյին:

Լորդկիպանիձե.— (Խոսում է վրացերեն): Կոոպերացիայի ու կառավարության մեծ ուշադրություն են դարձնում յեռամոնց շրջանների զարգացման վրա, վորոնց թվին հին ժամանակ պատկանում եր և Ալարիստանը:

Ալարիստանը Անդրկովկասյան Ֆեդերացիայի ընդհանուր սիստեմի մեջ ներկայացնում է այժմ խոշոր արդյունաբերություն ունեցող ծաղկող շրջաններից մեկը: Կուլտուրական չինարարության բնագավառում ձեռք են բերված մեծ աջողություններ, գյուղում, կուլտուրական չինարարության բնագավառում ևս ձեռք են բերված խոշոր նվաճումներ: Տեխնիկական մշակույթների զարգացման վրա դարձվում է նույնպես առանձնապես մեծ ուշադրություն:

Ցերբ մենք դիմենք այն շրջանին, վորտեղ բուսնում են ցիտրուսի մրչակույթներ, թեյ և այլն, մենք կտես նենք և այստեղ մեծ նվաճումներ: Ալարիստանի դյուղացին բանել է կոլեկտիվացման ուղին:

Ցես նշում եմ այն խոչընդոտներից, որոնց մենք հասել ենք սոցիալ-տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառում, միայն մի մասը:

Ցես ուզում եմ կանգ առնել կոմունալ շինարարության վրա: Ինչպես դուք գիտեք, Բաքումը այժմ արդեն ներկայացնում է արդյունաբերական կենտրոն, որտեղ կոմունալ տնտեսության հարցերը դրված են ամբողջ սրությամբ: Ամենից առաջ կանալիզացիայի մասին: Կանալիզացիայի համար Բաքումում 1930 թ. պետք է ծախսվեր հինգ միլ. ռուբ.: Փաստորեն բաց է թողնվել 300 հազ. ռուբ., իսկ յուրացրած է ընդամենը 100 հազ. ռուբ.: 1932 թ. տրվում է միմիայն 400 հազ. ռուբ.:

Ցեթե ասիղնանքները կատարվելու լինեն ազատիսի տեմպերով, Բաքումի կանալիզացիան ավարտվելու կե 8 տարուց հետո:

Բազանիքների նկատմամբ Բաքումը չատ թույլ է ապահովված: Բաքումում կեղտոտ ընկերները, անկասկած, դիտեն այդ:

Մի քանի խոսք ավտոբուսային երթևեկ կազմակերպելու մասին Բաքումում: Թեև Աջարիստանում գոյություն ունի Սայուղտրանսի բաժանմունք, բայց նա դեռ ևս չի բավարարում միայն քաղաքի ներսում կատարվող երթևեկը, այլ և մերքաղաքային երթևեկը: Այս նպատակի համար նախատեսում է 50 հազ. ռուբ. և դրանով վերջանում են բոլոր ասիղնանքները: Այս հարցը պետք է վերաքննության կենթարկել, ավելացնելով ասիղնանքները:

Ցես պետք է չշոշափեմ ևս Բաքուի հրշեջ խմբի հարցը: Դուք լավ գիտեք, որ Բաքումը հարմարվում է նավթային քաղաք, իսկ գոյություն ունեցող հրշեջ խումբը բոլորովին չի բավարարում տեխնիկական պահանջներին: Ցես պահանջում եմ, որ այս գործին հատկացվեն համապատասխան միջոցներ:

Այժմ էլեկտրոեներգիայի հարցը: Նախագծով հատկացվում է 65 հազ. ռ.: Ցես կարծում եմ, որ այս 65 հազ. ռուբ. մի դեպքում չենք բավարարելու էլեկտրոեներգիայի մեր կարիքը:

Վերջապես ես կշոշափեմ Ալարիստանի հիդրոէլեկտրակայանների հարցը, որը պետք է ավարտվի 1933 թ.: Ինչպես պարզեց հատուկ հանձնաժողովը, Բաքում քաղաքի ողջ ցանցը բոլորովին չի բավարարում տեխնիկական պահանջներին կայարանը չահագործման անցնելուց հետո: Ցեթե մենք այժմ չսկսենք վերակառուցել այս ամբողջ ցանցը, Ալարիստանի էլեկտրական կայարանը չենք կարող անել, մենք չենք կարողանալու ստանալ էլեկտրոէներգիա: Ցես կարծում եմ, որ այս հանգամանքը պետք է հաշվի առնվի կոնտրոլային թվերում:

Նախագահ: Խոսքը տրվում է ընկ. Համիդ Սուլթանովին:

Սուլթանով: Ընկերներ, ընկ. Մոսաբեկովի ու Փիրումովի զեկուցումներից դուք տեսաք, ինչ հսկայական խնդիրներ են դրված Անդրկովկասի առաջ 1932 թ.: Այս տարին գործադիրում է Անդրկովկասյան Ֆեդերացիայի գոյության տասնամյակին:

Տասը տարվա ընթացքում մենք հսկայական աշխատանքներ ենք ձեռք բերել:

Այս աշխատանքները խորհուրդները ձեռք են բերել, պայքարելով յերկու ճակատի վրա՝ աջ վտանգի, իբրև գլխավոր վտանգի դեմ և ձախ թեքումների դեմ, նույնպես մեծապետական շովինիզմի, իբրև գլխավոր վտանգի դեմ և տեղական նացիոնալ-շովինիստական թեքումների դեմ, անշեղ բարձրացնելով խորհուրդների դերը՝ դարձնելով նրանց կուսակցության գլխավոր դիծն անցկացնելիս:

Բազմի նավթահանների նախաձեռնությամբ, հավերժացնելու համար ԱՍՖՍՀ տասնամյակը, այժմ ծավալվում է ամենալայն սոցիալիստական՝ հնգամյակի ջորդուդ տարվա պլանները կատարելու և գերակատարելու համար:

Մեր առաջ դրած մեծ խնդիրները և մասսաների պատրաստությունը՝ ակտիվ կերպով պայքարել նրանց իրագործման համար, բարձրացրած պահանջներ են ներկայացնում խորհրդնեերի և աշխատավորների ամենալայն զանգվածների առաջ՝ նրանց մասսաները մի րոպե ևս ավելի մոտիկից վերակառուցել, բարձրացնել, ուժեղացնել և ամրապնդել նրանց դերը կուսակցության գլխավոր դիծը գործնականապես անցկացնելիս:

Պետապարատի աշխատանքի բարելավումը, խորհուրդների վարչական մարմինների ամրապնդումը պետք է դառնան Անդրկովկասի բոլոր խորհ. կազմակերպությունների ուշադրության կենտրոնական առարկա: Ինչպես ես ձեզ արդեն ասել եմ, խորհրդային չի նարարության հարցերը լայն կերպով քննարկվելու կեն այն հատուկ խորհրդակցության մեջ, որը մոտակայում գումարելու կե Անդրկենտգործկոմի նախագահությունը: Սակայն, ես անհրաժեշտ եմ համարում ձեր ուշադրությունը դարձնել խորհուրդների աշխատանքի, նրանց վերակառուցման հիմնական մոմենտների վրա, ասելով ևս այն պատճառով, որ խորհուրդների աշխատանքի մեջ, գոյություն ունեցող մեծ նվաճումների և աջողությունների հետ միասին, կան նույնպես մի որոշ հետամնացություն այն բարձրացրած պահանջներից, որ այս ժամանակաշրջանում ներկայացնում է նրանց նկատմամբ: Պետք է աչքի առաջ ունենալ, որ Անդրկովկասում թույլ տված և Հկ(բ)Կ ԿԿ հոկտեմբերի վորոշումով նշած սխալները դեռևս չտվով վերաբերում են խորհուրդների աշխատանքին: Այս պատճառով այս սխալների ուղղումն և պրոլետարիատի դիկտատուրայի մարմինների աշխատանքի ևլ ավելի ամրապնդումը պահանջում են ուժեղացնել պայքարը աջ ոպորտունիստական պրակտիկայի, ինքնահոսի դեմ, պահանջվում է առանձին մասերում արագ և ավելի մեծ հետևանքներով կազմակերպել մասսաները և առաջ տանել նրան ամենաարագ կերպով լուծելու համար տնտեսական և կուլտուրական խնդիրները, պահանջում են պայքարել «ձախլիկ» պրակտիկայի դեմ, որը կազմակերպչական-մասսայական աշխատանքը վերածրենում է վարչականության և «տեխնիկականության» դեկավարության:

Չի կարելի վոչ մի րոպե աչքաթող անել, որ ծավալուն սոցիալիստական հարձակումն առաջ և բերում դասակարգային հակառակորդի կատաղի

ընդհանրությունը, վորն ընդունում է դանազանակերպ ձևեր՝ բացարձակ տերրորի ձև, լիմերլոգիական Ֆրունտում մղվող պայքարի ծածուկ ձև, այն նեխված թեորիայի ձևը, թե սոբանում է պետական մարմինների դերը, թե համատարած կոլեկտիվացման դեպքում նվազում է դյուղխորհուրդների դերը և այլն: Անհրաժեշտ է անխոնա կերպով մերկացնել և ջախջախել այս թեորիանները և պրակտիկան, պետք է բարձրացնել խորհուրդների դասակարգային աշխատությունը, պետք է պայքարել կուլակային ընդհմատրության բացարձակ և ծածկված ձևերի դեմ:

Մեր պետապարատը, անկասկած, չափազանց չատ է բարելավել իր աշխատանքը, բայց այնուամենայնիվ մենք քննադատում և անխնա բայլենվիկորեն քննադատելու ենք, քանի նրա աշխատանքի մեջ տեղի կունենան առանձին սխալներ և թերություններ: Իհարկե մեր ինքնաքննադատությունը վոչ մի կապ չունի դասակարգային թշնամու չարախնդության հետ, այ–«ձախ» ոպորտունիստական բլոկի դրպարտության հետ, վորոնց նպատակն է վարկաբեկել մեր ապարատը, նվազացնել նրա դերն և նշանակությունը:

Բոլոր խորհրդային կազմակերպությունները պետք է միշտ հիշեն լենինի–Մոլոտովի ԽՍՀՄ ԿԳԿ նստաշրջանում ասած խոսքերը, թե «ժամանակն է վերջ տալ ինքնահոսին, անկուբության՝ հիմնարկությունների գործի կազմակերպության նկատմամբ:

Ընկ. Մոլոտովի այս ցուցմունքն առանձնապես մեծ նշանակություն ունի Անդրկովկասի համար, թեև մենք վերջին ժամանակներս տեսնենք վճռական քեկուռ խորհուրդների աշխատանքի մեջ, տեսնենք առանձին շրջանների, վորոնք սկսել են վերակառուցել իրենց աշխատանքի բոլոր ձևերն ու մեթոդները, վորտեղ լայն կերպով կերրառվում է սոցմրցակցությունն դյուղխորհուրդների, կոլտնտեսությունների, բրիգադների մեջ և այլն, ինչպես որինակ Իջևանի շրջանը Հայաստանում, Կասում–Իմամլիլովի շրջանը Ադրբեջանում և Ազբուլաղ–Մանգլիսի շրջանը Վրաստանում և այլն: Մենք ունենք որինակելի դյուղխորհուրդներ, վորտեղ յեռում է խորհրդային աշխատանքը և արագ տեմպերով առաջ է գնում սոցիալիստական շինարարությունը, ինչպես որինակ Ղուբաթլուի շրջանի Վարդիմերի դյուղխորհուրդը, վոր թեև փոքր դյուղխորհուրդ է 176 տնտեսություններից բաղկացած, բայց կարմակերպել է հասարակական անունդ, վորտեղ դյուղամեջ անց են կացրված արվեր և քարի մայթեր, ապտեղ կոլտնտեսություններում վոչ մեկին կատարում են իրենց տնտեսական պլանները, այլև միշտ ոգնում են յետ մնացող հարևան դյուղերին: Այսպիսի դյուղխորհուրդները չատ կան ԱՍՖՍՀ, և տեղերից յեկող ամեն մի ընկեր կպատմի դյուղխորհուրդների աշխատանքի չատ վատ լուն որինակների մասին, բայց միաժամանակ մենք դեռ ևս ունենք չափազանց չատ թերություններ:

Այժմ անցնենք յեմ մի ուրիշ հարցի: Պատրաստ ենք մենք արդյոք ինչպես հարկն է հանդիպելու Անդրկովկասի բայշևիկյան գարունը, վորը վճռելու յե տեխնիկական մշակույթների, բամբակի, թեյի և այլն 1932 թ. պլանների իրագործման աշխատությունները: Լավ են արդյո՞ք համաձայնեցրած առանձին մասերի գործողությունները և լավ են արդյոք դասավորված պետապարատի ուժերը վերևից մինչև ներքև, ապահովված և արդյո՞ք չրջանի վերադաս կազմակերպությունների ոպերատիվ ղեկավարությունն իր ժամանակին: Վնասակար լավատեսություն կլիներ այս հարցերին դրական պատասխան տալ:

Դուք դիտեք, վոր ֆեդերատիվ մի ինների աշխատանքի մեջ գործություն ուներ ավելորդ կենտրոնացում մի չարք հարցերի լուծման գործում, վորը յերբեմն դժվարություն էր անում հանրապետությունները:

Հանրապետական և ֆեդերատիվ ապարատները դեռևս ունեն բյուրոկրատիզմ, ձգձգումների բազմաթիվ տերրեր: Պետապարատները հաճախ վատ են իրար մեջ համաձայնեցնում աշխատանքը, հաճախ դրաղված են առավելապես դեկրետա–դիրեկտիվային ղեկավարությամբ, քան թե ամենօրյա ոդնությամբ տեղերին: Շատ գերատեսչություններ պահպանում են իրենց կապը չրջանների հետ նրանց համար անհասկանալի լեզվով և այս մինատակար սովորությունը չարունակում են չրջանները, թղթակցելով ազգային փոքրամասնություններին պատկանող գյուղխորհուրդների հետ վերջիններիս համար անհասկանալի լեզվով:

Գրությունների և հետագրի միջոցով կիրառվող ղեկավարությունը յերբեմն ուշանում է: Այսպես, որինակ, Հայաստանի ԿԳԿ ապրիլի 12–ի վորոշումը Նոր Բայազետում ստացվել է միայն մայիսի 25–ին. բացի այդ տըրվող ցուցմունքները չատ հաճախ փոխվում են և հաճախ չեն համապատասխանում ոյանի պայմաններին:

Այսպես, Իջևանը կոմնատրատրանքի համար ստացել է 7 զանազան պլան. Ադրբեջանում տարբեր տարածություն ու բնակչություն ունեցող չորս ոյան (Ալիաբադ, Կախի, Բելոքանի, Զաքաթալա) ստացել են միանական առաջադրանք ցանքի տարածության մասին, վորն Ալիաբադի ուժերից վեր առաջադրանք է, յեթե նկատի առնենք նրա տարածությունն և բնակչությունը:

Իջևանն առաջադրանք է ստացել բամբակ ցանելու համար, յերբ նա չունի այս տեսակ մշակույթ. գերատեսչություններից մի քանիսը, ինչպես, որինակ, ֆինժողկոմատն այնքան հաճախ են փոփոխում իրենց առաջադրանքները, վոր գրում են այսպիսի թղթեր՝ «ուղարկում ենք 4–րդ յեռամսյակի վերջնական պլանը, բայց..... յեթե լինեն փոփոխություններ, կհաղորդենք»: Ձեվ այսպիսի պիր նրանք գրում են նոյեմբերի 28–ին, յերբ ոյանի պլանը արդեն իրագործված եր (Իջևան):

Ամեն չատ սխալ և ոյանի պատասխանատու մարմիններին անհամապատասխան առաջադրանքներ և լինում Հայաստանի մասակարարման ժողկոմատի գծով. Նորբայազետին առաջադրանք է տրվում մթերել 250 խոզ, յերբ ոյանում խոզ չկա, Ղարաքլիսայում գործություն չունեցող խորհտնտեսության հատկացով միս մթերելու համար իրար հետևից մի չարք առաջադրանքներ են տվել: Խոզեր մթերելու մասին կոնտրոլային թվերը յերկու անգամ ավել են, քան ոյանը խոզ ունի: Անկանոնություններ են տեղի ունենում աշխատավորներին տեղեր ուղարկելու

գործում: Գերատեսչություններն այդ մասին լրար մեջ համաձայնություն չեն կայացնում, վորի հետևանքով մի քանի շրջաններում մինչևուշ հարցի համար կուտակվում է մի քանի մարդ, ինչպես, որինակ, Ախալցխայում, վորտեղ փոխատուության համար ժողովվել էին 9 մարդ, մինչդեռ ուրիշ ռայոնները կազմակերպության որից չի յեկել և վոչ մի աշխատավոր, վոչ հանրապետություններից, վոչ ֆեդերացիայից (Կասպի շրջան, Բելքաղարի, Զանգեզանի, Կուբաթլիի և այլն): Ցերբեմն շրջաններն են ուղարկվում աշխատավորներ, վորոնք չգիտեն տեղական լեզուն:

Պետապարատի աշխատանքի այս թերությունները վերացնելու համար նախ՝ անհրաժեշտ է, վոր դերատեսչությունները իրար հետ համաձայնության գան ռայոնների ղեկավարության նկատմամբ, բարելավեն պլաններ կազմելու գործը, այս գործին մասնակից անեն ռայոնական աշխատավորներին և բարելավեն հեռագրական կապը:

Ցերկրորդ, անհրաժեշտ է բարձրացնել, ավելացնել ստորադաս ողակների պատասխանատվությունն աշխատանքի համար և պետապարատի աշխատանքներին այնպիսի ուղղություն տալ, վոր նրանք սիստեմատիկաբար ազնության գույց տան ողակարան ղեկավարներին և ոգտագործեն լավագույն ռայոնների նվաճումները, զարգացնեն սոցմրցակցություն տնտեսության տեսակետից միանման շրջանների մեջ:

Ցերորդ, անհրաժեշտ է պլաններն ամենաարագ կերպով հասցնել շրջաններ և պլանները գյուղական հատվածով մշակելու համար կազմակերպել մասսայական աշխատանք, մասնակից անելով այս գործին գյուղացիական ակտիվին:

Զորրորդ, կազմել տեղերի վերահսկողական հրահանգչական հետազոտությունների միասնական պլան, ձգտելով, վոր այդ հետազոտությունները ընդգրկեն առաջին հերթին առաջատար շրջանները և գործնականում գույց տան, թե ինչպես պետք է ուղղել կատարած սխալներն ու թերությունները:

Հինգերորդ, անհրաժեշտ է լավ և պարզորոշ կերպով դնել խորհրդային ինֆորմացիան, վորը պետք է ոգնի շրջաններից աղղանշան ստանալուն և մոծել ոպերատիվ քնորոշումներ ըստ շրջանների:

Այժմ շրջանային ապարատների աշխատանքի թերությունների մասին:

Նրանք բավականաչափ ուշադրություն չեն դարձնում գյուղի մասսայական աշխատանքի ամրապնդման վրա, և հաճախ պատահում են այնպիսի շրջանային աշխատավորներ, վորոնք չեն հասկանում մասսայական աշխատանքի նշանակությունը, բանաժանելով և քննարկելով այդ աշխատանքը անտեսական աշխատանքից առանձին, ինչպես, որինակ, Զուլֆադի շրջանում շրջանային ապարատի աշխատանքը բավականաչափ չի տարբերակված և գործառություն ունեն դիմադրության տարրեր:

Նկատվում է նրանց ղեկավարող կազմի մեծ հոսունություն: Այսպես Ալի-Բայրամլիում մի տարի չի անցել, ինչ փոխվել է շրջգործկոմի 4 նախագահ, նույնն է Դիվիչի, Աստարայի, Ղուբայի ռայոններում և այլն:

Շրջանային կենտրոնների կապը գյուղերի հետ ակնհայտ անբավարար է:

Անդրկենտրոնի հետ հեռախոսային ծանրաբեռնվածությունը անբավարար չափով է իրագործված, այս պատճառով գյուղերը շրջկենտրոնները սառնում են 10–15 որ ուշ, ինչպես, որինակ, Ախալցխայում: Մեզ մոտ չափազանց թույլ է, ի հարկե, գյուղական ողակը:

Մեծ աղբատություն է տիրում շրջաններում: Սոցպատերի ընթացքում Վրաստանի 17 շրջանում հետ են կանչված 1·040 պատվիրակ, հանված է գյուղխորհուրդների 29 նախագահ, ցրված է 5 գյուղխորհուրդ. Ադրբեջանում 8 շրջանների տվյալներով հետ են կանչված 1368 պատվիրակ, հանված են գյուղխորհուրդների 26 նախագահ և 9 քարտուղար, դատի յեն տրված 5 քարտուղար, ցրված է 7 գյուղխորհուրդ: Հայաստանում 12 շրջաններում հետ են կանչված 752 պատվիրակ, հանված է 41 նախագահ, փոխկոմի 4 նախագահ, ավանային ընկերությունների 6 նախագահ, սելկոպների 26 վարչության ղեկավար և ցրված է 18 վարչությունների հանձնաժողովների կազմը:

Շրջանների նկատմամբ անբավարար ուշադրության հետևանքով, քննք ունեցել ենք գյուղխորհրդների կատարյալ անգործության գյուղխորհուրդների ամենորյա աշխատանքի նկատմամբ. որինակ, Լանչխութի շրջանի Նինոչվիլի գյուղխորհուրդն և Ղարայազի ռայոնի Ղարաթափափար գյուղխորհուրդը իրենց ամբողջ գոյության ընթացքում չեն ժողովվել և վոչ մի անգամ:

Կան դեպքեր, յերբ գյուղխորհրդի վերի տարերը սերտ կապված են յղել կուլակների հետ: Որինակ, Ղուբայի շրջանի կյունչավի գյուղխորհուրդը, վորտեղ նախագահության մեջ մտել է կուլակ, իսկ նախագահը կուլակից ժամացույց ընծա ստացել: Նույն շրջանում Ցուղուչի գյուղխորհրդում նախագահը բացարձակ կաշառք եր վերցնում և ամբողջովին գնել է կուլակային գույքը 800 ռ. գումարով: Շամախու Զուվխուրլյուտի գյուղում ամբողջ իշխանությունը գտնվում եր հինգ յեղբորից բաղկացած մի ընտանիքի ձեռքին, ամենահարուստ կուլակի գլխավորությամբ, վորոնք բռնել եյին ղեկավարող պաշտոններ: Մի շարք շրջաններում մեծ չափերով ծածկվել են կուլակներին, հաշվելով նրանց չքավորների ցուցակում, պակասեցրել են ամուր առաջադրանքները, չեն իրագործել այդ առաջադրանքները և այլն, և այլն:

Գյուղխորհուրդները դեռ ևս թույլ են ղեկավարում կոլտնտեսական շարժումը և գյուղխորհրդի չատ աշխատավորներ, ինչպես որինակ Ոգուրդեթ շրջանի խլարբեյի նախագահը ուղղակի հայտարարում եր, վոր նա նույն իսկ չգիտե, վոր գյուղխորհուրդներն իրավունք ունեն քննարկելու և հաստատելու կոլտնտեսությունների արտադրական պլանները:

Շրջանային և գյուղական ողակի աշխատանքի այս թերությունները վերացնելու համար ամենակարճ ժամանակվա ընթացքում, անհրաժեշտ է՝

1. Վերացնել շրջանային ապարատների աշխատանքը, հայտնաբերելու համար, թե ինչ չափերով նրանք սիստեմատիկ ոգնություն են գույց

տալիս գյուղին, կազմակերպում և ղեկավարում գյուղխորհուրդների, սեկցիաների մեջ կիրառվող աջակցության և այլն:

2. Տարբերաչափել և պարզորոշել շրջանային ապարատների աշխատանքն և ապարատների ներսում բարձրացնել յուրաքանչյուր շրջանային ղեկավարի պատասխանատվությունն աշխատանքի վիճակի, գյուղխորհրդի համապատասխան սեկցիային սիստեմատիկ ողնություն ցույց տալու համար, շրջգործկոմի հիմնական բաժիններին կից ստեղծել շրջանային սեկցիաներ և սիստեմատիկ կերպով գումարել գյուղխորհրդների սիստեմատիկ խմբակների և սեկցիաների ղեկավարների շրջանային և ցենթաշրջանային խորհրդակցություններ, համաձուլով նրանց գյուղխորհրդների կենդանի ղեկավարության հիմնական ձև, կազմակերպել գյուղխորհրդի սեկցիաների շրջգործկոմների շրջանային սեկցիաներում և նախագահության ներսում:

3. Սիստեմատիկորեն զբաղվել ռայոնում գյուղական կադրերի նախապատրաստմամբ:

4. Հրաժարվել ինչպես ռայոնի ղեկավարների սիստեմից գյուղխորհուրդների ներսում և անցնել ռայաշխատավորների կազմանը վորոշ գյուղխորհրդների և պարտավորեցնել կցվածներին, վորպեսզի նրանք ողնեն նախագահությանը գյուղխորհրդի մասսայական աշխատանքում բոլոր պլանների կատարման ընթացքում:

5. Ապահովել բոլոր գյուղխորհրդների աշխատանքի ծանրության փոխադրումը կոլխոզների կազմակերպական – տնտեսական և քաղաքական ամրացման ամենօրյա ղեկավարության համար:

6. Գյուղխորհրդի սեկցիաները վերակառուցել ըստ պարզ ճյուղային հատկանշի և ստեղծել գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններ ինչպես կանանց, այնպես էլ ընդհանուր տնտեսության ամեն մի առաջատար ճյուղի համար առանձին:

7. Բոլոր գյուղխորհրդներին կից ձևակերպել չքավորական խմբակներ և ապահովել նրանց մեջ չքավոր կոլխոզնիկների առաջատար դերը:

8. Համապատասխան պետապարատները գյուղխորհրդների լավագույն սեկցիաների աշխատանքի հաշվառքի հիման վրա ամենամոտ ժամանակում ազգային լեզուներով պետք է հրատարակեն ծավալուն կոնսուլտացիաներ գյուղխորհրդի յուրաքանչյուր սեկցիայի աշխատանքի վերաբերյալ:

Ընկերներ, խորհրդների աշխատանքի ամրացումը պահանջում է սբրել մեր ուշադրությունը նաև խորհրդային վարչական կադրերի և նրանց նախապատրաստման հարցի վրա: Այդ կադրերի դրությունը մեզ մոտ չատ նպատակավոր չէ, մանավանդ պետապարատի արմատացման կողմից:

Այսպես, 13 Ֆեդերատիվային մարմինների և միութենական բաժանմունքների ավյարների համաձայն Անդրկովկասում ղեկավար կադրի մեջ կան թուրքեր ընդամենը 7 տոկ., վրացիներ 26 տոկ. և հայեր 21 տոկ., իսկ ազգային փոքրամասնությունները 1 տոկ., ոսկերատիվային կազմի մեջ թուրքեր 2,3 տոկ., վրացիներ 31 տոկ., հայեր 25 տոկ. և ազգ. փոքրամասնություններ 0,4 տոկ.: Մոտավորապես նույն պատկերն և նաև մասնագետների մեջ: Ապարատը լցված է խորթ տարրերով նախկին մարդկանցից: Ազգ. փոքրամասնությունները թույլ են ներկայացված նաև հանրապետական պետապարատներում: Դրա հետ միասին մեզ մոտ խորհ. աղմ. կադրերի նախապատրաստումը չի համապատասխանում աճող պահանջներին, ինչպես քանակական կողմից, այնպես էլ ազգային կազմով: Այդ գործում դեռ չկա անհրաժեշտ սիստեմ և համապատասխան ղեկավարում հանրապետությունների կենտգործկոմների կողմից: Մեր գյուղխորհուրդները բառացի կերպով ծարավի են պատրաստված նախագահների, քարտուղարների և մանավանդ հաշվային աշխատավորների:

Գադրերի դրությունը բարելավելու համար անհրաժեշտ է չտալ կերպով վերանայել խորհ. աղմ. կադրերի նախապատրաստման պերսպեկտիվային պլանը, մեծապես ընդարձակելով այն և ապահովելով աշխատավորներին նախապատրաստումը ՍՍՖՍՀ արմատական ազգությունների, մասսայորեն նախապատրաստելով գյուղական վկաղրերը ռայկենտրոն ներսում նախապատրաստման բոլոր սիստեմների միջոցով:

Նույնիսկ իմ համառոտակի թված խորհուրդների աշխատանքի թերությունները ցույց են տալիս, թե ինչ մեծ աշխատանք ունենք անելու խորհրդների աշխատանքի հետագա ամրացման և վերակառուցման համար:

Ինչի վրա յենք կենտրոնացնելու մեր ուշադրությունը:

Մենք ուշադրությունը կենտրոնացնելու յենք ընկ. Ստալինի 6 պատմական ցուցմունքների հիման վրա, ինչպես արտադրության մեջ, այնպես էլ կոլխոզային և սովխոզային աշխատանքում, ինչպես նաև այդ պայմանների իրացման վրա և խորհրդային աշխատանքում. խորհրդային ապարանքաշրջանառության ծավալման վրա, տնտեսահաշիվը տնտեսական ու կոոպերատիվային աշխատանքի բոլոր ողակների մեջ մտցնելու վրա:

Խորհրդային բոլոր մարմինները իրենց աշխատանքի ծանրության կենտրոնը դեկրետա – դիրեկտիվային չընդունելական ղեկավարությունից փոխադրելու յեն դեպի աշխատանքի սիստեմատիկ ստուգումը, ամենօրյա սիստեմատիկ ողնություն ցույց տալն իրենց ստորադաս ողակներին, վորոնց աշխատանքի համար նրանք պետք և պատասխանատու լինեն առաջին հերթին:

Կատարման ստուգումը վոչ միայն հատկապես նշանակված մարմինների և առանձին ընկերների գործն է, այլ բոլոր խորհրդային աշխատավորների:

Մորհուրդների ամբողջ աշխատանքի վերակառուցումը փաստական կատարումը ստուգելու, տնտեսական ու կուլտուրական շինարարության բոլոր պլանների ժամանակին կատարելն ապահովելու համար՝ խորհրդների ամբողջ աշխատանքի կենտրոնական ողակն է դառնալու: Դա պահանջում է աշխատանքի չերտավորում և կոնկրետացում, ոպերատիվություն, մանյորներ, գործնականում ամեն որ և ամենից ավե-

ւի արդյունավետ կերպով աշխատավորների ամենալայն մասսաներին կազմակերպելու և շարժելու չնորհք, ուշադրություն տալով նրանց ստեղծագործական ակտիվությանը ժամանակին կատարելու և գերակատարելու համար սոցիալիստական շինարարության բոլոր պլանները, նա պահանջում է տիրապետել աշխատանքի բալշևիկյան ձևերին ու մեթոդներին, փոխադրել խորհուրդների ամբողջ աշխատանքի ծանրության կենտրոնը խորհրդների ամբողջ աշխատանքի ստորին ողակների մեջ, պահանջում է դեպի դյուղ տանել առաջավոր ձեռնարկությունների սոցիալիստական մրցակցության և հարվածայնության փորձը, պահանջում է բարձրացնել խորհուրդների դասակարգային դգաստությունը: (Ծափահարություններ:)

Նախագահ· Խոսքը պատկանում է ընկ· Թաղիև Իբրահիմին:

Թաղիև,— Մենք կապի աշխատավորներս միանգամայն համաձայն ենք այն ընկերների հետ, որոնք ասում են, թե կապի տնտեսության մեջ աշխատանքը թույլ է: Այդ աշխատանքը այսուհետև էլ թույլ կլինի, եթե բոլոր կազմակերպությունները չհետաքրքրվեն այդ կապի վիճակով:

Նստաշրջանի առաջ չես պետք է հայտարարեմ, որ մեզ մեր աշխատանքի մեջ վոչ վոք չի ոգնում, վոչ վոք չգիտե այն դրությունը, որի մեջ գտնվում է այդ ապարատը: Սակայն չնայած նրան, որ մեզ վատ են մատակարարում, չնայած, որ մեր կազմակերպությունները չեն հետաքրքրվում կապի գործով, անցած տարում մենք ավելի արինք, քան թե արվել է ամա տարվա ընթացքում: Անցկացրինք 8 հազ· կիլոմետր նոր գիծ, հիմնեցինք 18 հազ· ռադիոկետներ:

Անցած տարում բոլոր ռայոնական կենտրոններում կար հեռախոսային և հեռագրական կապ, որից մենք դուրկ եյինք տարի ու կես սրանից առաջ:

Այդ նույն տարում մեզ աջողվեց գոյություն ունեցող հեռախոսային 7 ցանցերի վրա փոխարինել այսպես կոչված տեղական բատարեյանները կենտրոնականներով, դնել մի շարք նոր հաղորդիչներ 3 միլ· ռուբ· արժողության, որի չնորհիվ մենք կարողացանք վերճատել հեռագրական ապարատի բեռնավորումը 50 տոկոսով: Մեզ մի խայտ հայհոյում են, մենք արժանի չենք, բայց այնուամենայնիվ հարկավոր է ոգնել մեզ, որովհետև վորոչ հարցերում մենք անզոր ենք: Մեր բախտը մեծ մասամբ կախված է կենտրոնացված մասսա կարարումից: Մի րության փոստային ժողկոմատը, որը մեզ խոստացել եր ուղարկել անհրաժեշտ նյութերը, իր խոստումը կատարեց ընդամենը 30—35 տոկոսով, այն էլ մեծ խափանումներով: Դուք լավ գիտեք, որ մենք այստեղ չունենք վոչ կեռեր, վոչ իզոլյատորներ, վոչ այուներ, վոչ յերկաթթել:

Մեր հանրապետական և ռայոնական կազմակերպությունների առանձին պահանջների հիման վրա մենք ներկայացրինք Մոսկվային 1932 թ–ի կապիտալներդրումների պլանը 50 միլ· ռուբ· դումարի: Բայց հատատեղին ընդամենը 12½ միլ·: Մոսկվան այս տարի հատատեց Անդրկովկասի միայն 100 գյուղխորհուրդների հեռախոսացումը, իսկ մեզ մոտ կա 156 ռայոն, իսկ ամեն մի ռայոնում հո մեկ գյուղխորհուրդ չկա՞:

Վերցնենք ավտոմատ կայանները: Միության ժողկոմխորհի վորոշումների հիման վրա Բաղվում 1932 թ· հունվարի 1–ին մենք պետք է սկսեյինք չահագործել ավտոմատ կայանը, իսկ այժմ այդ գործը հետաձգված է մինչև մայիսի 1–ը, բայց յես հայտարարում եմ, վոր մենք մայիսի 1–ին էլ չենք հասցնի:

Յերկրորդ ավտոմատ կայանը Թիֆլիսում խոստացանք ավարտել 1932 թ·, իսկ այժմ Մոսկվան հաղորդում է, վոր այդ կայանը հասիվ կավարտվի 1933 թ·: Նույն դրության մեջ է գտնվում Թիֆլիսի հեռախոսային ցանցը, վորն արդեն 36 տարի յե ինչ գոյություն ունի: Կարելի յե ասել, վոր նա գտնվում է թոքախտի վերջին չրջանում, ամեն րոպե փչանում է: Մենք նկատի ունենք ավտոմատ կայան կառուցել նաև Յերևանում, սակայն Մոսկվան հաղորդում է, վոր այս տարի մենք Յերևանում վոչինչ կառուցել չենք կարող: Մենք յեն թադրում եյինք այս տարի կախել Անդրկովկասում մինիմում 15—20 հազ· կիլոմետր հեռախոսային թել, իսկ Մոսկվան տալիս է ընդամենը 8 հազ· կիլոմետր: Այդ չի բավականա սպասարկելու նույնիսկ սոցիալիստական սեկտորը՝ սովխոզները, ՄՏԿ և կոլխոզները:

Այս տարի մենք յենթադրում եյինք հիմնել 20 հազ· նոր ռադիոկետեր և 3 խոշոր կայան Գյանջայում, Լենինականում և Քութայիսում և տեղական բատարեյան փոխարինել: Բացի այդ, 3 կայաններից Մոսկվան մեզ թույլ չտվեց կենտրոնացնելու տեղական մյուս բատարեյանները: Այս տարի մենք յենթադրում ենք կառուցել 50 նոր ռադիո–հանդուցյալ այնպիսի տեղերում, վորտեղ մինչև այժմ չի յեղել: Այս տարի մենք այդ պետք է ավարտենք:

Մեր ռայոնական աշխատավորները ասում են, թե նրանք մեզ վող են տալիս, բայց այդ մեզ չի բավարարում: Մեզ հարկավոր են չինանյութեր, իսկ այդ մեզ վոչ վոք չի տալիս: Մեր մատակարարումը կախված է մեծ մասամբ Մոսկվայից: Մենք հուսով ենք, վոր նստաշրջանը իր բանաձևերում կինչի, վոր կապի տնտեսության տեմպերը 10 տարվա ընթացքում խակապես յետ են մնում խորհչինարարության տեմպերից:

Մենք համոզեցուցիչ կերպով խընդրում ենք ներկա գտնվող ընկերներին, մանավանդ ռայոնական ընկերներին, վորպեսզի նրանք ամենօրյա աշխատանքի մեջ հետաքրքրվեն կապի տնտեսության վիճակով: Նրանք պետք է ստեղծեն հարմար պայմաններ, վորոնք հարկավոր են կապի աշխատավորների աշխատանքի համար: Չի կարելի միջնակարգ կրթություն ունեցող հեռագրողուհուն, վոր աշխատում է, որինակ, Ղարադոնլուի ռայոնում 70° չոգի մեջ, վճարել ամսական 70 ռուբ·: Նա իհարկե այնտեղ չի մնա, չունենալով չենք, սըննույնդ և անհրաժեշտ պայմաններ: Չի կարելի ասել, վոր վերջին տարներս կապի տնտեսության դրությունը չի բարելավվել: Վորոշ բարելավումներ ունենք, բայց նրանք չեն համապատասխանում մեր չինարարության տեմպերին: Յեթե հետա-

դայում մեր բոլոր ղեկավարները բոլոր համագումարներում և կոնֆերենցիաներում հետաքրքրվեն այդ հարցով և գործնականապես խոսպես մեզ ոգնեն, հավատացնում եմ ձեզ, վոր մենք կարող ենք մոտակա տարիներում բարելավել վիպափ տնտեսության կացությունը և տալ նրան այլ ուղղություն:

Ընդամեն այն բանին, վոր կապը ժողովրդական տնտեսության կարևորագույն տարրն է և հանդիսանում, մեր մամուլը կապի հարցերին չատ քիչ ուշադրություն է հատկացնում: Մենք մինչև այժմ չենք կարողացել մոբիլիզացիայի ենթարկել հասարակական վարձիքը այդ հարցի շուրջը:

Ցես հուսով եմ, վոր նստաշրջանը չի սահմանափակվի միայն իմ ելույթով. ես խնդրում եմ, վոր հետևյալ նստաշրջանում դրվի հատուկ զեկուցում կապի ժողկոմատի աշխատանքի վերաբերյալ: Այն ժամանակ մենք կը կարողանանք ծանոթացնել ձեզ այն դրության, վորի մեջ գտնվում է մեր կապի տնտեսությունը: (Ծափահարություններ):

Նախագահ.— Խոսքը տրվում է ընկ. Ձելիձեին:

Ձելիձե.— Վերջին տարիներս հանքային արդյունաբերությունը սկսել է խիստ զարգանալ: 4 տարի սրանից առաջ տարեկան ընդհանուր արտադրանքը Անդրկովկասի հանքային խմբակում կազմում էր 2800 հազ. ռուբ., այս տարի մենք պետք է տանք 32 մլն. ռուբ. արտադրանք: Անցյալ տարի արդյունաբերության այս խմբակում մենք ունեցանք մոտ 17 մլն. ռուբլի կապիտալներդրումներ: Այս տարի դժբախտաբար այս գումարը զգալիորեն իջեցվել է: Ցես հարցը դնում եմ մի քանի օբյեկտների նկատմամբ, վոր մեզ հաջողվեց նախապատրաստել 1931 թ. և վորոնք այս տարի ոչ մի հնարավորություն չունեն իրենց հետագա զարգացման համար:

Վորպեսզի հանքային խմբակը նախապատրաստվի և կարողանա տալ արտադրանք, հարկավոր են համապատասխան կապիտալներդրումներ: 1931 թ. մենք նախապատրաստեցինք մի շարք հետաքրքիր օբյեկտներ, վորոնք առայժ չկային ոչ միայն մեզ մոտ Անդրկովկասում, այլ և ամբողջ Միության մեջ:

Որինակ, տալկը, վորը գտնվում է Հարտավ-Ոսեթիայում: Այդ հանքատեղը հետո մենք դանք նրա մեջ տեղերի պղպեղի բովանդակություն, մի նույթ, վորը կտա ամենաարժեքավոր արտադրանքը ելեկտրատեխնիկական նպատակների համար: Դժբախտաբար այս տարի տալկի համար հատկացված է ընդամենը 250 հազ., մի չնչին գումար, վորը չի կարողանա նրան հետագա զարգացման համար:

Հետևյալ օբյեկտը, վոր մենք մշակեցինք (նրա տեղը Ոզուրգեթ, Ոկեցինք պղպեղը), անվանեցինք ասկան նիտ: Գիտական-հետախուզական աշխատանքը արդեն կատարվել է և մենք ստացել ենք վայրկյան արդյունքներ: Մենք մեզ մոտ ստացանք ավելի չատ այն արտադրանքը, վոր մինչև այժմ ներմուծում էինք Գերմանիայից: Այդ արտադրանքը հսկայական նշանակություն ունի նավթային և ճարպային արդյունաբերության համար և չնայած այդ բոլորին այս տարի այդ

օբյեկտը բոլորովին ջնջվել է: Ցես կարծում եմ, վոր դրա վրա հարկավոր է լուրջ ուշադրություն դարձնել, վորպեսզի չստացվի դժբախտության պատմությունը:

Գեղաբեկում 10 տարվա ընթացքում գործություն ուներ պղնձաձուլարան: Գեղաբեկը վակվեց. ասում էին թե պաչար չկա, բայց մենք վորոշեցինք գտնել այդ պաչարը, միևնույն ժամանակ կացնել հետախուզումներ և գտանք 450 հազ. տոն առաջնակարգ կալչեդան, իսկ Գեղաբեկը կենթադրում են լիովին լիկվիդացիայի ենթարկել:

Այժմ դարձյալ մի հարց, վորը մեծ նշանակություն ունի հանքային արդյունաբերության զարգացման համար: Հանրապետությունները ոչ մեկը չի կարող պարծենալ իր ճանապարհների վատությամբ: Մենք ստացանք մեքենաներ արտադրանքը փոխադրելու համար և կարելի չէ բարբաոսություն համարել, յերբ մենք նորագույն մեքենաները ջարդում ենք մեր ճանապարհորդների փոսերում:

Անցյալ տարի մենք մեր միջոցներից բաց թողինք 1½ մլն. ռուբլուց ավելի մեր ոլայնին անհրաժեշտ կըպած ճանապարհները շինելու համար: Ցեթե ճանապարհը մի կողմից և համապատասխան կազմակերպությունները տեղերում մյուս կողմից չոզնեն մեզ այս հարցում, պարզ բան է՝ մեր արտադրանքը կմնա լեռներում: Ճանապարհների շինարարության վրա պետք է խիստ ուշադրություն դարձնել, այլապես ապագայում դրությունը կմնա անփոփոխ:

Նախագահ.— Խոսքը պատկանում է ընկ. Կարաևին՝ Հարավ-Ոսեթիայից:

Կարաև.— Ընկ. Մուսաբեկովը չատ քիչ բան ասեց այնպիսի մի վոքր յերկրի մասին, ինչպիսին է Հարավ-Ոսեթիան: Այդ շրջանը կենտրոնից և կուլտուրայից չատ է կտրված: Ցոսք յեղավ յերկաթգիծ անց կացնելու մասին, անցկացնելով Ճյուղ Գորիից. մենք ուրախացել եյինք, բայց դեռ վոչինչ չի արվել: Հարկավոր է ուշադրություն դարձնել, վորովհետև կուլտուրական կենտրոնը առանց յերկաթուղու, գոյություն ունենալ չի կարող: Մենք ունենք մարմար, տալկ, բայց նրանք մշակվում են ամենապրիմիտիվ ձևերով:

Ցես ուզում եմ դարձյալ կանգ առնել մի կարևոր հարցի վրա, այն է ցինկի և արճճի հանքատեղերի վրա Կուտաիսում: Կուտաիսի արճճի և ցինկի հանքատեղերը Անդրկովկասում ամենահարուստն են: Մոտավոր պաչարը կազմում է 150·000 տոն: Անհրաժեշտ է այժմանից ձեռնարկել հանքերի կազմակերպմանը Կուտաիսում: Ուստի անհրաժեշտ է նախատեսնել 1932 թ. կոնտրոլային թվերում 600·000 ռուբլի հետախուզումները ավարտելու համար:

Անդրկենտրոնագործիմի նստաշրջանը մի քանի անգամ պետք է հրահանգի, վոր Զակգլավմետը ապահովելու յև Կուտաիսի հետախուզումը համապատասխան սարքավորումով, յերբեք վոչ քիչ 1931 թ. հետախուզումը:

Բացի այդ, 1932 թ. պետք է նախատեսել վորոշ գումար, մոտ մեկ միլիոն ռուբլի չահագործման նախնական նախապատրաստական աշխա-

տանքների համար, վորպեսզի 1933 թ. սկզբում կարելի լինի լրիվ ծավալել հանքերի կամմակերպումը:

Նախագահ. — Խոսքը պատկանում է ընկ. Սարգսյան Անահիտին:

Սարգսյան: — Ընկերնե՛ր, ես ուզում եմ նստաշրջանի ուշադրությունը սրել հանքային աշխատանքների վրա: 1931 թ. Զագեշրայի աշխատանքը պատշաճ բարձրության վրա չեր դրված, և յերկրաբանական — հետախուզական աշխատանքը նույնպես չեր կատարվում ինչպես հարկավոր է: Դրա հետևանքով աջ ափորտունիստները նույնիսկ համարձակվեցին հայտարարել, թե Ալահվերդիի հանքերում հանածոյի պաշար չկա և այդ հանքերում հարկավոր է դադարեցնել պղնձի հանումը: Պետք է ասել, վոր այդ տը բամադրություններին և հայտարարություններին ցույց տրվեց համապատասխան դիմադրություն, բայց և այնպես ուզում եմ ասել, վոր 1932 թ. յերկրաբանական–հետախուզական աշխատանքը պետք է դնել համապատասխան բարձրության վրա և այդ միջոցով բարելավել այդ աշխատանքը այդ ճյուղում:

Զուգընթաց կերպով այս տարի պետք է իրագործել ՀԿ(բ)Կ կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումը պղնձի արդյունաբերության Ղափանի և Ալահվերդիի հանքերում սարքավորելու և վերակառուցման յենթարկելու վերաբերյալ: Դրան զուգընթաց, առաջիկա թվերում նախատեսված են լինելու աշխատանքի արտադրողականության մեքենայացման և բարձրացման հարցերը:

Հարկավոր է ասել, վոր աշխատանքի արտադրողականությունը պղնձի արդյունաբերության մեջ դեռ չի դրված պատշաճ բարձրության վրա և յետ ե մնում աշխատավարձի մակարդակից:

Մեր խնդիրն է՝ բարձրացնել առաջատար ճյուղերի միջին աշխատավարձը և զուգընթաց կերպով սրել ուշադրությունն այդ ճյուղերում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու վրա:

Հնգամյակի ավարտական տարում պետք է հատուկ ուշադրություն դարձնել տրանսպորտի Անդրկովկասում բարձրացնելու վրա: Վերջապես՝ հարկավոր է վերացնել բոլոր թերությունները և ճեղքերը, վորոնք արգելք են հանդիսանում տրանսպորտի աշխատանքը բարձրացնելուն:

Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել արտադրանքի վորակի վրա, վորովհետև այս տեսակետից մենք մի քիչ հետ ե՛նք մնացել: Ֆաբրիկատիվ մենք մենք գերակատարեցինք պլանը, մենք առաջ ենք գնում բալշևիկյան տեմպերով, բայց մենք չենք կարող տալ համապատասխան վորակական ցուցանիշներ: Մենք պետք է քանակը բազմապատկենք վորակով, այլապես՝ յետ չմնալ ժողովրդական տնտեսության քանակական ցուցանիշների տեմպերից և դրա հետ միասին բարձրացնենք նաև ժողովրդական տնտեսության արտադրանքի վորակը:

1932 թ. առաջիկ թվերը կենտրոնական կազմակերպությունների մանավանդ Անդրկովկասյան կազմակերպություններում, քննարկ հետո, մենք այդ թվերը պետք է լրջացնենք հանրապետական ռայոնական և գյուղական առաջին մարմինները: Անցյալ տարվա առաջատարը ցույց տվեց, վոր մեր գյուղխորհուրդներում դեռ շատ բացեր կան: Ուստի Անդրկենտգործկոմի նստաշրջանը, նրա նախագահության և հանրապետական բոլոր կենտ դործկոմները և շրջգործկոմները լուրջ ուշադրություն են դարձնելու գյուղատնտեսական ապարատների ամրացման վրա: Յես նկատի ունեմ առաջին հերթի նախապատրաստումը. մենք ի հարկե կչարունակենք վերից ոգնություն ուղարկել մեր առաջին մարմիններին ընդհանուր աշխատանք անցկացնելու համար: Բայց և այնպես այս առաջին առաջիկ թվերում մենք պետք է հատուկ տեղ հատկացնենք առաջին պատի տեղական կազմերի նախապատրաստմանը և առաջ քաշմանը: Սեմինարների և կարճ ժամկետային դասընթացքների միջոցով մենք պետք է նախապատրաստենք և վերապատրաստենք գյուղական կազմը, վորպեսզի հենվենք նրա վրա 1932 թ. առաջիկ թվերի կատարման և գերակատարման համար:

Նախագահ: — Խոսքը պատկանում է ընկ. Թարխվերդիևին (Բագխարհուրդ):

Թարխվերդիև: — Ներկայումս քաղաքային տնտեսության զարգացումը մեր մեր առաջ դրված կարևորագույն խնդիրներից մեկն է և հանդիսանում:

Քաղաքային տնտեսության կարևորագույն տեղամասերից մեկն ընդհանրապես և Բագու քաղաքի համար մասնավորապես տրամվայի ցանցի զարգացումն է: Տրամվայը 1931 թ. կատարեց իր ծրագիրը: 1932 թ. այդ ծրագիրը յենթադրվում է ընդարձակել և քաղաքը կապել ամառանոցային շրջանների հետ: Այս հարցը մենք պետք է կապենք քաղաքային տնտեսության զարգացման հետ:

Ապշերոնյան թերակղզին ունի սպեցիֆիկ պայմաններ: Յեթե ամռանը

դուք ուզենաք անց կացնել վորևե աշխատանք՝ իսկույն Ազնեվաի յերկրաբանական բաժանմունքի կողմից կլսեք պահանջներ, թե այստեղ կա նավթ, և վոչինչ չի կարելի անել: Բայց մենք չենք դադարեցնում Բագու քաղաքի և նրա շրջանների բանվորների համար կուլտուրայի և հանգստի պարկ ստեղծելու աշխատանքը, վորովհետև այդ ամբողջ չինարարությունը կարող է ոգտագործվել նաև արդյունաբերության համար, վորի համար պետք է ունենանք բնակարաններ, տներ, ճանապարհներ և բոլոր անհրաժեշտ հարմարություններ:

Այնուհետև մեզ մոտ զարգանում է ավտոտրանսպորտը, վորը Բագու քաղաքի համար դարձյալ անհրաժեշտ է: Լավ ավտոտրանսպորտ ունենալու համար մենք պետք է ունենանք լավ ճանապարհներ: Բազմի խորհուրդը դրան այդ պատճառով ուշք է դարձնում Բագու քաղաքի և նրա շրջանների փողոցները ասֆալտով ծածկելու վրա:

Ի հարկե, դա մեզ նժան չի նստում և այդ գործում մեզ պետք է ոգնեն տնտեսական կազմակերպությունները և մանավանդ Ազնեվը:

Բազմի խորհրդի առաջ դրված է մի ահագին խնդիր՝ նոր ջրմուղի հետախուզումը և կառուցումը: Յեթե մենք կարողանանք անցկացնել յերկրորդ ջրմուղը՝ Բագուն ապահովված կլինի մի կողմից կանաչով, իսկ մյուս կողմից՝ ջրով յերկար տարիներ, արդյունաբերության և բնակչության կարիքների համար:

Գոյություն ունի Միության կուսակցական և խորհրդային մարմինների

րի վորոշումը Բագվի խորհրդի գեկուց
ման առթիվ տեղական նշանակու-
թյան արդյունաբերությունը քաղա-
քային խորհրդներին հանձնելու վե-
րաբերյալ: Այդ հանձնումը մինչև
այժմ ուշանում է: Ինչո՞ւ: Վորովհե-
տև Ադրբեջանի ժողտնտխորհը ձըգ-
ձգում է այդ հարցը:

Հետևյալ հարցը բնակարանային և
կոմունալ շինարարությունն է: Բա-
զում, ինչպես գիտեք, բնակարաննե-
րի մեծ կարիք ունի: Բնակ. շինարա-
րության մի քանի օբյեկտներ չեն ա-
վարտվել միայն այն պատճառով,
վոր չկան շինանյութեր, դլխավորա-
պես՝ փայտ, յերկաթ, խողովակներ
և այլն:

Ինչպե՞ս են կատարվում կնքված
պայմանագրերը: Ամեն մի կառուցող
տնտեսական կազմակերպություն,
նյութերի մատակարարման համար
պետք է պայմանագիր կնքեր Ազնաթ
տորգի կամ մատակարարող մյուս
կազմակերպությունների հետ: Մա-
տակարարող կազմակերպություն-
ները համաչափ կերպով մատակարա
րելու եյին շինարարության բոլոր
օբյեկտները, բայց ինչ ենք տեսնում:
Կնքում են պայմանագիր, բայց պայ-
մանագիրը չի կատարվում և նյութե-
րը բաշխվում են վոչ ըստ վորոշ պլա
նի:

Անցնում եմ վերջին հարցին: Ցեղլա
խում մենք ունենք գետային տրանս-
պորտ: Բայց ինչ ենք տեսնում: Բամ-
բակը 70–80 վերստ տանում են սայլե
րով կամ ձիերով, կամ ուղտերով
մինչև գնման կետը կամ գնման կե-
տից մինչև յերկաթգիծը: Այնտեղ հար
կավոր է կատուցել վերահան մեքենա՝
գետային տրանսպորտը զարգացնելու
համար: Ցեթե մենք այդ անցկացնենք,
բոլոր հեռավոր դյուղերը կարող են
մատակարարվել արդյունաբերական
ապրանքներով կամ թե կարելի կլի-
նի նրանց հումքը՝ բամբակը, մե-
տաքսը և այլն արագ և եժան վոխա-
դրել գետով դեպի Բաքու և ուրիշ
տեղեր:

Նախագահ: — Խոսքը տրվում է
ընկ. Ռուխադեյին:

Ռուխադե: — Մեր բրդի արդյու-
նաբերությունը սկսել է ուժեղ տեմ-
պերով զարգանալ Անդրկովկասի խոր
հրդայնացումից հետո: Այս արդյու-
նաբերությունը արտադրում է լայն
սպառման ապրանքներ: Նա 1932 թ.
տալու յե 16 մլն. ռուբ. արտադրանք
և պլանի համաձայն կտա մոտ 4 մլն.
ռուբլու չահ: Վոչխարաբուծության
այժմյան դրության և նրա զարգաց-
ման նախատեսվող տեմպերի ժամանակ
այդ արդյունաբերության դրությունն
այնքան էլ լավ չէ:

Շահագրգռված կազմակերպու-
թյունների մեջ պետք է լինի համա-
ձայնություն, վորպեսզի վոչխարա-
բուծության զարգացումը կապված լի-
նի արդյունաբերության պահանջների
հետ: Սակայն, մինչև այժմ մենք այդ
հարցը չենք կարողանում կարգավո-
րել: Ցես կարծում եմ, վոր նատա-
չըլյանն իր վորոշման մեջ պետք է ընդ
գծի նման դրության անհանդուրժե-
լիությունը: Հողժողկոմատը պետք է
զբաղվի այդ հարցով, վորովհետև
շատ կարելի յե, վոր վոչխարա-
բուծությունը հողժողկոմատի պլանի
համաձայն զարգանում է բարակ բրդի
գծով, իսկ արդյունաբերության
գծով զարգանում է կոշտ բուրդը:

Ցերրորդ հարցը՝ այդ այն է, թե
ինչ տեսակի վոչխարներ ենք տարա-

ծելու Անդրկովկասում: Տնտեսավար-
ների և արդյունաբերողների կարծի-
քով մեր վոչխարաբուծությունը պետք
է զարգանա անդլիական տեսակների
գծով: Ցեթե նուշխակ կրճատենք ա-
նասունների քանակը, բայց մտցնենք
անդլիական տեսակներ, վորոնք տա-
վիս են կոշտ բուրդ, դա կապահովի
ԱԱՖԽՀ արդյունաբերությունը և
հնարավորություն կտա արտահանել
30–40 տոկոսը դեպի մեր կենտրոնա-
կան ոտյոնները:

4-րդ հարցը արտատեղերի հարցն
է: Ներկայումս Անդրկովկասի լավա-
գույն շրջանները վեր են ածվում հա-
մատարած բամբակային ոտյոնների,
սակայն այդ շրջանների մեջ մասամբ
ընկել են լավագույն արոտատեղերը:
Ուստի հարկավոր է կատարելագործման
առաջ դնել ուրիշ շրջաններ գտնելու,
նոր մշակույթներ մտցնելու, նոր խո-
տացանման հարցը և այլն: Նստաշրը
ջանը պետք է հաշվի առնի նաև այս
մոմենտը:

Բնակարանային շինարարության վը
րա անպայման ահագին ուշադրու-
թյուն է դարձվում: Ցես պետք է հայ
տարարեմ նստաշրջանին, վոր տեքս-
տիլ արդյունաբերությունը վոչ մի կո
պեկ չի ստացել բնակարանային շի-
նարարության համար: Համապատաս-
խան բնակարաններ չունենալու պատ-
ճառով մենք կունենանք բանուժի մեծ
հոսունություն:

Բնակարանային շինարարության վը
րա ծախսվում են ահագին միջոցներ,
սակայն շինարարությունը չի կատար
վում ինչպես հարկն է: Թիֆլիսում
ամեն տեղ գանազան տեսակ տներ են
կատուցվում: Այդ ծախսումներից մենք
էֆեկտ չենք ստանում: Ուստի անհրա
ժեշտ է ստանդարտացիայի յենթար
կել այդ աշխատանքը, կենտրոնացնել
հատուկ կազմակերպ: Ձեռքում, վոր-
պեսզի բոլորը չզբաղվեն դրանով:
Գուցե տնտեսավարները չհամաձայն-
վեն ինձ հետ, սակայն հարկավոր է
առանձին տնտեսավարներին թող թողն
վող միջոցները կենտրոնացնել մի
կազմակերպության ձեռքում, վորը
զբաղվելու յե բացառապես բնակելի
տների շինարարությամբ: Նուշխը
պետք է անել նաև վառելիքի ոտաց-
ման վերաբերյալ: Վառելիքի այժմյան
դեֆիցիտի ժամանակ, մանավանդ
փայտամթերումների դժվարության
պայմաններում լավագույն տները,
լավագույն բնակարանները ծուխ են
անում, վորովհետև դրվում են յեր-
կաթե վառարաններ, լինում են հրդեհ
ներ, բացակայում է առողջապահու-
թյունը: Այդ տեսակետից մենք պետք
է վերահսկողություն: Նստաշրջանը ան
շուշտ պետք է ուշադրություն դարձնի
դրա վրա իր վորոշման մեջ:

Մատակարարման հարցը մեծ տեղ
է գրավում պլանի կատարման գոր-
ծում: Անդրկենտգործկոմի նախագա-
հության հանձնարարությամբ ինձ
վիճակվեց հետազոտել Վրաստանի
շրջաններից մեկը: Ամբողջապես ոտ-
յոնում գինեգործության, չերամա-
պահության և տնտեսության մյուս
ճյուղերի զարգացման տեսակետից
դրանքից սպառումով զբաղվող մի քա-
նի կազմակերպություններ հանդիսավոր
գործերով եյին զբաղված: Որինակ,
չերամապահությամբ զբաղվող գյու-
ղացիներից վերցնում եյին բուժիչը և
խոստանում եյին արդյունաբերական
ապրանքներ: Գյուղում չերամապա-
հությամբ զբաղվում են մեծ մասամբ
կանայք, իսկ Գրուզչիկը կամ այն

կազմակերպությունը, որը զբաղված եր այդ մթերումներով, տվեց արդյունաբերական ապրանքներից խոզանակներ, որոնք անհրաժեշտ են ձիերը մաքրելու համար: Ձես ինքս տեսել եմ այդ յերկաթե խոզանակները, որոնց առթիվ մեծ անախորժությունները յեղան: Ամբողջ տարով ուշացնում են փողը, խոտանում են ապրանքները և փոխանակ մանուֆակտուրայի, կոշիկների և սապոնի՝ բերում են խոզանակներ, վակս և այլն: ԲԳՏ-ն պետք է զբաղվի այդ գործով, որովհետև մի թշնամի մեզ այնքան վնաս չի բերում, որքան այդ կազմակերպությունները, չնորհիվ այն բանի, որ նրանք այդպես են վերաբերվում մատակարարման գործին: Նույնը կարելի յե ասել այն կազմակերպության մասին, որը զբաղվում եր գինու գնումով, — այդ Մարանին է:

Հետևյալ վրդովեցուցիչ վաստը — այդ աշխատակիցների հրապարակն է: Աշխատողմատը պետք է հատուկ ուշադրություն դարձնի դրա վրա: Այդ բանին պետք է վերջ տալ անկախ այն բանից, թե պետական որ կազմակերպությունն է այդ անում, հարկավոր է հարվածել նրան:

Նախագահ: — Վերջին ճառախոսը ընկ. Ախունդովն է:

Ախունդով: — 1932 թ., երբ հնգամյակի ավարտական տարվա, պլանի կատարումը հնարավոր է մեր բոլոր ուժերի մաքսիմալ մոբիլիզացիայի պայմանով:

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր շղթայում ազգային հանրապետությունները աճում և ամրանում են: Մեր իշխանության գործը աշող կերպով անց է կացնում իր միջոցառումները, որոնց նպատակն է ապահովել ազգությունների միջև այն անհավասարության ամենատարագ լիկվիդացիան, որը գոյություն ուներ նախահեղափոխության չրջանում: Կատարվում են Լենինի վանդնները Անդրֆեդերացիայի վերաբերյալ, և վերջինս հետամնաց ազգարարային յերկրից վեր է ածվում արդյունաբերական – ագրարային յերկրի, որը հարուստ է տեխնիկական մշակույթներով:

Այս բոլորը վկայում է մեր ազգային քաղաքականության ճշտության մասին և անշուշտ հարվածում է մուսավաթիստներին, դաշնակներին ու մենշևիկներին:

Սոցիալիստական աշխատավի զարգացման ուղու վրա մենք հանդիպում ենք մարդկանց, որոնք անպատման ուզում են դեպի յետ դարձնել պատմության անիվը: Կան մարդիկ, որոնք իբրեց և ուրիշներին կողմնորոշում են դեպի ավելի ցածր տեմպերը: Գաղտնիք չե, որ նացիոնալ – ռևիզիոնիստական տարրերը ձգտում եյին տեմպերի իջեցմանը, մանավանդ նավթի և բամբակի վերաբերյալ: Այդ թեքումների դեմ մղվող պայքարն անշուշտ մեր կարևորագույն խնդիրն է հանդիսանում: Տեմպերի հարցը վճռական նշանակություն ունի ներկա ժամանակաշրջանի համար: Մեր Ֆեդերացիան աճում և ամրանում է հենց այդ առանձին նացիոնալ-իստական, աջ-ոտրոտական թեքումների դեմ մղվող պայքարում: Այդ մեծագույն աշխատանքի պրոցեսում մենք անշուշտ ունեցել ենք նաև սխալներ: Այդ սխալները արտահայտվել են ազգային և գյուղացիական հարցերում: Այդ սխալների մասին պարզ և վորոշակի ա-

ված է ՀԿ(բ)Կ կենտկոմի հոկտեմբերի 31-ի հայտնի վորոշման մեջ:

Մեր աշխատանքի պրակտիկայում մենք բավարար չափով հաշվի չառանք Անդրկովկասյան գյուղի առանձնահատկությունները: Անդրկենտգործկոմի նատուրջյանը ստորին խորհրդային ապարատի ամբողջ ուշադրությունը պետք է դարձնի մոտ ապագայում այն սխալների ուղղման կողմը, որոնք տեղի ունեցան գյուղացիական և ազգային հարցերում: Այժմ այդ սխալները ուղղվում են մեր կուսակցության ղեկավարությամբ, բայց մենք ել ավելի մեծ չափով պետք է մոբիլիզացիայի յենթարկենք մեր խորհուրդները, որովհետև այդ սխալների մեծ բաժինն ընկնում է այդ խորհուրդների վրա: Ստորին ապարատում մենք անշուշտ ունենք աշխատանքի և դրական և բացասական կողմեր: Յեթե մենք 3–4 տարի առաջ չունեյինք վոչ մի օրինակելի գյուղխորհուրդ՝ այժմ մենք ունենք հարյուրներով: Այն պատենցիալ ուժը, որ դրված է խորհուրդների մեջ, պետք է գործի դրվի, որպեսզի ամեն նամոտ ժամանակում ուղղվեն այդ սխալները և այդ սխալների ուղղման վրա պատրաստվեն և ամրանան մեր խորհուրդները: Գաղտնիք չե, որ կապիտալիստական տարրերը փորձում են ոգտագործել մեր սխալները ազգային հարցում, փորձում են թուլացնել Անդրֆեդերացիայի քաղաքական – տնտեսական հզորությունը, ուստի մենք պետք է խիստ աչալուրջ լինենք, ինչպես յերբեք:

Այժմ պետապարատի մասին: Մեր պետապարատը անշուշտ դեռ բավարար չափով չի գործել իր յերեսը դեպի այն ահագին խնդիրների կատարումը, որոնք դրված են մեր առաջ: Մեզ մոտ կան մարդիկ, որոնք պետապարատի բարելավման հարցերը համարում են տեխնիկական գրասենեկային հարց, մոռանալով Լենինի հայտնի ցուցմունքը պետապարատի վերաբերյալ:

Մենք ունենք ահագին քանակությամբ վաստեր, յերը ժողովրդական անտեսությունը պլանավորվում է խայտառակ ձևով, յերբ 50·000 փութ ցորեն են բերում տավարով, իսկական պահանջի՝ 8·000 փթի դիմաց: Ստեղծվում է հանդիսական վոխադրում. ծանրաբեռնվում է տրանսպորտը և այլն: Այլանդակ պլանավորման նման վաստեր մենք շատ ունենք: Նույնը մենք ունենք նաև արդյունաբերական ապրանքների մատակարարման գործում: Մատակարարման պլանները և մեր բոլոր միջոցառումները գյուղում պետք է յենթարկել փորձարկի՝ գյուղացիների հետ:

Հետևյալ հարցը գաստակարգային պայքարի մասին է: Մենք ունենք ահագին թվով վաստեր, որոնք վկայում են, որ առանձին դեպքերում կուլակային տնտեսության վրա կատարվող թուլ ճնշումն ե հենց, որ խանգարում է կուլհազների տնտեսական-քաղաքական ամրացմանը: Մեր առաջ դրված է կուլակային տնտեսության վրա ճնշումը հետապատում ուժեղացնելու հարցը: Հետևյալ հարցը մեր կադրերի հարցն է: Ձես նայեցի Պետպլանի առուգիչ թվերը և պետք է ասեմ, որ այնտեղ բավարար ուշադրություն չի հատկացվել խորհրդային շինարարության կադրերը նախապատրաստման և վերապատրաստման հարցին: Մենք այժմ խորհուրդների առաջ դնում ենք ահագին խնդիր

ներ, վորոնք չեն կարող կատարվել գյուղխորհուրդների կխագրագետ և անդրագետ նախագահների կողմից: Ուստի պետք է մեծացվեն խորհրդային կադրերի նախապատրաստման և վերապատրաստման դրամահատկացումները:

Ձեզ ուզում եմ նստաշրջանի ուշադրությունը հրավիրել մի չափազանց կարևոր հանգամանքի վրա: Մենք ունենք ահագին թվով ԲՈՒՀ-եր և ԲՏՈՒՀ-ներ, վորոնք գյուղի համար բաց են թողնում բժիշկներ, ինժեներներ և այլն: Այդ ԲՈՒՀ-երում և ԲՏՈՒՀ-ներում խորհրդային շինարարության գաղափարախոսության սիստեմը այնքան վատ է դրված, վոր բարձրագույն կրթություն ունեցող մարդը՝ բժիշկը, վորը գնում է գյուղ և պետք է լինի խորհրդային ատոմին ապարատի ամենամոտ ոգնականը այս կամ այն միջոցառումներն անցկացնելու գործում, ԲՈՒՀ-ի պատերում չի ստանում նույնիսկ հիմնական հասկացողություններ խորհրդ. շինարարության մասին: Խորհրդային շինարարության առարկան մեր ԲՈՒՀ-երում և ԲՏՈՒՀ-ներում մտցնելու և խորհրդային աշխատանքի սիստեմի ու խորհրդային սահմանադրության վերաբերյալ մարդկանց հիմնական հասկացողություններ տալու հարցին պետք է նվիրել խիստ լուրջ ուշադրություն: Այդ տեսակետից մենք կաղում ենք:

Այնուհետև չեմ դարձյալ ուզում եմ կանգ առնել մեր շրջանային աշխատավորներին վերաբերող հարցի վրա: Կարծում եմ, վոր նստաշրջանին մաս նակցողների մեծ մասը շրջաններից են, և նրանք լավ գիտեն, թե ինչ պայմաններում և աշխատանքը կատարվում շրջաններում: Բնակարանային շինարարության, կուլտ-կենցաղային շինարարության հարցերը, ինչպես նաև շրջանային աշխատավորների կյանքպահպանող պայմանների ստեղծման հարցը շատ դժվար դրության մեջ է գտնվում: Ձեզ կարծում եմ, վոր նրանք գոնելու չեն իրենց արտահայտություններր մեր ֆիրենց նամաններում:

Մեր նստաշրջանի աշխատանքը տիպի չե ունենում Անդրկովկասյան ֆեդերացիայի պանծալի ատոմամյակի նախորեին: Մենք այդ ատոմամյակին դիմավորելու ենք մասսաների արտադրական վոգևորության նոր վերելքով, նոր հաղթանակներով՝ սոցիալիստական շինարարության և խորհրդային սոցիալիստական հանրապետությունների մեր մեծ միության ինքնապաշտպանունակության ֆրոնտում:

Նախագահ: — Թույլ տվեք սրանով փակված համարել նստաշրջանի նիստը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ VI ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

1932 թ. հունվարի 27-ի առավոտյան:

Նախագահում է ընկ. ՍՈՒԼԹԱՆՈՎ ՀԱՄԻԴԸ:

Նախագահ: — Ընկերներ, թույլ տվեք բացված հայտարարել նստաշրջանի հորրորդ նիստը: Մարքերի վոխանակության կարգով խոսքը սրատկանում է ընկ. Սարաևին (Կասպիական ռինվորական նավատորմիզ):

Սարայեվ: — Կապիտալիստական երկրներում ռազմական արդյունարերությունը անտեսության միակ ճյուղն է, վորը չնայած ճգնաժամի անխընթաց խորացմանը անտեսության մյուս բոլոր ճյուղերում չի կենթարկվում այդ ճգնաժամին: Կապիտալիստական պետությունները սպառազինումների ոգնությամբ ճոտադիր են և հույս ունեն դուրս գալու ճգնաժամից: Այդ տեսակետից Ճապոնիայի գործողությունները առաջին քայլն են հանդիսանում:

Միանգամայն հասկանալի է, վոր միջազգային կապիտալի ղինված ուժերի այդ բոլոն աճումն ուղղված է ղեխավորապես և առաջին հերթին Խորհրդային Միության դեմ:

Մեր սոցիալիստական շինարարության բոլոն աճումը այժմ մեզ իրավունք է տալիս բարձրաձայն հայտարարելու, վոր կապիտալիստների կողմից ԽՍՀՄ-ի դեմ պատրաստվող պատերազմը անխուսափելի կդերի նրանց համար: Սակայն դեռ վաղաժամ է սահմանափակվել մեր նվաճումներով և կապիտալիզմի վրա տարած հաղթանակներով: Սոցիալիստական շինարարության ֆրոնտում մեր կողմից անցկացվող ամբողջ աշխատանքում մենք չպետք է մոռանանք նաև երկրի ինքնապաշտպանունակության հարցերը:

Կարմիր բանակը, վորտեղից ամեն տարի տասնյակ հազարավոր զորացրված կարմիր բանակայիններ հեռանում են գյուղերը, տուրները, ղշլաղները և այլն՝ մարտիկների նախապատրաստման լավագույն գպրոցն է հանդիսանում վոչ միայն ռազմական ֆրոնտում, այլև սոցիալիստական ֆրոնտում: Անհրաժեշտ է ճիշտ և լրիվ ոգտագործել այդ ուժերը տեղերում: Մեր կարմիր բանակայիններից մենք պետք է պատրաստենք խորհուրդների պեկավարներ, կոլխոզների կազմակերպիչներ, աշխատավորների լավագույն ներկայացուցիչներ այն նպատակներով, վոր խնդիրների ըմբռնման գործում, վորոնց համար մենք պայքարում ենք և դեպի վորը մենք կգնանք անխուսափելիորեն: Մինչև այժմ մենք այդ

չենք արել: Անհրաժեշտ է, որ նաև չրջանը դիրեկտիվ տա կանոնավորելու զորացրված կարմիր բանակայիններին տեղերում նախապատրաստելու գործը և նրանց ոգտագործումը, մաս նավորապես կազմակերպելով նրանց համար հատուկ դասընթացներ:

Անդրկենտգործկոմն էլ ավելի չե սթելու տեղերում իշխանության բոլոր մարմինների ուշադրությունն այն վճռական և անհաչտ պայքարի հարցերի վրա, որ մղվում է կուլակի ամեն տեսակ փորձերի դեմ. ապրելու խորհրդների պրոլետարիատի դիկտատուրայի մարմինների վրա:

Նախագահ: — Խոսքը պատկանում է ընկ. Պետրոսյանին:

Պետրոսյան (Գյանջա: Խոսում է թուրքերեն): Գյանջան վերջին տարի ներս անճանաչելի չե: Նա ստացավ ուժեղ արդյունաբերություն, ամրապնդ ված պրոլետարիատ, որը փոխել է քաղաքի դեմքը:

Դրա հետ միասին, մենք ունենք նաև մի չարք թերություններ: Մեզ մոտ մեծ ճեղքվածք կա բնակչության ամման և բնակարանային շինարարության մեջ: ԲՈՒՀ-երը և այդ ԲՈՒՀ-երի ուսանողները ապահովված չեն հարմար չենքերով: Նատաչրջանը տալու չե կատարյալ ոգտագործման համար դիտելով հատուկ շենքերի շինարարությունն իսկույն ծավալելու վերաբերյալ՝ ԲՈՒՀ-երի և մյուս ուսումնական հաստատությունների, ինչպես նաև ուսանողների և բանվորների բնակելի տների համար:

Մեր քաղաքը տրամվայի կարիք ունի, նրա շինարարությունն ուշանում է ռելսերի բացակայության պատճառով: Միակ բանվորական ակումբը մենք հանձնեցինք ԲՈՒՀ-երին, և Գյանջայի բազմաթիվ պրոլետարիատը մնաց առանց ակումբի: Գյանջայում հիվանդանոցային շինարարության մեծ կարիք կա: Բազանիքները մեզ հերիք չեն անում: Նոր ջրմուղ կառուցելու հարցը պետք է լուծել առանց հետաձգման ժամանակում:

Վերջապես՝ ես ուզում եմ կենտրոնացնել ձեր ուշադրությունը քաղաքի էլեկտրիֆիկացիայի վրա: Ենեզդիան մեզ հերիք չի անում նույնիսկ լուսավորության և ուրիչ կենցաղային կարիքների համար:

Նախագահ: — Խոսքը պատկանում է ընկ. Ֆաթալի Բայրամին:

Ֆաթալի Բայրամ-Ողլի: — Մենք Գյանջայում կառուցել ենք բազմաթիվ նոր ֆաբրիկաներ և գործարաններ, մինչդեռ Գյանջա կայարանի կառուցումը, նրա ընդարձակումը, որն սկսվել է 10 տարի առաջ, մնում է նախկին դրության մեջ: Մեր առաջ խնդիր է դրված՝ նախ ին արտահանման ուղարկել, հասցնել այն մինչև Բաքո, իսկ Գյանջա կայար. 5–6 ժ. պնաքը չի կարողանում ընդունել, որովհետև ուղին զբաղված է լինում: Մյուս կողմից մեր յերկաթուղային դեպոն 18 շոգեկառքի համար է շինված, բայց հարկավոր է լինում նոքա շոգել 101 շոգեկառք: Թվում է, թե Գյանջային պետք է հատկացված լինի խիստ լուրջ ուշադրություն, բայց մենք այդ չենք տեսնում: Այնտեղ նույնիսկ չկան բավական հիվանդանոցային չենքեր:

Հետևյալ հարցը մանկամասուրների հարցն է: Մեզ մոտ այդ հարցը յերկու տարի է ինչ չի լուծվում. մասնավոր նեերի չենք կառուցնում համար նյութեր բաց չեն թողնում: Գյուղերում վոչ մի ուշադրություն չի հատկացվում հիմնական հարցերին: Թուրքական գյուղերից վոչ մեկում չկան մեր կադրերը: Մոլլայի վորդին կուսակցության թեկնածու չի և դեկավարում է: Մեղրիի ռայոնում տեղ են պոնում՝ նախկին պրիստավը, նախկին մոլլան, նահանգապետի յեղբայրը: Մենք պետք է ուշադրություն դարձնենք, որ մեր խորհրդային մարմիններում չծառայեն խորթ տարրերը:

Անցյալ ամիս խոսում եր, որ յեր կաթուղային տրանսպորտի աշխատանքները հավասար պայմաններում են դնելու. Ադրբեջանի կենտրոն Բազվում — տրանսպորտում աշխատավորների հետ: Բայց մենք դեռ վոչ մի փոփոխություն չենք տեսնում:

Նախագահ: — Խոսքը պատկանում է Մելազոնիային:

Մելազոնիա: (Ուզբեկերեն: Խոսում է վրացերեն): Վրաստանի խորհրդայնացումից հետո Թուրքիայի դիվանագիտությունը կուրտուրազես չատ առաջ գնաց: Առանձնապես նկատելի է կուլտուրական մակարդակի բարձրացումը կանանց մեջ: Մեր դյուղխորհուրդը մի շարք ուրիշ խայտառակություններ, վորոնք առաջ և բերում քաղաքացիների միանդամայն արդարացի վրդովմունքը: Յերկաթուղու ադմինիստրացիան պետք է ուշադրություն դարձնի դրա վրա:

Նախագահ: — Խոսքը պատկանում է ընկ. Չխենկելիին:

Չխենկելի: — Անցյալ տարի բանակարուժության բնագավառում ձեռք են բերվել հսկայական աջողություններ 1930 թվի համեմատությամբ: Զբաղած դրան, պլանը թերակատարվել է 32 տոկոսով: Ինչն է դրա պատճառը: Չնայած նրան, որ գարնանացանը անց եր կացվել ժամանակին և հըսկայական յեռանդով, մեր բամբակային կազմակերպությունները հաչվի չառան մի քանի մոմենտներ, վորոնք պայմանավորեցին բամբակի լավ բերքը 1931 թ.՝ 1) վաղ ցանքը, 2) առնա կամոր սերմերը, 3) չարքային ցանքը, 4) ձմեռվա արտերը, 5) տրակտորային վարը, 6) խոնավ ամառը: Իսկ

վորը ապատարկում և ամբողջ կոլխոզին:

Բացի այդ, կոլխոզը վորոշեց կառուցել նաև հինգ սարայ անասունների համար, բայց չինանյութերի բացակայության պատճառով մեզ մինչև այժմ չի աջողվել ավարտել: Մեր դյուղխորհուրդն ունի մանկական ոջախ, բայց այդ ոջախի համար չենք չկա և այդ պատճառով նա ժամանակավորապես տեղավորվել է մասնավոր տան մեջ:

Յես ուզում եմ մասնանշել դարձյալ մի անբնականություն: Բաթումի և Ուզուրգեթի միջև յերթևեկող գնացքները լուսավորված չեն, և այդ պատճառով այնտեղ չարունակ տեղի յեն ունենում դրպանահատություններ և մի շարք ուրիշ խայտառակություններ, վորն առաջ և բերում քաղաքացիների միանդամայն արդարացի վրդովմունքը: Յերկաթուղու ադմինիստրացիան պետք է ուշադրություն դարձնի դրա վրա:

Նախագահ: — Խոսքը պատկանում է ընկ. Չխենկելիին:

Չխենկելի: — Անցյալ տարի բամբակարուծության բնագավառում ձեռք են բերվել հսկայական աջողություններ 1930 թվի համեմատությամբ: Զբաղած դրան, պլանը թերակատարվել է 32 տոկոսով: Ինչն է դրա պատճառը: Չնայած նրան, որ գարնանացանը անց եր կացվել ժամանակին և հըսկայական յեռանդով, մեր բամբակային կազմակերպությունները հաչվի չառան մի քանի մոմենտներ, վորոնք պայմանավորեցին բամբակի լավ բերքը 1931 թ.՝ 1) վաղ ցանքը, 2) առնա կամոր սերմերը, 3) չարքային ցանքը, 4) ձմեռվա արտերը, 5) տրակտորային վարը, 6) խոնավ ամառը: Իսկ

ամենակարևորն այն է, որ 1931 թ. հիմնականում մենք ունենք կոլխոզային բամբակ։ Այդ մոմենտները հաչվի չեյին առնվել, և այդ պատճառով բամբակի հավաքը ուշ էր սկսվել։ Սեպտեմբերի առաջին թվերը հարկավոր էր սահմանել մոտավորապես 20 տոկ., իսկ սկզբում նախատեսված էր 3 տոկ.։ Իրապես, ի հարկե, հավաքվել է շատ ավելի, բայց լինքնին հարցադրումը սեպտեմբեր ամսում այդպիսի վոճր տոկոս հավաքելու վերաբերյալ շատ արդեպակեց հետագա աշխատանքը։ Անցյալ տարի չափազանց թույլ ուշադրություն և դարձվել բամբակի բերքատվության վրա։ Աչքըբեջանի շատ տեղերում անցյալ տարի մենք ստացանք բերք վոչ պակաս քան յերկու տոննն։ Նման բերք կարելի յե ստանալ ռայոններից մեծ մասամ (Աղրբեջանում), յեթե նախորոք ձեռք առնվեն միջոցներ։ Անհրաժեշտ է դարձյալ հաչվի առնել մալյարիայի դեմ մղվող պայքարը։ Անցյալ տարի Աղրբեջանում մալյարիայի դեմ չափազանց թույլ պայքար է մղվել։ Մալյարիայի դեմ պայքարի համար առանձին թվերով նախատեսված միջոցները չափազանց անբավական են։

Բացի այդ, անհրաժեշտ է նաև պայքար մղել խմելու առողջ ջրի համար։

Բամբակի նման մեծ նշանակություն չունի, բայց և այնպես կարևոր նշանակություն ունի լուրաքին նոր մշակույթների (ռամի) տարածումը։ Անցյալ տարի ռամիի պլանը կատարվեց կիսով մասին և ռամիի ցանքերի համար ջոկել եյին այնպիսի տեղեր, վորոնք կարող են ոգտագործվել միայն 5–6 տարուց հետո։ Գուցե այստեղ խոչնդոտ կա վորոչ մասնագետների կողմից։ Ասատարայի և արմատական վրատանի վորձը ցույց է տալիս, վոր ռամիի համար հարմար հողեր չեն հատկացվում, և այդ պատճառով գործը վիժում է։

Ինչ վերաբերում է կենաֆին, այս մշակությունը թեպետ ներմուծված է 1932 թ. պլանի մեջ, բայց հետագայում նա պետք է լիովին փոխարինվի ռամիով և քենդիրով, վորոնք ամեն կողմից ավելի չահավետ մշակություններ են, քան կենաֆը։

Նախագահ։ — Խոսքը պատկանում է ընկ. Սիվոլապին։

Սիվոլապ։ — Անդրկովկասի ժողովրդական անտեսության կապիտալ ներդրումների ամբողջ բուռն հոսանքով և կատարվում. վոչ միայն քանակապես, այլև այդ կապիտալներդրումների բոլորովին ուրիշ ուղղություն են տալիս ամբողջ ժողովրդական տնտեսությանը — ընթացիկ տարում։ Նրանք մեզ հնարավորություն են տալիս բոլորովին այլ ձևով վերակառուցել գյուղատնտեսությունը, ուժեղացնել նրա մեքենայացումը, ծավալել ջրաշխատումը, ծավալել բամբակային տարածությունները և մյուս տեխնիկական մշակությունների տարածությունները։ 1932 թ. Անդրկովկասում դրված այդ հիմնական խնդիրների հետ միասին առաջ են գալիս բոլորովին նոր պրոբլեմներ։ Այդ՝ ամենից առաջ սև մետաղագործության գծով։ Մինչև 1932 թ. Անդրկովկասը չի ունեցել մետաղագործական վոչ մի գործարան։ 1932 թ. գործի դրվող նոր Ֆերրոմարգանեցային գործարանի հետ միասին սկսվում է հսկա Դաշքեսանի գործարանի կառուցումը, սկսվում է ծավալվել յերկաթահանքի առացումը։ 1932 թվին բեկման տարի յե հանդիսանում քարածխի առացման բնագավառում, ինչպես նաև գունավոր մետալուրգիայի չինարարության մեջ։

Անդրկովկասյան հանրապետությունների առաջ դրված այդ մի շարք խնդիրների կատարումը պահանջում յե գործունեության տարիկա վոչ միայն այն մարմինների համար, վորոնք մշակում են այդ չինարարությունը և օպերատիվ դեկավարություն են ցույց տալու, այլև դա Անդրկովկասի բոլոր աշխատավորների գործն է։ Առաջիկա մի քանի տարիների ընթացքում Անդրը կովկասը դառնալու յե Խորհրդային Միության արդյունաբերական մասերից մեկը։ Պակաս կարևոր խնդիր չե լեռնանցքի ելեկտրականացված յերկաթուղու անցկացումը լեռնահղթայի վրայով։ Գուցե 1932 թ. այդ չինարարության ավարտելու տարին չլինի, սակայն անհրաժեշտ է արագացնել բոլոր պլանների մշակումը, ընտրել լավագույն վարիանտը, իսկ դուք գիտեք, վոր չափազանց շատ վարիանտներ կան։ Լեռնանցքի յերկաթուղու կառուցումով մենք լուծում ենք վոչ միայն տրանսպորտի պրոբլեմը, այլև խնայում ենք յերկրի համար ամեն տարի հարյուր միլիոնավոր ռուբլիներ։

Մեծ պրոբլեմների և խնդիրների շարքում կարծեք կան աննկատելիներ, վորոնց մասին վոչինչ չասվեց զեկուցումներում։ Այդ վերաբերում է մանավանդ Վրաստանին։ Դրված չե անտառաչինարարության, անտառատնկումների, արժեքավոր և ամուր տեսակների զարգացման հարցը։ Ամենևին մի արժեքավոր ծառ, վորպիսին բնակուլենին է, մեզ մոտ վերջին տարիներս բնաջինջ է յեղել շատ մեծ տարածություններում։ Այդ արժեքավոր ծառից մենք ունենք միայն առանձին անկարաններ։ Յես կարծում եմ, վոր նոտաչրջանի ընդունելիք առաջարկությունների կեսերից մեկը պետք է արտացոլի մեր անտառաչինարարության և անտառային մշակույթի այդ խնդիրները։

Մի ուրիշ նուշնպես «փոքր» հարց է պաշտային անտեսության հարցը։ Մեզ մոտ մի շարք շրջաններում խաղողագործությունը վերջին տարիներս հետադիմում է և վոչ թե տարածությունների հաչվին, այլ վորակի հաչվին։ Այն ժամանակ, յերբ Ղրիմի այգիները տալիս են 11 տոկ. ամենաբարձր տեսակի մրգեր, մենք 1931 թ. ունենք միայն 1 տոկ., իսկ միջին հաչվով 0,8 տոկ.։ Այդ ցույց է տալիս, վոր ներկայումս բավարար ուշադրություն չի հատկացվում պաղարաւծությանը, ծառաբծությանը։ Յեթե մենք այսուհետև էլ այդպես նայենք մեր այգիներին, ապա պետք է ապատել նուշնպիսի արդյունքներ, վոր մենք ունենք Աբխազիայի ծխախոտի վերաբերմամբ։ Աբխազիայի ծխախոտը վերջին տարիներս չարունակ իջնում է, և մտածված ու կազմակերպված անցկացնելով շատ միջոցներով միայն մենք կկարողանանք վերականգնել մեր աբխազական ծխախոտը, ինչպես նաև պաղատու ծառերը, և դնել բարձրակարգ արտադրանքի ճանապարհի վրա։

Այս քննադատում պետք է դրված լինեն նաև մի շարք ուրիշ խնդիրներ, այն է՝ մշակող ձեռնարկությունների կառուցումը Հայաստանում, մանավորապես մրգերի չորացման համար, պահեստային և գետնահարկային չեն քերի կառուցումը խորդուբորդության, գինեգործության համար և այլն։

Մի քանի խոսքով չեմ պետք է կանգ առնեմ արտաքին առևտրի հարցերի վրա: Մեր առաջ դրված է Անդրկովկասի և ամբողջ Միության ինդուստրացման համար վայրկեան կուտակելու խնդիրը: Հասկանալի է, որ այս բնագավառում հիմնական խնդիրն այն բնական հարստությունների ոգտագործումն է, որ ունենք Անդրկովկասում, և մասնավորապես լեռնային հանքերի ոգտագործումը: Այս առնչությամբ մեզ մոտ խիստ չափազանցված տեղեր կան: Ընդհանրապես մենք դրեթե չգիտենք, թե ինչ հնարավորություններ կան մեզ մոտ մեր հանքային գործում: Մենք հրաշալի կերպով ծանոթ ենք նավթին, ավելի վատ գիտենք մարգանեցը և էլ ավելի վատ՝ բարիտը և մյուս մանր տեսակները: Մենք պետք է ունենանք այն բոլոր հարստությունների յերկրաբանական քարտեզը, որոնք կան Անդրկովկասում:

Նախագահ: — Խոսքը տրվում է ընկ. Գոդաբրելիձեյին:

Գոդաբրելիձե: — Վառելիքի առնահիմից միակ հանքատեղը, որից ոպտ սելիքներ ունի ամբողջ Անդրկովկասը՝ Տղվիբուլին է: Ձեռ գանում եմ, որ անհրաժեշտ է վերանայել հարցը և բարձրացնել պրամանեդրումները մի նիմալ չափով մինչև 5 մլն. ռուբլի՝ Տղվիբուլիի հանքերը մեքենայացնելու և կատարելագործելու համար: Մյուս հարցը քարածխի հարցն է: Դուք գիտեք, որ Տղվարչելին կգնա դեպի Դաչքեսան և կերչի նավահանգիստը: Այս տեղից հարկավոր է այն յեզրակացությունը հանել, որ Տղվարչելին չի բավականանա առաջիկա տարիներում մեծագործությունն Անդրկովկասում պարզացնելու համար: Ուստի անհրաժեշտ է ունենալ կոկսագոզ քարածուխ: Մենք պետք է հարց դնենք, որ Տղվիբուլիի քարածուխը չծախսվի վառելու համար, այլ հետագծվի մետալուրգիայի պարզացման համար: Մեզ մոտ կա ուրիշ քարածուխ, որը կարելի է ոգտագործել վառելու համար: 1931 թ. Ախալցխայի ռայոնում մենք գտանք գորշ քարածխի մեծ հանքատեղեր — քարածխի 150 մլ. տոննն պաշար, որը գերազանցում է Տղվիբուլիի հանքատեղերին: Այդպիսով մենք հնարավորություն ունենք ազատելու Տղվիբուլին մյուս սպառողներից և պահել Տղվիբուլիի և Տկվարչելիի քարածուխը Անդրկովկասյան Դաչքեսանի և Կերչի մետալուրգիայի պարզացնելու համար:

Ներկայումս մենք արևմտյան Վրաստանի շրջանից դեպի Անդրկովկասի մնացած մասերը փոխադրում ենք 200 հազար տոննն քարածուխ և շատ հաճախ մեծ դժվարություններ յենք հանդիպում յերկաթուղիների տրոզության կողմից: Զեռնարկության ներսի աշխարհագրական լուծման պրոցեսում հարկավոր է այնպես անել, որ հետագայում յերկաթուղիները ծանրաբեռնված չլինեն:

Ձեռ կարծում եմ, որ թե նյութերում և թե ընկ. Մուսաբեկովի զեկուցման մեջ գուր է ասված, որ 1932 թ. յերկրաբանական–հետախուզական աշխատանքների թափով մենք վճռական բեկում կունենանք: Ձեթե վերցնենք յերկրաբ.–հետախուզական աշխատանքների 1931–32 թ. ներդրումները, կտեսնենք, որ այդ աշխատանքները մեզ մոտ մնացել են ստանց ուշադրության: Ստուգիչ թվերում նրանք ստացնում են չափազանց աննշան դարձ-

ցում — 13 ½ տոկոս: Անհրաժեշտ է վերանայել այդ հարցը:

Վերջին հարցը վերաբերում է չինանյութերի արդյունաբերության զարգացմանը: Շինանյութերի արդյունաբերության մեջ մենք ունենք ներդրում ներկա ստում մյուս 2,9 տոկոսով: Այդ ցուցանիշն անբավարար է, անհրաժեշտ է մի քանի անգամ մեծացնել չինանյութերի արդյունաբերության աճումը:

Նախագահ: — Խոսքը տրվում է ընկ. Մուրադովին:

Մամեդով: — (Հայաստան, Ազբարայի շրջան): Մեր շրջանում կան քարածխի հանքեր, որոնք այժմ չահագործվում են հատարակ ձևով: Այդ հանքերը մի քանի ամսում տվին Լենինականին 455 տոննն քարածուխ: Դրժբախտաբար այդ հանքերը դեռ բավարար չափով ուսումնասիրված չեն և չի սկսվել նրանց չահագործումը: Ներկայումս Դաչխանի հանքերը գործ են դժվար պայմաններում, որովհետև բացակայում է տրանսպորտը: Հարկավոր է մտածել Դաչխանի ճյուղը չուտով կարզով ավարտելու մասին:

Մի քանի խոսք «Զարյա Վոստոկա» թերթի մասին: Ղափանում վերջին ամիսներս պլանը կատարվում է գերակատարվում է, բայց մեր մամուլում բացարձակապես վոչինչ չի նկարագրված այդ աշխատանքների մասին:

Մի քանի խոսք էլ խորհրդանշական չինարարության մասին: Մեր խորհրդանշության չինարարությունը զարգանում է խափանումներով: Փայտանյութերի մատակարարումը չափազանց թույլ է:

Շինարարության վրա հսկողությունը թույլ է, չկան կատուցողների համապատասխան կադրեր: Խորհրդանշության ֆինանսավորման կողմից գործը նույնպես վատ է: Մի քանի խոսք ճանապարհների և հեռախոսային կապի մասին: Ճանապարհային ճանապարհների վարչության քիչ ուշադրություն է հատկացնում ճանապարհներին: Նա չի ոգտագործում այն բոլոր միջոցները, որ նրանց տալիս է բյուջեն: Անդրկովկասի հեռախոսացոյցը նույնպես թույլ է կատարվում:

Նախագահ: — Խոսքը տրվում է ընկ. Բաբալովին:

Բաբալով: — Հնգամյակի ավարտման տարում մեր առաջ դրված հոյակապ խնդիրները պահանջում են, որ դիտական–հետազոտական աշխատանքների հարցերին հատկացվի բացառիկ ուշադրություն: Այստեղ արդեն խոսում եյին, թե ինչքան քիչ ուշադրություն է հատկացվում մասնավորապես յերկրաբանական–հետախուզական աշխատանքների հարցերին: Նույնը կարելի է ասել դիտական–հետազոտական աշխատանքի մասին արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերում. մինչդեռ այս հարցի վերագնահատումը անհետևական կազմակերպությունների չատերի կողմից գոյալի չափ դժվարացնում է մեր առաջ դրված պլանների կատարումը: Գիտական–հետազոտական աշխատանքների դերի թերագնահատման հիմնական պատճառները թաղված են նախ և առաջ այն գործնամոլ մոտեցման մեջ, որն արտահայտվում է կազմակերպությունների չատերի պահանջումով, որ դիտական–հետազոտական կազմակերպությունները խիստ պրոտոկոլային դրված հարցերին, յերբորդ, որոշ չափով մեղավոր են նաև դիտական–հետազոտական կազմակերպությունները, նրանց աշխատանք-

քըն արտադրությունից կտրված լինելը և վերջապես այն, որ գիտական-հետազոտական աշխատանքների նյութական-տեխնիկական ամուր բազա ստեղծելու աշխատանքներին մինչև այժմ պատշաճ ուշադրություն չի հատկացվել: Այն ժամանակ, երբ անձնական արդյունաբերության մեջ դրամաներդրումները նախագծված են շատ ու կես անգամ ավելի, քան 1931 թ., գիտական-հետազոտական աշխատանքի մեջ 1932 թ. այդ բնագավառում հատկացվում է ընդամենը ½ տոկոս: Մինչդեռ անձնական արդյունաբերության բարձրացման և վերակառուցման համար մենք պետք է աշխատանքն այնպես դնենք, որ գիտական-հետազոտական աշխատանքին հատկացված լինի մեծ ուշադրություն:

Մեզ մոտ նման երևույթ է նկատվում նաև արդյունաբերության մյուս ճյուղերում: Ցեթե այսօր կապիտալիստական երկրներում տեխնիկայի գերազանցության դերի մեռնելը, գիտական հոսանքների ստեղծումը, միանգամայն այլ է մեզ մոտ: Մենք պետք է զարգանալու հնարավորություն տանք նոր գյուտերին, տեխնիկական վերակառուցման նոր մտքերին և մտցնենք այդ ամբողջ տնտեսության մեջ:

Ցեթե մեզնում խիստ բեկում չհատարվի գիտական-հետազոտական աշխատանքները ուժեղացնելու ուղղությամբ, այն ժամանակ մենք չարունակ դեմ կառնենք մեր տնտեսության վերակառուցման պլանների ԹԵրակատարման փաստերին, բացասական վերաբերմունքի փաստերին: Մեր առաջիկա ԹՎերում և մենք պետք է նախագծենք գիտական-հետազոտական աշխատանքների ավելի լայն ծավալ:

Քննելով ընդհանուր դրամաներդրումները, կարելի է համոզվել, որ ծանր արդյունաբերության մեջ և գիտական-հետազոտական աշխատանքի համար հատկացված դրամաներդրումները նախագծված են շատ չնչին չափով:

Նախագահ: — Խոսքը տրվում է ընկ. Մամեդով Իբրահիմին:

Մամեդով (Ղուբա): Ղուբայի շրջանը, ինչպես ձեզ հայտնի է, պատկանելիության և հացահատիկային շրջան է: Այնտեղ շրջանացումից հետո այգեգործական տնտեսությունը խիստ զարգացավ: Հարկավոր է նշել, որ հին այգիների մշակումը վատ է կատարվում: Ադրբեջանի հողժողկոմատը պատշաճ ուշադրություն չի դարձնում այդ հարցին: Ղուբայի շրջանը կոլեկտիվացվել է 36 տոկոսով: Դյուղխորհրդների ստուգատեսի ընթացքում մենք մեծ բեկում ունենք կոլտնտեսական չինարարության մեջ և չքավոր-միջակ տնտեսությունների կամավոր հոսանք դեպի կոլխոզները:

Մեզ մոտ, Ադրբեջանում, որեցոր բարձրանում է գյուղական ակտիվի կուլտուրական մակարդակը, սակայն շրջանային գործկոմը մի հրահանգ-չով չի կարող ընդգրկել ամբողջ մասսայական աշխատանքը գյուղում: Հարկավոր է մեծացնել գործկոմների հրահանգիչների չտատը:

Մի քանի խոսք Անդրկ. և Ադրբեջ. կենտգործկոմի հետ կեղած կապի մասին: Հարկավոր է, որ Անդրկ. և Ադրբեջ. կենտգործկոմների հրահանգիչները գնալով ոատյն, մնային այնտեղ գոնե 2–3 օր, որպեսզի տեղական աշխատավորները կարողանան նրանց օգտագործել իրենց գործնական աշխատանքի մեջ:

Նախագահ: — Խոսքը պատկանում է ընկ. Բալախնինին:

Բալախնին: — Ցես ուզում եմ հրավիրել ձեր ուշադրությունը միայն այն հարցերի վրա, որոնք, ինչպես ինձ թվում է, ամենանեղ տեղերն են մեր աշխատանքի մեջ:

Առաջին հերթին իր վրա ամենալուրջ ուշադրություն և դրավելու ջերկաթուղային տրանսպորտի աշխատանքը: Ցերկաթուղային տրանսպորտը և նրա ադմինիստրացիայի հատուկ ուշադրությունը հարկավոր է հրավիրել Բաքվի հանդույցի վրա, որտվհետև նավթի փոխադրումների ամուսին 1932 թ. նախագծված է զգալի զեթազանցումով 1931 թ. համեմատութեամբ: Դրա վրա անհրաժեշտ է հրավիրել ուշադրությունը զարձյալ այն պատճառով, որ մեզանից վոչ միայն մեր յերկիրն է սպասում այն մթերքները, որ արտադրում է Ադրբեջանի նավթային արդյունաբերությունը, այլև արտաքին առևտուրը, գլխավորապես եքսպորտը, խիստ կմնասվի, յեթե մեզ մոտ բավարար չափով չվերածկատուցվի յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը:

Հարկավոր է վորոշակի նշել, որ զրամաներդրումները յերկաթուղինեբի զծով խիստ անբավարար են այն պլանի համեմատությամբ, որ նրանք պետք է կատարեն առաջիկա տարվա ընթացքում: Այսպես, որինակ՝ Բաքու-Բալախանիի հանդույցի գծով, որը խիստ մաշված է, վերջին տարինեբի ընթացքում բացարձակապես վոչ մի զրամաներդրում չի յեղել, յեթե չհաշվել այն աննշան մասը, որը ծախսվել է տնտեսությունը պահպանելու վրա, իսկ այս տարի Անդրկոմկապային յերկաթուղինեբի դիրեկցիան հաղորդում է, որ վոչ մի կոպեկ չի հատկացվում վոչ Բաքու-Բալախանիի հանդույցը վերակառուցելու, վոչ էլ տնտեսությունը Բաքվում վերակառուցելու համար: Ցես գտնում եմ, որ մենք 1931 թ. ընթացքում քիչ ենք արել հանգստացրել Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատին յերկաթուղային տրանսպորտի հարցերի վերաբերյալ: Այստեղ, ինչպես յերևում է, արտահայտվել է և այդ ժողկոմատի զեկավարության փոփոխությունը և այն, որ նոր զեկավարությունն ըստ յերևույթին զեռ չեր կարողացել ինչպես հարկավոր է ծանոթանալ բոլոր հարցերին, մանավանդ այն հարցերին, որոնք վերաբերում են նավթի լցման գործի վերակառուցմանը Բաքվում, որտեղ մենք տենենք չես տերմինների հսկայական կանգուրդներ, ունենք չափազանց անտրոչ աշխատանք, ինչպես յերկաթուղը, այնպես էլ Անդրկոմի կողմից, որոն իր հերթին նույնպես պատասխանատու է և պետք է պատասխանատու լինի Բաքվից նավթամթերքների փոխադրության խափանումների համար:

Ցերկրորդ հարցը, որոն ինչպես ինձ թվում է, արտահայտություն չի գտել զեկուցման մեջ՝ ձկան արդյունաբերությունն է: Մինչդեռ մենք չենք կարող մոռանալ ձկան արդյունաբերությունը մանավանդ այն պայմաններում, յերբ խոշոր արդյունաբերական կենտրոնները բավարար չափով չեն մատակարարվում ձկրպով և մսով: Բացի այդ, ձուկը արտասահմանից անհրաժեշտ սարքավորում և վայրստա ստանալու միջոց է հանդիսանում: Սկզբում

Աղբյրջանի ճկան արդյունաբերության մեջ դրամանիշդրումները նախագծված էին 15 մլն. ռուբլու ծավալով: Այդ գումարը հինգ անգամ վերանայվել և իջեցվել է: Այնպիսի խոշորագույն ոլտեսության մեջ, ինչպիսին մեր համամիութենական պլանն է, իհարկե հարկավոր են ուղղումներ, սակայն թվում եր, թե պլանի չորրորդ վերանայումից հետո հարկավոր և ունենալ դրամանիշդրումների վերջնական թվերը: Նախաշրջանը մոբիլիզացիայի յե յենթարկելու մեր ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառում գործած բոլոր աշխատավորների ուշադրությունը այդ հարցի չուրջը:

Այնուհետև յես ուզում եմի հրավիրել ձեր ուշադրությունը դարձյալ մի թույլ տեղի վրա: Այդ՝ մեր պլանի նյութական ապահովման, մասնավորապես չինանյութերով ապահովելու հարցերն են: Պետք է ճնշ առնվեն ամենավճռական միջոցներ՝ նյութական ապահովումը այն հաշվով դնելու համար, որ կարելի լինի կատարել պլանը: Շատ բան մենք ինքներս կարող ենք անել: Մեզանից և կախված մի շարք դեֆիցիտային նյութերը տեղական նյութերով փոխարինելը, փոխանակ այդ դեֆիցիտային ապրանքները տարեց տարի առանալու: Անդրկովկասի սահմաններից դուրս, այժմ, յերբ մեզ տրվել են ցուցումները դեֆիցիտային չինանյութերը տեղականով փոխարինելու վերաբերյալ, այդ ուղղությամբ մենք պետք է դրսևորենք ահագին յեռանդ: Մեր տեխնիկական ուժերը միշտ տրամադիր չեն ընդունելու այդ, վորովհետև գործը վերաբերում է նոր նյութերին, վորոնք դեռ չեն փորձվել գործնական աշխատանքի մեջ: Բայց և այնպես այդ չինանյութերի փոխարինումը պետք է կատարել վորոշ ռիսկով և ավելի վճռական կերպով, նյութերը, վոր մենք չենք կարող առանալ դրսից վոչ միայն մեր վերամշակող առևտրության, այլ և արդյունաբերության համար:

Նախագահ.— Խոսքը տրվում է ընկ. Դարասելիային:

Դարասելիա.— (Ջուղղիղի շրջանից: Խոսում է վրացերեն): Ջուղղիղի շրջանը մտնում է 23 դյուղխորհուրդ և 1 քաղխորհուրդ: Մեր շրջանում լայն չափով գործադրվում են սոցմրցակցության և հարվածայնի մեթոդները: Սոցմրցակցության և հարվածայնության մեջ կանայք ցույց են տալիս ակտիվ մասնակցություն: Շրջանում կազմակերպվել են նաև կանանց բրիգադներ՝ լուսավորության մարմիններին աշխատանքը ստուգելու համար: Վորովհետև մեր շրջանը եքսպորտային արտախի դաշինի անկարանների շրջան է, դյուղատնտեսական կամպանիայի պլանը մշակելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հենց այդ մշակույթների վրա: Շրջանում

մենք գիտենք, որ բոլոր հողերը միա տեսակ չեն: Մեզ մոտ չկա հեռապրա- վան կապ: Հեռապիրը մեզ հաղորդ- բայիլի միջև գոյություն ուներ հե- վոմ և հեռախոսով և գրեթե միշտ աղավաղված ձևով: Աղղամի և Ջեր- ռախոսային ցանց, բայց նա վնաս- վել և ու չի ուղղվում: Ցեվ մենք չենք կարողանում ոգտվել նրանից:

Այժմ առողջապահության մասին: Այդ շրջանում 80 տոկոսը մալյարի- այով հիվանդ է, 60 տոկ՝. տրախո- մայով, 25 տոկոսը քոսով և ահա այդ պայմաններում մենք ունենք միայն մի բժիշկ և մի բուժակ:

Հեռևյալ հարցը բնակարանների հարցն է: Մեզ մոտ կան ընդամենը 4 տուն, որոնք կիսով կործանվել են Որդուբադի երկրաշարժից:

Անցնում եմ մի ուրիշ հարցի՝ վար- ած արդյունաբերության: Պրոմկեսը նստած է հեռու, Լաչինում, իսկ մեր շրջանը վայր է մատակարարելու Բազմին և այլն, չստանալով վոչինչ: Ցես վարձում եմ, որ Պրոմկեսը պետք է նստած լինի երկաթուղուն մոտ, որպեսզի ավելի մոտիկ լինի:

Մեր շրջանը մեծ հեռանկարներ ու- նի, որինակ այնտեղ բացվել են պղնձի հանքեր, որոնք կապված են Ղաթարի հանքերի հետ: Այնտեղ բաց վել են ադյուսի, կղմինդրի, կրի և աղցման գործարաններ: Ջանգելա- նը շատ հզոր և հարուստ շրջան է հանդիսանում անտառների և ջրի անսպառ միջոցների կողմից, ինչպես նաև իր հանքահեղերով, որոնք կա- րող են ոգտագործվել 100 տոկոսով:

Վերջին հարցը Ղաթարի ճյուղի հարցն է: Այդ ճյուղն ամենամոդըր- մեկի դրության մեջ է գտնվում: Նըս- տաշրջանը պետք է ձեռք առնի բոլոր միջոցները, որպեսզի այս տարի ա- պահովի ճյուղի ավարտումը:

Նախագահ.— Խոսքը պատկանում է ընկ. Տոլստոպյատովին:

Տոլստոպյատով.— Ընկերներ, բամ- բակն իր տեսակարար կշռով Անդրկով կասի տնտեսության մեջ այսօր գեռ չի գրավում այն տեղը, որը պետք է գրավի իր տնտեսական – քաղաքական նշանակությամբ և ըստ այն հնարա- վորությունների, որոնց ոգտագոր- ծումը դարձնելու է Անդրկովկասը խորհրդային բամբակարուծության ներկրոդ հիմնական բազան:

Մեր առաջ ամբողջ հասակով գըր- ված է ամենից ավելի լրիվ չափով և ամենակարճ ժամկետում մեր տ- դյունաբերությունը արտասահմանի տնտեսական կախումից ազատելու խնդիրը: Բամբակի վրայից մենք մե- ծապես կախված եյինք կապիտալիս- տական երկրներից:

Բամբակարուծության զարգացման տեմպերը հարկավոր է բարձրացնել մինչև այն տեմպերը, որոնցով ամ- րում և չարժվում է մեր երկրի սո- ցյալիստական տնտեսությունը:

1931 թ. բամբակային ծրագրի տա- պալումը, բամբակի պահանջների սուր աճումը և կատեգորիկ դիրեկ- տիվը բամբակի ներմուծումից հրա- ժարվելու վերաբերյալ՝ պահանջե- ցին բոլոր կազմակերպությունների ա- խատանքի վճռական և արմատական վերակառուցումը, միջոցների և ո- ժերի մոբիլիզացիան 1931 թ. բամ- բակային պլանի կատարման համար:

Բամբակարուծության բոլոր կող- մերի տեխնիկական բազայի ամուր և լայն ծավալված հասարակական- քաղաքական աշխատանքը դարձի հա- ղորդություններ ապահովեցին կոլեկ- տիվացման բնագավառում:

Չնայած պլանի թերակատարմանը, 1931 թ. բամբակի զարգացման բնա- գավառում հանդիսանում է լուրջ հա- ղորդությունների տարի, և միևնույն ժամանակ նա հանդիսանում է բամ- բակային մշակության անչահավետ լի- նելու վերաբերյալ առասպելի լրիվը- պակույայի տարի: Այժմ արդեն առան- ձին կոլխոզներում մի տնտեսության մեկամուտը հասնում է 1.000 ռուբ.: Ցեթե 1931 թ. մեր երկիրը ոտար կա խումից ազատելու առաջին տարին եր, ապա 1932 թ. պետք է դառնա ձեռք բերված հաղորդությունների ամրաց- ման տարի, Անդրկովկասը խորհրդա- յին բամբակարուծության երկրորդ հիմնական բազա դարձնելու գործի լուրջ սկզբնավորման տարին: Այդ խնդրի լուծումը ուղղակի կախված է Ջոլա–Արաքսի պրոբլեմի հաջող լու- ծումից:

Անդրկովկասի ջրային տնտեսու- թյունը ներկայումս պահանջում է ու ժեղ ուշադրություն: Այդ ուշադրու- թյունը պետք է ուժեղացվի նախ և առաջ այն պատճառով, որ ջրային տնտեսության վիճակը դեռ չի գըտ- նվում պատշաճ բարձրության վր- րա, վոռոգման ամբողջ ցանցում մենք ունենք ինժեներական սիստեմ- ներ մինչև 10 տոկոս: Մուշանի դաշ- տում ուժեղանում են աղային պրո- ցեսները: Այդ բոլորը պահանջում են բոլոր կազմակերպությունների մեծ ուշադրությունը և գյուղացիական բնակչության՝ բամբակարուծների ու չաղրության մոբիլիզացիան:

Անդրկովկասի ջրային տնտեսու- թյան ուշադրության կենտրոնում դրված է Մինգեչաուրի պրոբլեմը, իբ րև մի պրոբլեմ, որը արմատապես փոխում է վոչ միայն Ադրբեջանի, այլ և ամբողջ Անդրկովկասի տնտե- սության կերպարանքը: Այդ պրոբ- լեմը միաժամանակ լուծում է մի ամ- բողջ կոմպլեքս ժողովրդական–տնտե- սական խնդիրներ՝ ջրաբաշխության, եներգետիկայի, այժմ գատարկ պըտ- դավետ գաշտերը բարգավաճ յեր- կիր դարձնելու հարցերը, վերջապես, նավաշինության և ձկնորսության հարցերը: Մալյարիայի դեմ մղվող պայքարը Անդրկովկասյան բոլոր կազ մակերպությունների, ինչպես նաև Ադրբեջանի կազմակերպությունների կողմից պահանջում է սրված ուշա- դրություն դեպի Մինգեչաուրի պը- րոբլեմը: Ջոլա–Արաքսի պրոբլեմի լուծման, մանավանդ Մինգեչաուրի չինարարության լայն ծավալուն աշ- խատանքով մենք հաջողությամբ կը- պնանք ՀԿ (բ) Կ կենտկոմի դիրեկտի- վը կատարելու ճանապարհով, Անդ- րկովկասը, մանավանդ Ադրբեջա- նը խորհրդային բամբակարուծու- թյան երկրորդ հիմնական բազան դարձնելու վերաբերյալ: Այդ խնդրի լուծումը ապահովում է հետագայում լուրջ տեղաշարժեր Անդրկովկասի ինդուստրացման վերաբերյալ:

Նախագահ.— Խոսքը տրվում է ընկ. Մալանիային:

Մալանիա.— Մի քանի խոսք Գրուզ նեֆտի աշխատանքի մասին: Այն բա-

ցերի չարքում, վորոնք անցյալում չեղել են Գրոզնեֆտի աշխատանքում, 1931 թ. այդ աշխատանքի վերակառուցումից հետո մենք ունենք մի չարք լուրջ տեղաշարժեր: Նաֆթը գետնի յերեսին յերևում է ամեն որ, մոտավորապես 30 տոննի չափով, մենք այդ նավթը թափում ենք ճորը րեզերվուարի բացակայության և ճանապարհների չլինելու պատճառով: Առանձնապես լուրջ կերպով խանգարում է ճանապարհների բացակայությունը: Ճանապարհային մարմինները մինչև այժմ այդ հարցը յերկրորդական են համարում, և այն տեմպերը, վոր վերցրել են Գրոզնեֆտի բանվորները, մինչև այժմ չըկան ճանապարհային շինարարության մեջ: Բացի այդ, բժշկական ոգնության հարցը շատ վողորմելի դրության մեջ է գտնվում:

Ավելի վատ է դրված հեռագրական կապի գործը: Ցեթե նկատի ունենալ Գրոզնեֆտի արդյունաբերության լուրջ նշանակությունը, յես կարծում եմ, վոր վորևե տեղում կգտնվի ներքին ռեզերվ՝ Գրոզնեֆտը գոնե Թիֆլիսի հետ կապելու համար:

Այնուհետև տեղական արդյունաբերության մասին: Այս բնագավառում մեր առաջ դրված է այն մելիոնավոր վարկերի ծավալման ոգտագործման հարցը, վորոնք նշանակված էլին կապիտալ կառուցումների համար, բանվորական չինքերի համար, կուլտուրական միջոցառումների համար և այլն:

Այնուհետև յես ուզում եմ չոչափել յերկաթուղային տրանսպորտի հարցը: Կասկեթի գծի վրա կա մի կետ՝ Մնորիի վայարանը: Այս կայարանը սպասարկում է Ադրբեջանի չրջաններից չորսը, ինչպես նաև Վրաստանի մի չարք չրջաններ: Յերկաթուղին գանվում է վատ դրության մեջ: Այդ կետը չունի ամենաանհրաժեշտ չինքը պնացքին սպասող անցորդներին ոթևան տալու համար:

Այժմ խորհանտեսությունների գծով կադրեր նախապատրաստելու հարցը: Առայժմ այդ հարցը վոչ մի քննադատության չի դիմանում: Մեզ մոտ չրջաններում կադրերի հարցով զբաղվում են բոլորովին պատահական կերպով և այդ աշխատանքում վոչ մի կարգավորում, վոչ մի նախապատրաստում և լուրջ հաչվառք չի տարվում: Շրջանային մարմինները մինչև այժմ չգիտեն, թե վորքան դյուղատնտես և վորքան տեխնիկ ու բժիշկ է հարկավոր իրենց առանձին տնտեսություններին՝ կոլտնտեսություններին և խորհանտեսություններին համար:

Նախագահ: — Խոսքը տրվում է ընկ. Ազամիրովին:

Ազամիրով. — (ԱՍՖՍՀ ԺԳՏՄ) Այդ խնդիրը, վոր անցած տարի զբաղած եր մեր առաջ՝ հանգում եր նրան, վոր Անդրկովկասը հետամնաց, և անցյալում հարստահարված, կիսագաղութից վերածվի ինդուստրիալ-ագրարային յերկրի, վորպեսզի հետանկարում ամբողջ Խորհրդային Միության հետ միասին կարելի լինի դարձնել բարձր-ինդուստրիալ յերկիր:

Ինչո՞վ է բնորոշվում այդ խոշոր խնդրի կատարումը: Ամենից առաջ և հիմնականում այն միջոցների քանակով, վորոնք մոբիլիզացիայի յեն յենթարկվում և դառնում են նյութական արժեքներ, մի չարք նոր, մեր յերկրում մատուռ աճող ձեռնարկությունների ձևով: Մենք այդ խնդիրը կատարեցինք, վորքան կարող եյինք 1931 թ.: Ի՞նչ ստացանք հանրագումարում: Ցեթե մենք Անդրկովկասի խորհրդային մաս բոպեին պետական ամբողջ արդյունաբերության մեջ ունեցինք 4½ միլ. ռուբլու հիմնական դրամագլուխ (և հարկե չհաչված Աղնեֆտը), ուժեղ կապիտալ շինարարության և նոր ձեռնարկություններ կառուցելու և հները վերակառուցելու հետևանքով ԱՍՖՍՀ արդյունաբերության հիմնական դրամագլուխը (առանց Աղնեֆտի) հնդամյակի առաջին յերկու տարում մեծացավ 40,3 միլ. ռուբլով — 1928 թ. հոկտեմբերի 1–ին 24,5 միլ. ռուբլուց մինչև 64,8 միլ. ռուբ. 1930 թ. հոկտեմբերի 1–ին:

1931 թ. (հաստուկ կվարտալի հետ միասին) մենք չահագործման մեջ դրինք գարձյալ 41 միլ. ռուբլու գույք: Բայց, ընկերներ, հերիք չե ձեռնարկություններ կառուցելը, հարկավոր է համապատասխան կերպով կազմակերպել կարողանալ այդ ձեռնարկությունների աշխատանքը:

Յերկրորդ հիմնական խնդիրը, վորի կատարման չուրջը մենք մոբիլիզացիայի յենթարկեցինք մեր բոլոր ուժերը՝ արդյունաբերության աշխատանքի բարելավման խնդիրն եր այն ցուցմունքների վոգով, վոր մեզ տվել է ընկ. Ստալինը:

Ցեթե մենք մեր աշխատանքի տեղամասերից վորևե մեկում ունենք ազողություններ, կասկած չկա, վոր նրանք մեծ մասամբ հետևանք են այն բանի, վոր մենք այդ տեղամասերում կամ արդյունաբերության

ցուցմունքները: Ցեթե մենք բացեր դեռ ելի ունենք (իսկ մեզ մոտ դեռ հակառական բացեր կան), դրանք հենց այն բացերն են, վորոնց վրա ժամանակին մատնանչել է ընկ. Ստալինը, և վոր մենք դեռ չկարողացանք ուղղել 1931 թ.:

Ինչպես ձեզ հայտնի յե ԱՍՖՍՀ արդյունաբերությունը 1931 թ. տվեց ընդհանուր արտադրանքի 48 տոկ. աճ. 1930 թ. համեմատությամբ: Մի տարվա ընթացքում մենք արտադրեցինք նախորդ յերկու տարիներում արտադրածի հավասար գումարի արտադրանք: Հետևաբար մենք 1931 թ. ունեցինք միանգամայն հարաճուն տեմպեր, բայց և այնպես այդ տեմպերն անբավարար են, վորովհետև մենք մեր վերակառուցման պրոցեսներում յետ ենք մնացել ամբողջ Միությունից և այդ պատճառով մենք պարտավոր եյինք տալ աճման շատ ավելի բարձր տեմպեր, քան թե ամբողջ Միությունը: Ինչպես հայտնի յե աճի տեմպերը մենք նախատեսում եյինք վոչ թե 48, այլ 70 տոկ.: Ընդհանուր արտադրանքի արտադրողական ծրագիրը մենք կատարեցինք 83 տոկոսով, իսկ կապիտալ շինարարությանը՝ միայն 71 տոկոսով: Ինչին են հանգում այն հիմնական պատճառները, վորոնք առաջ բերին պլանի այդպիսի մեծ թերակատարում:

Իր թեզիսներում 17–րդ կուսկոնֆերենցիայի առթիվ ընկ. Որջոնիկիձեն առանձնապես նշում է, վոր պլանի թերակատարման գլխավոր օբյեկտիվ պատճառներից մեկը յերկաթուղային տրանսպորտի վատ աշխատանքն է: Մեզ մոտ ել Անդրկովկասում վոչ պատկառելի նշանակություն ուներ տրանսպորտի անբավարար աշխատան

քը: Դրան պետք է դարձյալ ավելացնել հարկավոր քանակությամբ մեխանիզմների բացակայությունը, աշխատանքատար աշխատանքները մեքենայացնելու համար, կապիտալ շինարարության միշտ ժամանակին չվինանսավորելը և այլն: Բայց սրանով էլ սահմանափակվում են այսպես կոչված օբյեկտիվ պատճառները, իսկ գլխավոր և հիմնական բացերը թաղված են այն պատճառներում, որոնց մասին պարզ ու վորոշակի դրսևորեց ընկ. Ստալինը: Սուբյեկտիվ կարգի այդ պատճառները հաղթահարում էլին և չարունակում են հաղթահարել մեր աշխատանքը: Հիմնականն այդ պատճառներում, ի հարկե, հանդում է աշխատանքի վատ և անշնորհք կազմակերպմանը ձեռնարկություններում, դիմապրկությանը, հավասարանքին, տնտեսահաշվառքի անբավարար դրծադրմանը և կադրերի նախապատրաստման դանդաղ տեմպերին: 1931 թ. մեր արդիլինպլանի թերակատարմանը հենց այդ բացերը հասցրին, որոնք կայանում են նրանում, որ մենք բավարար չափով չկարողացանք կենսագործել ընկ. Ստալինի 6 պատմական ցուցմունքները:

Դրան պետք է ավելացնել հեռևյալը: Կենտրոնացումով տարվելը, արդյունաբերության բոլոր ճյուղերը անպայման Անդրկովկ. ԺՏԳԽ-ի ձեռքում միացնելու ինդրով տարվելը, փոխանակ իրագործելու աշխատանքի պլանաչափ և ռացիոնալ տնտեսագործումը և բաժանումը հանրապետություններին ու ֆեդերացիայի մեջև, այնպես, որ ֆեդերացիային պատկանի արդյունաբերության ամենատարաջատար ճյուղերի անմիջական ղեկավարությունը, — առաջ բերեց այն, որ մենք բավարար չափով չկարողացանք կենտրոնացնել մեր ուշադրությունը այդ ինդրի հետևի մասի վրա: Մենք բավարար չափով չկարողացանք կոնկրետացնել ղեկավարության արդյունաբերության աշխատանքի վերաբերյալ, մոտեցնել պրակտիկ ղեկավարությունն անմիջապես ձեռնարկություն ներին: Հենց այդ եր պլանի թերակատարման պատճառը, որովհետև պլանի բաղկացուցիչ մասը և հիմնական առանցքը, որի վրա հիմնված և բայլ չևիկյան ղեկավարությունը արդյունաբերության նկատմամբ՝ կոնկրետ ղեկավարությունն է հանդիսանում այն դիրեկտիվների ու կարգադրությունների ստուգման կազմակերպել կարողանալը, որոնք վերից վար են իջեցվում:

Աշխատանքի մեխը՝ կատարումը ստուգելու և մարդկանց ընտրելու մեջ է կայանում: Ղեկավարության այդ ընտրությունը վերից մինչև վար պետք է իրագործել այնպես, որ ղեկավարությունն իր պարզությամբ, իր ճշտությամբ և իր պատասխանատվությամբ զգացվի ամեն մի ձեռնարկության մեջ, ամեն մի ագրեգատում, ամեն մի դազդյահի մոտ, առանց վորևե հավասարանքի: Ամեն մարդ պետք է պատասխանատու լինի իրեն հանձնված գործի համար, որպեսզի մենք 1932 թ. մեզ տրված սահմանափակ միջոցներով կարողանանք տալ վորակապես ավելի լավ և քանակապես ավելի բարձր արտադրանք:

1932 թ. մենք, ինչպես հայտնի է, պետք է ավարտենք հնգամյա պլանը: Անդրկովկասյան արդյունաբերությունն էլ արդյոք ո՞ւնի ներքին պոտենցիալ հնարավորություններ այդ ինդիրը լրիվ լուծելու համար: Անպայման ու-

նի: Ցես կբերեմ մի քանի թվեր այդ դրությունը բնորոշելու համար. 1931 թ. Անդրկովկասի ամբողջ արդյունաբերության մեջ ընդհանուր արտադրանքի փաստական կատարումը կազմում է 1 միլիարդ 96 մլն. ռուբլի: Նատալջյանի հաստատմանը ներկայացված ընդհանուր արտադրանքի 1932 թ. ստուգիչ թվերը յենթադրում են 1 միլիարդ 486 մլն. ռուբլու գումար: Եթե մենք պլանը կատարենք 1932 թ. (իսկ ես ուզում եմ յենթադրել, որ մենք վոչ միայն կկատարենք, այլև կգերակատարենք պլանը), այն ժամանակ մենք կատարած կլինենք առաջին հնգամյակը Անդրկովկասի ամբողջ արդյունաբերության մեջ, հաշված նավթը, 9 տոկ. գերակատարումով, իսկ Անդրկ. ԺՏԳԽ-ի արդյունաբերության մեջ՝ 16,2 տոկոսով (ըստ Ս. խմբակի 9 տոկոսով և ըստ Բ խմբակի 23,3 տոկոսով):

Այս թվերը ցույց են տալիս, որ մենք առաջին հնգամյա պլանի կատարման տեմպերում հետ չենք մնում ամբողջ Միությունից: Միաժամանակ այդ նույն թվերը ցույց են տալիս, որ մենք 4 տարում ներդրում ենք կապիտալ շինարարության մեջ շատ ավելի մեծ գումարներ, քան այդ գումարները, որոնք հատկացված էլին առաջին հնգամյակի համաձայն:

Առաջին հետևությունը, միանգամից ակնհայտ է՝ առաջին հնգամյա պլանը կատարելիս մենք զգալի չափով թերագնահատել ենք թերթե արդյունաբերության ներքին հնարավորությունները և յերկրորդ հետևությունը՝ յերեք դիմենք մյուս աղյուսակին, որը տալիս է ամբողջ արդյունաբերության ղրամանեղրդրամների թվերը, ներառյալ նավթը, ապա առանց վրամ է, որ մենք ընդամենը ներդրել ենք 945 մլլ. ռուբլի՝ 1·124 միլիոնի փոխարեն: Կապիտալ ծախսումների այս մեծ իջեցման մեջ գլխավոր դերը խաղում է նավթը, որի մեջ դրված է հնգամյակով նախագծված միջոցների 70 տոկոսը, իսկ նավթը մխճամանակ իր ստացման պլանը կատարել է յերկու ու կես տարում: Այդ ինչ է ցույց տալիս: Այդ հաստատում է այն, որ նավթը յեղել է և մնում է Անդրկովկասի արդյունաբերության ամենաառաջատար ճյուղը վոչ միայն իր նշանակությամբ, այլև իր աշխատանքի վորակով:

1932 թ. արդիլինպլանի թվերը ձեր առաջ կարողացվեցին ամենայն մանրամասնությամբ: Ինձ մնում է կանգ առնել մեր աշխատանքի, արդյունաբերության աշխատանքի այն կոնկրետ ինդիրների վրա, որոնք պայմանավորելու յեն այդ պլանի կատարումը և գերակատարումը: Ցես կարծում եմ, որ ինդիրների ամբողջ կոմպլեքսը կարելի յե հանգեցնել 4 հիմնական կետերի:

Ամենից առաջ՝ աշխատանքի կազմակերպությունը ձեռնարկություններում ամեն կերպ բարելավելու խնդիրը: Իսկ ինչ ինդիրներ են դրված մեր առաջ աշխատանքի կազմակերպումը արտադրության մեջ բարելավելու բնագավառում: Առաջին հիմնական լոզունգն է՝ վերջ տալ բոլորովին դիմապրկությանը և հավասարանքին առաջին իսկ յեռամյակում, չձգելով այդ ինդիրն ամբողջ տարում: Ամեն մի դազդյահի մոտ կանգնած բանվորը պետք է սկզբից մինչև վերջ պատասխանատու լինի դազդյահի համար. ամեն մի ձեռնարկության ղեկի մոտ կանգնած դիրեկտորը միանձնյա ղե-

կառավարության կարդով և հենվելով ամբողջ գործարանային յոռանկյունու գիտակից և կազմակերպված աշխատանքի վրա լծվին և մինչև վերջ պատասխանատու յե իր ձեռնարկության համար. ամեն մի ագրեգատի մոտ պետք և կանգնած լինի լրիվ իշխանությամբ ոժտված պատասխանատու բրիգադիրը:

Բրիգադիրի ու վարպետի տեխնիկական աշխատի գրագիտության և նրա տեխնիկական աշխատի կատարելագործում, վորպեսզի նա ղեկավար ոդակ դառնա բոլոր ագրեգատների, բոլոր զաղդյահների աշխատանքի կազմակերպման գործում, — ահա թե ինչն և լինելու մեր հիմնական հոդվածը 1932 թ.:

Հետևյալ մոմենտը վերաբերում և ղեկավարության վորակի և այն ամեն կերպ տեղերին մոտեցնելու հարցերին: Աշխատանքի վորակի բարելավումը և կատարման ստուգումը հիմնական կանոն և, վորով պարտավոր և ղեկավարվել ամեն մի բայլևիկ իր աշխատանքի մեջ: Այդ մասին մեզ ասել և ընկ. Լենինը:

Սակայն ինչպես կազմակերպել այդ կոնկրետ ղեկավարությունը, ինչպես անել, վոր այդ կոնկրետ ղեկավարությունը, վոր այդ հասկացողությունը չկեղծվի կոնվեյերի կարգով կարգադրություններ հաղորդելով: Այդ մասին մենք արդեն ունենք յերկու հիմնական և գլխավոր ցուցմունք: Ցնս նկատի ունեմ ՀԿ(բ)Կ կենտկոմի վորոշումը ԺՏԳՍ մանրացման մասին և ՀԿ(բ)Կ կենտկոմի վոչ պակաս պատմական վորոշումը կուսակցության Անդրյերկկոմի ղեկուցման առթիվ, վորոշում, վորը պայմանավորում և վորոշում և Անդրֆեդերացիայի մեջ մտնող հանրապետությունների միջև աշխատանքի ճիշտ բաշխման այնպիսի սխեմա, վորն ամեն կերպ ամրացնելով ֆեդերացիայի տնտեսական հզորությունը՝ միևնույն ժամանակ լիակատար հնարավորություն և տալիս հանրապետությունների ինքնուրույն և ինքնագործունյա առաջընթացին՝ իրենց տնտեսական շինարարության մեջ: Այդ պատմական յերկու վորոշումները տալիս են հիմնական քաղաքական ֆոն այդ սխեմային — կոնկրետ կերպով ղեկավարելու համար արդյունաբերությունը, վորը պետք և մենք իրագործենք:

Մի փոքր նահանջ: Ցնս ուզում եմ հրապարակական դարձնել մի պրոբլեմ, վորն Անդրկովկասում դեռևս կոնկրետ իրագործում չի գտել, բայց հավանորեն կլուծվի մոտակայում: Այդրկ. ԺՏԳՍ-ն մտադիր և Թիֆլիսի հանքա-մետաղագործական ինստիտուտին կից կազմակերպել հատուկ նպատակների ֆակուլտետ, Մոսկվայի որինակով:

Ինդիլների հետևյալ խումբը վերաբերում և վորակական ցուցանիշներին: 1932 թ. մեր կատարելիք աշխատանքի անկյունաքարը կազմելու չի արդյունաբերության աշխատանքի վորակական ցուցանիշներն — ամեն կերպ բարելավելու խնդիրը:

Մենում և դարձյալ մի քանի խոսք ասել կապիտալ շինարարության բնագավառում կատարվող աշխատանքի մասին:

1932 թ. մենք ավելի. քան յերբեվիցե կենտրոնացնելու յենք մեր բոլոր նյութական հնարավորությունները և մարդկային միջոցները սահմանափակ թվով հիմնական և գլխավորապես վրա, հակառակ և անհիմն կերպով չհնձացնելով կապիտալ շինարարության ֆրոնտը, այլ ընդարձակելով այն վորոշված հնարավորությունների չվով:

Նոր շինարարության հետ միաժամանակ մենք մեր աշխատանքի մեջ չնչտակի յենք դարձնելու աշխատել ըստ կատ ձեռնարկությունների գործի դնելու ժամանակաշրջանի կազմակերպումը: Գործի դրվելու պլանը պետք և հաշվել տասնորյակներով և որերով ամբողջ ճշտությամբ և պատասխանատվությամբ:

Նախագահ: — Խոսքը պատկանում և ընկ. Աբդրևովին:

Աբդիևով: — Ադրբեջանում գյուղատնտեսության բնագավառում առաջատար դեր և խաղում բամբակարուծությունը: Բամբակաբուծության վրա ցուցանիշների մասին այստեղ չատ քիչ և յեղել խոսում: Պետք և ասել, վոր այս բնագավառում հիմնական խոչնդոտը մեր ջրջանների քոչվորական չարժումն և հանդիսանում: Ինդիրն այն և, վոր քաղհանի և մշակման կամպանիան չի կատարվել և չի կարող կատարվել, քանի դեռ մեր բամբակային ջրջաններում գոյություն ունի քոչվորական չարժումը: Ինչպես կարող ենք վերջ տալ այդ քոչվորական չարժմանը: Այդ կարելի յե անել միայն մի ճանապարհով:

Բամբակաբուծության հիմնական ջրջաններում գլխավոր կարիքը խոնավության առաջքարար ջրի բացակայությունն և: Այդպիսի ջրի բացակայությունը այնքան և կազմալուծում բերում, վոր վերջինս ամեն ինչ թողնում և գնում և սարերը, վորտեղից պատրաստի մալարիայից:

Ինձ թվում և, վոր անհրաժեշտ և մեր հիմնական բամբակային ռայոններում խնդրու առաջքարար ջրի հաստատ մղվելիք պայքարը 1932 թ. դնել ուշադրության կենտրոնում:

Անհրաժեշտ և դարձյալ կանգ առնել խորհտնտեսական շինարարության վրա: Հայտնի փաստ և, վոր խորհտնտեսական շինարարությունը հիմնականում կատարվում և առանց դժվարությունների այն մասով, վոր նա լիովին մեքենայացված և, իսկ բամբակային տնտեսությունը առայժմ մեքենայացված չե: Այդ մեծ չարիք և, վորովհետև խորհտնտեսությունները տառապում են գլխավորապես բանուժի բացակայությունից, բանվորների համար չեն ստեղծվել համապատասխան պայմաններ: Բանվորական ուժի հոսունությունը և նրա պակասը այս տարի անկատար թողին խորհտնտեսության հատվածի պլանը: Մենք պետք և պահանջենք մեր համապատասխան տնտեսական մարմիններից, վոր այս տարի խորհտնտեսություններում խիստ ըստ ուշադրության հատկացվի բնակարանային շինարարության: Մեր մամուլը պետք և վերցնի խորհտնտեսությունների չեֆությունը, վորպեսզի հետևի և վերահսկողություն ունենա բնակարանային և կոմունալ շինարարության ընթացքի վրա խորհտնտեսություններում:

Ցնս կուզեյի մի քանի խոսք ասել, թե ինչպես են կազմվում գյուղատնտեսության պլանները: Գյուղատնտեսության պլանավորման գործում հիմնական չարիքը կայանում և նրանում, վոր պլանները կազմվում են կենտրոնում և համաչափ բոլորովին չեն համաձայնեցվում ջրջանների հետ: Պլան-

ների կազմելը պետք է սկսել ներքևից՝ շրջաններից:

Յես կուզեի դարձյալ մի քանի խոսք ասել Բագխորհրդի բնակչինարարության առթիվ: Բագխորհուրդը ծավալեց ահագին աննախընթաց բնակչինարարություն, բայց դժբախտաբար դրան զուգընթաց չափազանց հետ է մնում բաղանիքների շինարարությունը:

Նախագահ. Ընկերներ, վիճաբանությունները սպառված են:

Յերեկոյան մենք կլսենք ընկ. Մուսաբեկովի և Փերտամովի յեզրափակման խոսքը, իսկ հետո կանցնենք հետևյալ զեկուցումներին: Նիստը հայտարարում եմ վանկված:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

1932 թ. հունվարի 27-ի յերեկոյան

Նախագահում է ընկ. Ֆ. ՄԱՄՍՈՒՐՈՎԸՆ

Նախագահ. – *Անդրկենտրկոմի գերկրորդ նստաշրջանի հինգերորդ նիստը հայտարարում եմ բացված: Զեկուցումների առթիվ բացված վիճաբանությունները սպառված են: Այժմ մենք կլսենք ընկ. Մուսաբեկովի յեզրափակման խոսքը:*

Մուսաբեկով.—*Ընկերներ, վիճաբանությունների ընթացքում նստաշրջանի անդամների արտահայտած ակտիվությունը ցույց է տալիս, որ ԱՍՖՍՀ ժողովրդական տնտեսության 1932 թ. առաջիկ թվերի վերաբերյալ քննվող հարցը ակտուալ հարց է հանդիսանում, որի ճիշտ լուծման համար պատասխանատվություն է կրում Անդրկոմխանատվությունը և կրում Անդրկոմկասե գերագույն մարմնի ամեն մի անդամ, ամեն մի բանվոր, ամեն մի աշխատավոր:*

Ընթացիկ տարում ԱՍՖՍՀ ժողովրդական տնտեսության մեջ մենք ներդրում ենք մոտ մեկ միլիարդ ռուբլի, որը հարկավոր է ապահովել մաքսիմալ եֆեկտիվություն:

Անցնելով ծավալված վիճաբանություններին և 1932 թ. առաջիկ թվերի վերաբերյալ ընկերների առանձին յելույթներին, յես պետք է կանգ առնեմ առանձին բնորոշ յելույթների վրա:

Ամենից առաջ ճանապարհային վիճարկության մասին: Ընկերները Ցաչվիլին, Նովրուզովը և մյուսները միանգամայն արդարացի կերպով արձագանգում եյին այս կարևոր հարցը: Մեզ մոտ Անդրկովկասում ճանապարհների բացակայության պայմաններում անհրա ճանապարհների զարգացումը չափազանց թույլ տեմպով է կատարվում: Ուստի միանգամայն արդարացի եյին մի շարք ճառախոսների պահանջները՝ հատկացնել ժողովրդական տնտեսության այդ ճյուղին հատուկ ուշադրություն և ներդրել այդ գործի մեջ ավելի շատ միջոցներ և ուժեր:

Գուցե այդ գործի համար մենք խոշոր միջոցներ քիչ ենք հատկացրել, սակայն չի կարելի կողմնորոշվել միմիայն դրամահատակացումներով: Հարկավոր է նկատի ունենալ, որ դրամական հատկացումներից բացի, շատ բան կախված է մեր շրջանների, մեր դյուղխորհրդների նախաձեռնությունից, շատ բան կախված է նրանից, թե այդ գործին ինչ վերաբերմունք են ցույց տալու մեր տնտեսական մար-

մինները: Շատ բան կախված կլինի այն բանից, թե ինչպես է անցկացվում ճանապարհային աշխատյալպարհակը:

Ցես, որինակ, տեղեկութիւններ ունեմ, որ Ձիաթռւրայի շրջանը ճանապարհային պարհակի պլանը դերակատարել է 231 տոկոսով: Ադրբեջանում Աստարայի շրջանը նույնպես դերակատարել է պլանը 218 տոկոսով, Քելբաջինի շրջանը՝ 228 տոկոսով, Հայաստանում Շամշադինի ռայոնը՝ 144 տոկոսով: Այդ շրջանները առաջավոր և օրինակելի չեն ճանապարհների շինարարության գործում պետության ցույց տված իրենց ոգնութիւնը: Սակայն կան մի շարք շրջաններ, որոնք այդ գործում բոլորովին վոչ մի նախաձեռնում չեն դրսեվորել: Ցեթե շրջանային աշխատավորները և դյուղխորհուրդները բավարար ուշադրութիւն չհատկացնեն ճանապարհային շինարարութիւնը, յեթե նրանք սկսեն սպասել, որ նրանց մոտ դարս չեն ինժեներները, տեխնիկները և լայն գործի նման կհոսեն պետական միջոցները, յեթե նրանք պետք է կարծեն, որ միայն այդ ժամանակ նրանց մոտ կհակվի ճանապարհային շինարարութիւնը,—այդպիսի պայմաններում մենք հեռու չենք գնա:

Ճանապարհային շինարարութեան բացառիկ նշանակութեան պատճառով այդ գործում հարկավոր է դրսեվորել մեծ նախաձեռնութիւն և մոբիլիզացիա այն յենթարկել շրջանների ուժերը աշխատյալպարհակի և ճանապարհային շինարարութեան համար:

Ցերկրորդ հարցը, որի մասին նրա ատշրջանում շատ եյին խոսում՝ այդ մեր կապն է:

Ընկեր Թաղիյեվը միանգամայն արդարացի կերպով կշտամբեց փոխուղղեներին, մասնավորապես ինձ, որ մենք մեր զեկուցումներում կամոք չատանք կապի վրա:

Կապի հարցերը՝ հեռախոսացումը, հեռախոսային ցանցի հետագա ընդարձակումը դյուղխորհուրդներում, ռադիոֆիկացիան, փոստը, հեռագիրը և այլն՝ իսկապես շատ կարևոր հարցեր են մեր պայմաններում:

Կապի գծով կատարվող դրամահատկացումները Անդրկովկասում հասնում են մոտավորապես 12 և կես միլ. ռուբլու: Յենթադրվում է դյուղխորհուրդների հեռախոսացումը բանակային շրջաններում իրագործել 100 տոկոսով, իսկ մյուս շրջաններում 50 տոկոսով: Գյուղերում յենթադրվում է դնել մոտ 30·000 ռադիոկետ:

Հարկավոր եմ համարում ասել, որ մեր ժողկոմատի վարչութեան աշխատանքը վերակառուցման և բարելավման կարիք ունի: Կապի ժողկոմատը առանց վերակառուցելու իր աշխատանքը չի կարող հասնել այն տեմպերին, որ մենք պահպանում ենք տնտեսական շինարարութեան բնագավառում: Այդ հարցը հարկավոր է վերանայել վերից վար, վերակառուցել ժողկոմատը, դարձնել այն ավելի ճկուն և տեղական շրջանային կազմակերպութիւնների հետ որպանապես կապված:

Անմուհետև ընկ. Սարգսյանը Հայաստանից, ընկ. Ճելիճեն Անդրկ. ԺՏԳԽ-ից և ընկ. Կաղանը Հարավ-Ոսեթիայից մատնանշեցին, որ Անդրը կովկասում բավարար չափով չեն զարգացվում յերկրաբանական աշխատանքները, որոնք անշուշտ խիստ կարևոր նշանակութիւն ունեն մեր Սիդերիֆիկացիայի թափղված հարստութիւնները դրսեվորելու համար:

Միանգամայն ճիշտ կերպով նշվեց դրամահատկացումների պակասը յերկրաբանական – հետախուզական աշխատանքների համար: Անցյալ տարիների համեմատութեամբ այդ տեսակետից մենք ունենք վորոշ տեղաշարժեր և տալիս ենք մի քիչ ավելի դրամահատուցումներ, բայց իհարկե այդ էլ բավական չե: Այդ տեսակետից 1932 թ. համար հարկավոր է ուղղումներ մտցնել և այդպիսով մեծացնել դրամահատկացումը յերկրաբանական հետախուզական աշխատանքների համար:

Միանգամայն արդարացի յեն ընկ. Ախունդովի, Սուլթանովի ցուցմունքները, վորոնք չոչափեցին խորհրդային շինարարութեան և մեր ստորին պատրաստման կադրերի նախապատրաստման հարցերը: Այդ տեսակետից մենք վորոշ բան վերանայելու և ուղղելու յենք վոչ միայն ստորին մասնաճյուղերի վերաբերմամբ, այլ և մեր զեկավար կենտրոնական կոմիտասիսների գծով: Մեզ մոտ յերբեմն կենդանի կապ չկա կենտրոնական կոմիտասիսների մեջև, շրջանների և դյուղխորհրդների հետ: Հաճախ բացակայում է կոնկրետ ներտավորված զեկավարութիւնը շրջանների նկատմամբ: Նկատվում է կուսակցութեան և կառավարութեան վորոշումների կատարումները ստուգելու գործի թուլութիւնը: Մեր առանձին ժողկոմատները պետք է վերակառուցվեն, յերբեմն անմիջապես դարձնելով զեպի շրջանները, զեպի դյուղխորհուրդ: Հարկավոր է հրաժարվել շրջաբերականն զեկավարութիւնից:

Այստեղ շատ կարևոր հարց է կադրերի նախապատրաստումը: Այս բնագավառում մենք ունենք բավարարիչ թերութիւններ: Վերցնենք թեկուզ Ադրբեջանը: Այնտեղ բավական զգալի տոկոս են կազմում դյուղխորհուրդների այն նախագահները, վորոնք բոլորովին անգրագետ են: Համաձայնվեցեք, որ այժմ, յերբ մենք մի տարուց հետո ձեռնարկում ենք յերկրորդ հնգամյակի իրագործման՝ մեզ համար միանգամայն անկարելի յե ունենալ դյուղխորհուրդների բոլորովին անգրագետ նախագահներ: Ահա թե ինչու հարկավոր է ընդհուպ զբաղվել կադրերի նախապատրաստման հարցով:

Ընկերներ Գոգոբերիձեն, Մամեդովը և մյուսները մեր ուշադրութիւնը սրեցին քարածխային արդյունաբերութեան վրա և մասնավորում եյին, որ Տկիբչելի քարածուխը կգործածվի մետալուրգիական գործարանների կարիքները բավարարելու համար, հետևաբար՝ արդյունաբերութեան մյուս ճյուղերը նրանից կմնան առանց քարածխի: Հարկավոր է արագացնել նոր քարածխային շրջանների հետախուզումը: Ցես լսեցի ամենայնի բաժանում եմ այդ ընկերների ցուցմունքները, որ հարկավոր է գտնել նոր քարածխային շրջաններ, վորոնք կկարողանային ապահովել ԱԱՖՍՀ բուռն զարգացման ապահովել ԱԱՖՍՀ բուռն կերպով աճող արդյունաբերութիւնը: Քարածխի հանքատեղեր կան Վրաստանում՝ Ախալցխայի շրջանում և Հայաստանում Ջաջուրի շրջանում: Այդ շրջանները նախնական ավյալների համաձայն քարածխով բավական հարուստ են:

Մենք պետք է անենք ամենը, ինչ հնարավոր է, վորպեսզի կանոնավորենք յերկրաբանական–հետախուզական աշխատանքները, ճշտութիւնով վորոշենք քարածխային հանքատեղերի

ծավալը և ձեռնարկենք նրանց մշակմանը:

Ահա այն առանձին հարցերը, որոնց վրա կես կուզեի հրավիրել ձեր ուշադրությունը:

Այժմ մի քանի խոսք, թե ինչն է գլխավորը 1932 թ. սոուդիչ թվերի պլանի կատարման և անցկացման գործում:

Առաջինը՝ ընկ. Ստալինի վեց ցուցումների անշեղ կենսագործումը. աշխատանքի բոլոր պրոցեսների մեքենայացումը մանավանդ շինարարության մեջ: «Մեր աշխատանքի տեմպերի և արտադրության ծավալների ժամանակ,—ասում է ընկ. Ստալինը, — յենթադրել, թե կարելի է աշխատել առանց մեքենայացման, այդ նշանակում է հուսա ունենալ, որը ծովը կարելի է ցամաքացնել գդալով»:

Այնուհետև՝ աշխատանքի արտադրողական բարձրացումը, ինքնարժեքի իջեցումը և բաց թողնվող արտադրանքի վորակի մաքսիմալ բարելավումը: Այս հարցերը ակտուալ, մարտական կարևորագույն հարցեր են, և մենք նրանց համար պետք է կռվենք ամբողջ վճռականությամբ:

Գյուղատնտեսության բնագավառում մեր ամենագլխավոր ինդիրը կայանում է կոլտնտեսությունների կազմակերպչական — անտեսական ամրացման մեջ, կոլտնտեսական մասսաների սոցիալիստական վերադաստիարակության մեջ, Անդրկովկասի պայմաններում մանավանդ կանանց վերադաստիարակման մեջ: Այնուհետև տեխնիկական մշակույթների՝ բամբակի ու թեյի հետագա ընդարձակումը և բերքատվության մեծացումը:

Կուլտուրական հեղափոխության բնագավառում մեր առաջ դրված է անդրազիտությունը 1932 թ. Հայաստանում և Վրաստանում լրիվ լուծարքի յենթարկելու խնդիրը, ձեռք առնելով նախապատրաստական միջոցները, վորպեսզի Աղրբեջանում անդրազիտությունը լրիվ լուծարքի յենթարկվի 1933 թ.:

Թևերը վեր քաշած՝ մենք պետք է բայշևիկորեն սկսենք Անդրկովկասի ժողովրդական տնտեսության 1932 թ. սոուդիչ թվերի կատարումը, վորովհետև այդ թվերի հաջող կատարումը մեզ հնարավորություն կտա ավարտելով ձեռնարկելու նախապատրաստական միջոցառումներին՝ յերկրորդ հնգամյակի նախագծումները կատարելու համար: (Ծափահարություններ):

Նախագահ.— Առաջարկության համար խոսքը պատկանում է ընկ. Սուլթանովին:

Սուլթանով: — Ընկ. Մուսաբեկովի ղեկուցման և ընկ. Փիրումովի համաղեկույցի առթիվ բանաձև մշակելու համար առաջարկում եմ ընտրել հանձնաժողով 26 հոգուց: Հանձնաժողովի կազմը հետևյալն է. ընկ. ընկ. Մուսաբեկով, Փիրումով, Շախտախտինսկի, Թարխնիշվիլի, Տեր-Գաբրիելյան, Մդիվանի, Սարիբեկով, Տորոշելձե, Միրկադիրովա, Ցերետյան, Ադամիրով, Լորթքիփանիձե, Կազաև, Վելիբեկով, Ճաչվիլի, Ղլոնտի, Թաղիև Իբրահիմ, Գիորգաձե Ա., Կարաչուխի Իվան (Բորժոմ), Բալախնին (Բագդադհուդրդ), Ռուխաձե Դավիթ, Բեգիա (Փոթի), Ռուխաձե (Երծոթխունեթի), Իլյուխին, Սուլթանով Համիդ, Մալանիա (Սղնախի ռայոն):

Նախագահ: — Կա՞ն արդյոք վորևե լրացումներ:

Տեղից: Աբրեջանի չրջանային կոոպերատիվ կազմակերպություններից, ռայգործկոմներից վոչ վոք չկա: Առաջարկում եմ Ադա-Զադե Մուխթարին (Զանգելանի չրջան): (Ընդունվում է):

Տեղից: Հայաստանի Աղրարայի չորջանից էլ Մամեդովին:

Նախագահ: — Հանձնաժողովի կազմը ընդունվում է այդ լրացումով:

Սուլթանով: — Հրավիրելու յի ընկ. Մուսաբեկովը:

Նախագահ: — Անցնում ենք որակարգի յերկրորդ հարցին՝ Անդրկովկասի միասնական պետական բյուջեին:

Զեկուցման համար խոսքը պատկանում է ԱՍՖՍՀ Ֆինժողկոմ ընկ. Յեղեմյանին:

Յերեմյան: — Վերջերս ավարտված ԱՍՀ Միության կենսագործկոմի նստաշրջանը հաստատեց միասնական պետբյուջեն, և նրա կազմի մեջ՝ ԱՍՖՍՀ բյուջեն: Հետևանքում՝ ԱՍՀՄ բյուջեն աճից 34,1 % և կազմում է 27 մի լիարդ 400 միլ. ռուբլու դումար:

Անդրկովկասում 1932 թ. բյուջեն նույնպես զգալապես աճում է հնգամյա պլանի նախագծումներին յերկու անգամ: Ձեր հաստատմանը ներկայացվող բյուջեն տեղական բյուջեների սոուդիչ թվերի հետ միասին կազմում է 176,2 միլ. ռուբլի:

Վորպեսզի բնորոշենք, թե ժողովրդական տնտեսության առանձին ամեն նավճառական ճյուղերի և մշակույթների մեջ մեր բյուջեի ներդրումներն իսկապես ինչպես են աճում, կարելի է բերել մի քանի որինակներ: Վերջին 4 տարում ԱՍՖՍՀ պետական բյուջեի ընդհանուր ծավալն աճեց 114 միլիոնից մինչև 317 միլ., ամենը քան 2 1/2 անգամ:

Ժողովրդական տնտեսության ֆինանսավորման համար կատարվող դրամահատկացումները վերջին չորս տարում ուժեղացել են 52 միլիոնից մինչև 105,4 միլ. ռուբլի: Մեր ծախսերի այդ մեծացումն բուռ ամենայնի տալիս է սոցիալ-կուլտուրական շինարարության լայն ծավալումը:

Բերված թվերը ցույց են տալիս, վոր ֆինանսական սիստեմը և նրա հիմնական լծակը՝ բյուջեն, կուսակցության և իշխանության դիրեկտիվների համապատասխան, վճռական են միջոցների մաքսիմալ մոբիլիզացիայի խնդիրը տնտեսական և կուլտուրական շինարարության հնգամյա պլանը չորս տարում կատարելու համար, իսկ առանձին տեղամասերում և ավելի կարճ ժամկետում: Այդպիսով՝ այն ժամանակ, յերբ Արևմուտքում կապիտալիստական տնտեսության առաջ և բերում ֆինանսների կատաստրոֆային կազմալուծում, մենք մոտ պլանային տնտեսության անհնարինի աճումը տալիս և միաժամանակ մեր ֆինանսական հնարավորությունների հսկայական աճում և ապահովում և այն դժվարությունների վերացումը, վոր մեզ մոտ կային:

1932 թ. պետական բյուջեի և տեղական բյուջեի սոուդիչ թվերը կատարելու գլխավոր վճռական գործոն հանդիսացավ ՀԿ(բ)Կ կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումը Անդրկենտկոմի և հանրապետությունների կոմկուսների կենտկոմների դեկուցումների առթիվ:

Այնուհետև՝ մենք հաշվի չենք առել գոյություն ունեցող կարևորագույն կազմակերպչական միջոցառումները. առաջին՝ բյուջեն կառուցված է Միության և դաշնակից հանրապետությունների բյուջետային իրավունքների վերաբերյալ նոր որենքների հիման վրա, վո-

րը դատապարտների սխատմը վոխարինում է ընդհանուրության հարկի հատկացումներով:

Անդրկովկասում ընդհանուրության հարկի հատկացումները սահմանվում են համամիութենական ձեռնարկությունների 40 տոկոսի ծավալով, իսկ հանրապետական և տեղական նշանակության ձեռնարկությունների՝ 60 տոկոսի ծավալով. բացի այդ, այդ տրենքով սահմանվում են հատուկ հատկացումներ համամիութենական նշանակության ամենախոշոր ձեռնարկությունների զարգացման հաշվին, վորոնք մշակում են առանձին դաշնակից հանրապետությունների բնական հարստությունների ամենակարևոր տեսակները (ԱՍՖՍՀ-ում՝ նավթը և բամբակը):

Հանրայնացված հատվածի կուտակումները խթանելու և բյուջետային կարգապահության ամրացնելու նպատակով պետբյուջեյի եղբի և մուտքի մասը կատարվել է տնտեսահաշվառքի լծակների մաքսիմալ ոգտագործման դիրքավորումով:

Այնուհետև՝ հաշվի են առնվել տրն տեսական մարմինների և բյուջեյի վոխհարաբերությունների մեջ կատարված վոխհարաբերությունները, նվազեցնելով տնտեսական կազմակերպությունների ու ձեռնարկությունների շահույթից գանձվող տոկոսները և շահույթի մեծ մասը, իբրև կուտակումներ թողնելով նույն ձեռնարկությունների մեջ: Հաշվի են առնվել նաև վարկային ռեֆերմի տվդողանները, վորոնք լուծարքի ենթարկեցին ավտոմատ վարկավորումը: Բյուջեյի մեջ իրենց արտահայտությունը գտան այն էական վոխհարաբերությունները, վորոնք տեղի ունեցան պետական և տեղական բյուջենների միջև մուտքերը և ելքերը բաշխելու ժամանակ: Իրրև տրանսֆերտային եկամուտներ թողնվել են գյուղատնտեսական հարկը և պետական վոխառություններից կատարվող հատկացումները: Բացի այդ, մտցվել են հատկացումներ կոլտնտեսություններից գյուղում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նրան, վոր Հկ(բ)Կ կենտկոմի հունիսյան պլենումի վորոշումների համապատասխան, 1932 թ. բյուջեն ապահովում է կոմունալ տնտեսության մեջ ստեղծված չեզոք սալդոն հանրապետությունների ծավալով, այսինքն՝ կոմունալ տնտեսության բոլոր եկամուտների ոգտագործումն իր սեփական կարիքների համար, առանց վորևե բացառության:

Այնուհետև անհրաժեշտ է նստաչքը ջանի ուշադրություն առանձնապես սրել այն հանգամանքի վրա, վոր մեզ մոտ միայն 358 գյուղխորհրդներում կան ինքնուրույն բյուջեներ, մինչդեռ մենք սկսած ենք ունենանք 2·268 գյուղխորհրդներում:

Մուտքի և ելքի գումարը կազմում է 317,4 մլ. ռուբլի և նախորդ տարվա համեմատությամբ աճում է 32,2 տոկ.: Պետ. բյուջեյի զարգացումը կատարվում է նրա դերը ժողովրդական եկամուտի վերաբաշխման մեջ ուժեղացնելու ցծով: Այդ զարգացման տեմպերը ժողովրդական տնտեսության ամեն մյուս ցուցանիշներից առաջ են անցնում: Բնորոշ է, վոր այն ժամանակ, երբ արդյունաբերության ընդհանուր արտադրանքն աճում է 126,1 տոկոսով, ապրանքաշրջանառությունն աճում է 145,1 տոկոսով, պետբյուջեն աճում է 77,7 տոկոսով: Այդ միանգամայն հասկանալի է, քա-

նի վոր մեր Միությունը բյուջեյի ծավալը վորոշելիս լինել և յեւտաճող շրջանները և հանրապետությունները զարգացնելու սկզբունքից:

Պետբյուջեյի եկամուտի զլխավոր աղբյուրներ հանդիսանում են հանրայնացված տնտեսության վճարումները, այն է՝ եկամուտների 317 մլ. ռուբլու ընդհանուր գումարից հանրայնացված հատվածի բաժինն ընկնում է 224 մլ. կամ ամբողջ բյուջեյի ավելի քան յերկու յերրորդը, և միայն 93 մլ. կամ 29,3 տոկոսը հավաքվում է հարկերից և վոխառություններն աշխատավորների մեջ զետեղելու միջոցով:

Այդպիսով՝ ԱՍՖՍՀ պետբյուջեյի եկամուտների այս կազմությունը հնգամյակի վճռական տարվա Ֆինանսական ծրագրի կատարումն անմիջականորեն հանրայնացված տնտեսության քանակական և վորակական առաջադրությունների կատարման տեմպից կախված զրության մեջ է դնում և լրիվ արտացոլում է պետբյուջեյի հարմարեցումը տնտեսահաշվառքի գործադրման և հանրայնացված տնտեսության վրա ուղղված վերահսկողության խնդիրներին:

Հետաքրքիր է, թե հարկման ծանրությունն ինչպես է ընկնում կուլակների վրա: Մեզնում 1930 թ. գյուղատնտեսության մեջ 48,2 տոկոսը բոլորովին ազատ էին գյուղատնտեսական հարկից: Հարկվածներից 50,4 տոկոսը կազմում էին միջակները, իսկ 1,4 տոկ.՝ կուլակները: Կուլակների այդ թիվը մասնակցում էր հարկին 55,3 տոկոսի ծավալով: Մեր հավաքած գյուղատնտեսական հարկի ընդհանուր գումարից կուլակները 1930 թ. վճարեցին կեսից ավելին: Կուլակների թիվը 1931 թ. իջավ մինչև 0,9 տոկոսը: Այս 0,9 տոկոսը վճարում է հարկի ընդհանուր գումարի 35,6 տոկոսը:

Այս թվերը վկայում են այն մասին, վոր մենք իրագործում ենք դասակարգային դիծը հարկային գործում, հասնում ենք կապիտալիզմի վերջին արմատները գյուղում և ամեն կերպ ապահովում ենք համատարած կոլեկտիվացման սլրոցեսին գյուղում: Անդրկովկասի գյուղատնտեսության հասույթաբերությունը բարձրանում է:

Հանրայնացված և մասնավոր հատվածների հասույթաբերությունը մինչև 1931 թ. կազմում էր 372 մլ. ռուբլի, իսկ 1932 թ. նախագծվում է 468 մլ. ռուբ.:

Անցյալ տարվա որինակով ընթացիկ տարում ևս նախագծվում է ներգրավել բնակչության միջոցները միանվագ նպատակային կուլտուրական հարկի միջոցով քաղաքում և գյուղում՝ 42,4 մլ. ռուբլու գումարի: Մենք հավատացած ենք, վոր այս տարի ևս կուլտուրական հարկի գանձման բնագավառում մենք կունենանք նույնպիսի աջողություն, ինչպես անցյալ տարի: Աշխատավորների լայն խավերի կողմից մեր յերկրի սոցիալիստական շինարարության ցույց տրվող մասնակցության զլխավոր ձևերից մեկը բնակչության միջոցների ներգրավումն է մասսայական վոխառությունների միջոցով, վորոնք 1932 թ. Անդրկովկասում նախագծված են 105·900 հազար ռուբլու ծավալով:

Այս տարի մենք ունենք յեւթի հեռանկայ բաշխումը. ժողովրդական տրն տնտեսության համար նախագծվում է 105,8 մլ. ռուբլի, սոցիալ կուլտուրական միջոցառումների համար՝ 92,1

մլ., կառավարելու գործի համար՝ 27,1, ֆոնդերի համար՝ 4,5 միլիոն, ոստյապահովագրության հատկացում՝ 5 մլ. և տեղական բյուջեին հանձնվող միջոցները՝ 82,9 միլիոն:

Գյուղատնտեսության բյուջեն կառուցելիս հաշվի չեն առնվել այն ահռելի խնդիրները, որոնք դրվում են դյուղատնտեսության առաջ 1932 թ.:

Այս ահռելի խնդիրներին լրիվ համապատասխան կերպով ներդրումների ծավալը գյուղատնտեսության մեջ ԱՍՖՍՀ պետբյուջեի գծով կազմում է 55 մլ. 910 հազ. ռ., այդ թվում խորհրդային տնտեսություններին — 22,4 մլ. ռուբ., կոլտնտեսություններին — 7,1 մլ., պետմիջոցառումներին — 7 մլ. ջրանտեսությանը — 15,3 մլ., դիզատրակտորային կայաններին — 4 մլ. ռ.:

Նախընթաց տարվա հետ համեմատելով, խորհրդային շինարարության մեջ ներդրումների ծավալը աճել է ավելի 44 տոկ., կոլտնտեսական շինարարության մեջ — 87 տոկ., պետական ձեռնարկությունների մեջ — 34 տոկ., ջրային տնտեսության մեջ — 87 տոկ.:

Ջրային շինարարության համար ներդրումներ են նախատեսված 15 մլ. 300 հազ. ռուբ. չափով:

Ճանապարհային շինարարության համար ԱՍՖՍՀ 1932 թ. պետբյուջեով ներդրվում է 7 մլ. 200 հազ. ռուբ.

Այս բնագավառում ևս անցյալ տարվա համեմատությամբ մենք ունենք հատկացումների զգալի աճ:

Լուսավորության համար 1932 թ. հատկացումներն արտահայտվում են 72,1 մլ. ռուբլի դրամարտով, հաշվի առնելով գյուղական տնտեսության գծով հատկացվող 4 մլ. ռուբ.:

Լուսավորության համար նախատեսված ծախքերում այս տարի առաջին անգամ արված են հատկացումներ այն պիոների կարիքների համար, որոնք անցյալ տարի չէին ապահովված: Ամենից առաջ, կոլտնտեսական կադրեր պատրաստելու հարցն է, որի համար այս տարի մենք բյուջեում ծրագրում ենք մեկ ու կես մլ. ռուբ.: Այս տարի լիովին ապահովում են հատուկ հատկացումներ ասպիրանտուրա պատրաստելու, հեռակա կրթության համար և այլն: Կադրերի համար հատկացրած 72 մլ. ռուբ. ընդհանուր գումարից լուսավորության գծով ուղղվում է 59 մլ. 772 հազար, իսկ այլ ճեռնարկում՝ նրի համար՝ գիտության, արվեստի, քաղաքական կրթության, մամուլի, սոց. կրթության համար — մնացած գումարը:

Առողջապահության վերաբերյալ ծախքերը նույնպես զգալի չափերով աճում են: Այս տարի նախատեսվում է ընդարձակել ցանցը, մանավանդ հոգեկան հիվանդների հիվանդանոցների նկատմամբ, նմանապես դեղարյքի և հիվանդների անդի նորմանեը բարձրացնելու համար, ինչպես և բժշկական աշխատավորների աշխատավարձն ուժեղացնելու համար, մալյարիայի համաճարակների և սոցիալական հիվանդությունների դեմ պայքարի հատկացումներն ուժեղացնելու:

Առողջապահության համար հատկացվող ծախքերի մեջ խոշորագույն տեղ և բռնում կուրորտային շինարարությունը: Այս շինարարության համար պետբյուջեից մենք հատկացնում ենք 5 մլ. ռուբլի:

Այս հինգ միլիոնից 4.420 հազ. ռուբլին մենք տալիս ենք Վրաստանի տերի տորիայի վրա գտնվող կուրորտներին:

Մնացած գումարը բաժանվում է այսպես՝ 320 հազ. — Ադրբեջանին և 260 հազ. Հայաստանին: Պետբյուջեից տեղական բյուջեին տրվում է 82.800 հազար ռուբ., որից գյուղատնտեսական հարկը կազմում է 100 տոկ. — 20.800 հազար ռուբ., կուլտուրական տուրքը կազմում է գյուղում 100 տոկ. 18.400 հազար ռուբ., գյուղական սեկտորում անց կացնվող վոխտուրքի մասնահանումները — 18.600 հազ. և վերջապես շրջանտուրքի հարկից տեղական բյուջեի օգտին մասնահանումները կազմում են 25.100 հազ. ռուբ.:

Այս տարի, ֆեդերացիայի սուբյեկտների ընթացքում առաջին անգամ պետբյուջեից տեղական բյուջեի օգտին հատկացվող մասնահանումները ավելացրել ենք միութենական մարմինների կողմից նշանակած գումարի դիմաց: Շրջանտուրքի հարկից ԱՍՖՍՀ հանրապետության տեղական բյուջեների օգտին կատարվող մասնահանումները Միության կԳԿ ընդունել է 20.700 հազար ռուբ., մենք հասցրել ենք այս գումարը 25.100 հազար ռուբ., Այդ ցույց է տալիս, որ մեզ մոտ բեկում է առաջացել տեղական բյուջեի նկատմամբ, որ մենք կրճատներս զարգրել ենք զեպի տեղական բյուջեն:

Տեղական բյուջեի կոնտրոլային թվերի սմբողջ յեկամտային մասը վորոշվում է 226.211 հազար ռուբլի, իսկ ծախքի մասը — 251.284.700 ռուբ.: Այսպես, ուրեմն, տեղական բյուջեի դեֆիցիտը հավասար է 25.073.600 ռուբ.: ԱՍՖՍՀ կազմի մեջ մտնող հանրապետություններում կոնտրոլային թվերն արտահայտվել են հետևյալ գումարներով՝ Ադրբեջանում ծախքերը վորոշված են 116.199.200 ռուբ., յեկամուտները — 111.392 հազ. ռուբ., շրջանտուրքից դանձվող հարկը 4.807.200 ռուբ., Հայաստանում ծախքերը վորոշված են 30.406.500 ռուբ., յեկամուտները — 24.806.000, շրջանտուրքից դանձվող հարկը, 5.600.500 ռուբ.: Վրաստանում ծախքերը հաշված են 104.679.000 ռուբ., յեկամուտները — 90.013.100 ռուբ., շրջանտուրքից դանձվող հարկը — 14.665.900 ռուբ.:

Տեղական բյուջեի յեկամուտներն ապահովում են հետևյալ հատկացումները՝ Անդրկովկասի ժողովրդական անտեսության ֆինանսավորումը — 64,3 մլ. ռուբ., սոցիալ-կուլտուրական ծախքերը — 135,9 մլ. ռուբ., կառավարչական ծախքերը — 21,7 մլ. ռուբ. և բոլոր այլ ծախքերը — 29,3 մլ. ռուբ.: Այստեղից դուք տեսնում եք, որ և տեղական բյուջեի հիմնական մասը հատկացվում է սոցիալ-կուլտուրական միջոցառումներին:

Մենք մեծ աջողություն ունենք կուսակցության դիրեկտիվի կատարման գործում և ժողովրդական ուսուցչի աշխատավարձը բարձրացնելու բնագավառում: Ադրբեջանում ժողովրդական ուսուցչի միջին աշխատավարձը հասցնում ենք 91 ռուբ. ամիսը, Հայաստանում և Վրաստանում — մինչև 89 ռուբ.: Միջնակարգ դպրոցի մանկավարժների աշխատավարձը հասցրը ված է մինչև 130 ռուբ.՝ ամիսը:

Առողջապահության համար ծախքերը ծրագրվում են 33 մլ. ռուբ. չափով: Նրանք ապահովում են բժշկական կազմի աշխատավարձի բարձրացումը 21 տոկ.: Հիվանդանոցային

մահիճների ցանցը վրաստանում և Հայաստանում ավելանում է 10 տոկոսով, Ադրբեջանում (առանց Բագվի)—40 տոկոսով, գլխավորապես բամբակաբուծական շրջաններում և կրեկինախմացման ստորաններում, իսկ Բագվի համար — 20 տոկ.:

Բացի այդ, Ադրբեջանում ծրագրված է 3 մլ. ռուբ. հատկացումներ՝ բժշկական կետեր կազմակերպելու համար:

Կոմունալ տնտեսության նկատմամբ կոնտրոլային թվերում մենք հետևում ենք նեյտրալ սպղոյի սկզբունքին և ընթացիկ տարում առաջին անգամ (այս ևս պետք է հաշվել մեր նվաճումների մեջ) կոմունալ տնտեսությունից հանումներ չենք կատարում և ամբողջ կուտակումը, կոմունալ տնտեսության բոլոր ճկամուտները թողնում ենք հանրապետությունների կոմունալ տնտեսության մեջ:

Ցնս ուզում եմ նշել հանրապետությունների բյուջենների աճը: Ադրբեջանի բյուջեն աճում է 50 տոկոսով, Հայաստանի բյուջեն — 53,5 և Վրաստանի բյուջեն առանց կուրորտների — 56,4 տոկոսով:

Ցնս ուզում եմ երկու խոսքով կանգ առնել այն հարցի վրա, որ կոնտրոլային թվերի հետևանքով, որոնք կազմված են ի նկատի առնելով հնդամյակը չորս տարում կատարելը, 1932 թ. ժողովրդական ճկամուտը չափազանց որիենտիր ձևով կազմելու է 2·242 մլ. ռ., 1926–27 թ. անփոփոխ գներով, 1931 թ. 1·623 մլ. ռ., գիմաց, այնինքն՝ աճ է տալիս 32,4 տոկոսով:

Այս գեպքում սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ աճում է մինչև 86,4 տոկոս 1931 թ. 72 տոկոսի և 1930 թ. 66 տոկոսի դիմաց, միաժամանակ մասնավոր սեկտորի տեսակարար կշիռն անդադար իջնում է: Մենք պետք է այնպես մոբիլիզացիայի ենթարկենք մասսաներին, որ անպատմանի կատարենք և գերակատարենք պլանը, հակառակ դեպքում մեր բյուջեյի, մեր ֆինպլանի յեվմամատային մասն ապահովված չի լինիլ և այս հանգամանքի հետևանքով չենք կարող իրացնել ծախքի մասը մեր ժողովրդա-տնտեսական պլանով ծրագրած սահմաններում:

Հիմնական նպատակն այն է, որ ծախքերը համապատասխան գարձնենք յեկամուտներին: Գլխավորն հիմնական ցուցմունքն այն մասին, որ մենք պետք է ֆինանսական քաղաքականության բնագավառում ևս ստանանք արմատ հաշվառքի պարզ դիծը, այդ ցուցումը մենք կարող ենք իրագործել մոբիլիզացիայի յենթարկելով ամբողջ բանվոր դասակարգը, բոլոր մեր աշխատավորներին՝ պայքարելու համար արդ-ֆինպլանի իրագործման համար: Այս բնագավառում առանձնապես պետք է ընդգծել համայնացրած սեկտորի յեկամուտների նշանակությունը, որ կազմում է ամբողջ բյուջեյի առնվազն 75 տոկոսը: Մենք անց ենք կացրել մի շարք կարևոր բարեկարգումներ՝ տնտեսական մարմինների համար պահել ենք չրջանառության միջոցներ, վերակազմել ենք վարկավորման սիստեմը, այս բնագավառում վերջ ենք տվել ավտոմատիզմին, մուծել ենք տնտհաշվառք:

Շահույթների հանումների բնագավառում կատարելագործել ենք աշխատանքը, թողնելով չափ հումքի հիմնական մասսան տնտեսարմինների տրամադրության տակ, նրանց սեփական կուտակումն ավելացնելու և աշխատանքը բարելավելու, բնակարանային շինարարության համար հատկացումներն ավելացնելու և բանվորների կենցաղը բարելավելու համար և այլն:

Պարզ է, որ բոլոր այս միջոցառումները պետք է ոչնչն մնչ, որ ծրագրած հավելուրդ ժողովենք անհրաժեշտ միջոցները պլանն իրագործելու համար: Դրա համար անհրաժեշտ է, որ այսպես կոչված շրջանառության վերջնվող հարկը ապահովենք ամբողջապես և ժամանակին, որ մենք այստեղ չարատևություններ անելիքի թուլության, նեխված ապատամարտության և թույլ վերաբերմունք դեպի մեր տնտեսական մարմիններն այն պահին, երբ այդ գումարները գանվում են ձեռնարկությունների մոտ:

Ի՞նչ եղինք անում անցյալ տարի գերատեսչությունների և հանրապետությունների տնտեսական կազմակերպությունների նկատմամբ անկախ այն հանգամանքից, թե ինչպես եղին նրանք անց կացնում միջոցների մոբիլիզացիան, ի՞նչպես եղին նրանք իրագործում յեկամտային մասը, ի՞նչպես եղին նրանք ժողովում և ինչպե՞ս եղին գրել շրջանառությունից դանձվող հարկի հանման վերաբերյալ գործ: Մենք բարեխղճաբար, ամենամյա, Մոսկվայից համապատասխան ղեկավարության ստանալուց հետո, բաշխում եղինք ստացած գումարները բոլոր գերատեսչությունների և հանրապետությունների մեջ: Դա վոչ մի գեպքում չի կարող ուղիղ քաղաքական նշանակություն համարվել: Սա այն ամենամասնիկն է, որին գեմ է դեղել մեր կուսակցությունը: Այս ամենամասին մենք պետք է մեր աշխատանքի ընթացքում վճռական կերպով արմատախիլ անենք: Պետք է հսկողություն լինի միջոցների կանոնավոր ոգտագործման վրա: Մենք անցյալ տարի ունեցանք հսկայական ճեղքվածք գլխավոր բյուջետական շինարարության գծով: Մենք տասնյակ վիատներ ունենք, ինչպես գլխավոր շինարարության համար հատկացրած միջոցները ծախսվել են այլ կարիքների համար: Կարելի է բերել բազմաթիվ վիատներ, յերբ ուսուցիչների աշխատավարձը ծախսվում եր բոլորովին այլ կարիքների—հավաքների, ախոռների վրա և այլն: Ցեվ այս տեղի չի ունեցել այն պատճառով, որ տեղերում գլխավորություն և ունեցել բյուջեյի գիմազրկություն: Մենք պետք է վճռական պայքար մղենք բյուջեյի գիմազրկության գեմ: Ֆինանսական վերահսկողության լուծարքը խանգեց և գժվարացրեց վերահսկողության մեր աշխատանքը: ԲԳՏ, որին հանձնած եր այս գործը, գրժբախտարար, չկարողացավ տանել այնպես, ինչպես հարկն է:

Հետո, երբև մեր աշխատանքի մեծ և կարևոր պահատությունն մենք պետք է նշենք հաշվետու գործի թույլ վիճակը: Այլ դիրեկտիվների թվում մեզ տրված եր հիմնական գիրեկտիվ — կանոնավոր կերպով հաշվել: Բայց, գժբախտաբար, մենք գեռ ևս կանոնավոր և ճիշտ կերպով չենք հաշվում, մեզ մոտ հաշվետվությունը չափազանց կաղում է: Կաղում է ամեն ոլորտում և գերատեսչությունների ու կազմակերպությունների կողմից ժամանակին բանանոներ ներկայացնելու բնագավառում և ֆինանսական մարմինների կողմից տվյալները ժամանա-

կին ներկայացնելու քննադատում: Ժամանակին չի ներկայացվում հաշվետվություն թե՝ չեկամտային, թե ծախքի կատարման մասին: Դա մեր աշխատանքի խոչտանգումն պահանջելու է:

Ես կատարելապես միանում եմ ընկ. Թադևևի կարծիքին, որ նա հայտնեց կադրերի հարցի վերաբերյալ: Կադրերի վերաբերյալ հարցը մեզ մոտ բարեհաջող վիճակի մեջ չէ, որովհետև նկատվում է մեծ հոսունություն: Այս բնագավառում պետք է մղել վճռական պայքար, ամրացնել հիմնական աշխատանքը:

Մի քանիների մոբիլիզացիայի քննադատման պետրանկի արտադրված վերջ նական տվյալներով, պլանը մենք իրագործել ենք 95 տոկոսով, իսկ ֆինժողկոմների տվյալներով մենք գերակատարել ենք Անդրկոմկատի պլանը: Չդուշչ լինելու համար չես ասում եմ, որ մեզ մոտ պլանն իրագործված է 95 տոկոսով, և այս կատարվել է ամենածանր պայմաններում:

Հետո, վերադասությունների քննադատում: Մենք այս տարի արդադարձնք կուսակցության և բանվոր դասակարգի վստահությունը, մենք կարողացանք ցույց տալ բայշևիկյան աշխատանքի օրինակ: Այս աջողությունները մենք ձեռք բերինք միայն այն պատճառով, որ կարողացանք առաջին հերթին մոբիլիզացիայի ենթարկել բոլոր մեր հասարակայնությանը, բոլոր մեր կազմակերպությունների ուշադրությունը այս խնդրի լուծման շուրջը:

Մեր աշխատանքի խոչտանգումն պահանջություններից մեկն էլ այն է, որ դեպքեր են եղել, երբ մասնավոր անձնավոր լրիվ չեն հարկի ենթարկված, մանավանդ այդ տեղի են ունենում խոշոր քաղաքներում. կան նուրբ վիճաներ, որ դատական անկատորում լրիվ կենթարկվեն հայտնաբերված կուլակային անտեսությունները: Մյուս կողմից մենք ունենք և «ձախլիկ» թեքումներ:

Բայց ամենից դլխավորն այն է, որ մինչև այժմ մենք ապատիկներ ունենք կուլակության վրա և դա անհանդուրժելի է: Մենք կուլակների վրա միշ պատրիկ չպետք է ունենանք: Այս բոլ նպատակահարմար պետք է անհնար լինենք:

Այստեղից, հիմնականում, բղխում են այն խնդիրները, որ դրված են մեր առաջ: Առաջինը, ամեն կերպ պայքարել պարհպվածքի ամրապնդման համար, վերահսկողության բարձրացնդման համար, կուսակոմների բազայի ընդարձակման համար, կերդրող, և՛ ավելի աշխատանք տանել ֆինանսային կարգապահության անց կացնելու, այս կարգապահությունն արմատացնելու և ժամանակին հաշվետվություն ներկայացնելու համար:

Մեր առաջ խնդիր է դրված լրիվ մեր բոլոր ուժը, դնել ֆինմարմինների աշխատանքն այնպես, որ նրանք դառնան մասսայական մարմիններ, որ նրանք կարողանան դլխավորել բանվորական ու կոլտնտ. մասսաների ենտուզիազմը, կազմակերպելով մեր աշխատավոր մասսաների սոցիալիստական ենտուզիազմը, իրագործել բոլոր այն ծանր խնդիրները, որ դրված են մեր առաջ թե՛ յեկամտների կատարման բնագավառում, թե ապելիատական ուղղությամբ կանոնավոր ծախսման բնագավառում:

Նախագահ: — Հայտարարում եմ նիստը փակված:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ VI ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ

1932 թ. հունվարի 28-ի առավոտյան

Նախագահում է ընկ. Ա. ԱՆԱՆՅԱՆԸ:

Նախագահ: — Հայտարարում եմ Անդրկենտգործկոմի յերկրորդ Նստաշրջանի վեցերորդ նիստը բացված: Պետական բյուջեի և 1932 թ. միասնական ֆինանսատնտեսական պլանի մասին համառոտ զեկուցման խոսքը տրվում է ընկ. Շահվերդովին (ծանոթագրություններ):

Շահվերդովա.—Նստաշրջանին ուղղությանը ներկայացրած 1932 թ. պետբյուջեն կատարելապես համապատասխանում է Անդրկոմկատի տնտեսական վիճակագրության հետագա պարզացման խնդիրներին:

Բյուջեն կազմված է հաշվի առնելով այն լուրջ սխալները, որ եղել են հրաժեշտությունը, որ թույլ եղին տրված Անդրկոմկատում և նշած են Հ(բ)Կ ԿԿ 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ: Անդրֆեդերացիայի և ավելի ամրապնդման, հանրապետությունների ավելի ինքնագործունեության վերապահելու, գյուղատնտեսության համապատասխան սեկտորի ամրապնդման և հետագա զարդացման հարցերն ամբողջապես նախատեսված են 1932 թ. բյուջեն կազմելիս:

Ցեթե դուք դիտեք լինեք հանրապետությունների բյուջեի աճը, կտեսնեք, որ այն ժամանակ, երբ ամբողջ ԱՍՖՍՀ 1932 թ. բյուջեն աճում է 31,1 տոկ., ԱՍՍՀ բյուջեի աճի տեմպերը — 47,7 տոկ., ՀՍՍՀ — 49,5, ՎՍՍՀ — 56,4 տոկոս — առանց կուրորտների: Բյուջետային հանձնաժողովը, քննելով Անդֆինժողկոմատի կողմից ներկայացրած 1932 թ. պետբյուջեի նախագիծը և տեղական բյուջեների կոնտրոլային թվերը, դունել և ներկայացնում է Անդրկենտգործկոմի Նստաշրջանի հաստատությանը հետևյալ լրացումներով և փոփոխություններով: Պահանջնել ՀՍՍՀ դանաղան եկամուտների գումարը 1 միլիոն ռուբ.-ամիլյոններով նույն գումարով չրջանառության դանձվող հարկի մասնահանումները: ԱՍՍՀ — ավելացնել պետբյուջեի հատկացում՝ ներք 500 հազար ռուբ., և տեղական բյուջեի հատկացումները — 687·200 ռուբ.: ՎՍՍՀ — ավելացնել պետբյուջեի հատկացումները 400 հազ. ռուբ. Բյուջետային հանձնաժողովը խնդրում է Նստաշրջանից այս փոփոխությունները հաստատել ԱՍՖՍՀ և նրա կազմի մեջ մտնող հանրապետությունների պետբյուջեն: Միութենական բյուջեն 317 մլ. 373 հազ. ռուբ., ֆեդերատիվ բյուջեն — 124 մլ. 64 հազ. ռ.,

ԱՄԽՀ պետբյուջեն 76 մլն. 338 հազ. ռուբ., Հայաստանի պետբյուջեն — 33.736.500 ռուբ. և Վրաստանի պետբյուջեն — 83.183.500 ռուբ.:

